
ՎԱՉԳԵՆ ՍԱՀՐԵԿՅԱՆ

ԱՆՔՈՒՆ ՓՇԵՐՆԵՐ



ՎԱՉԳԵՆ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

891.99
Ա-49

Ջնջված է 1981 թ.

ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐՆԵՐ

Ա 26780
Ա 109.61

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ


ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ 1949

Կազմը Հ. Շահվ. Շահվերդի

Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

В. АМИРБЕКЯН
БЕССОНЫЕ НОЧИ
(На армянском языке)
Армгиз. Ереван 1949 г.



1·

Փոքրիկ քաղաքն երկաթուղային կայարանում ասեղ դցելու տեղ չկար: Հավաքվել էին ընտրկոչիկները, որոնց ընկերակցել էին նրանց հարազատները: Բանակ մեկնողներն ու նրանց մերձավորները կառամատույցում չէին տեղավորվել: Նրանք լցվել էին կայարանամերձ այգում, խոնվել բարձրաստիճան բարդիների տակ: Նրանցից ոչ հեռու, այգու միջով ձգվող փողոցում, կանգնած էին բեռնատար և մարդատար ավտոներ, որոնք պետերից բերել էին բանակ մեկնողներին և նրանց ճանապարհողներին: Այդտեղ գետնեջրյա բարդիների մեկի ստվերակ բնից կապված էր մի ամեհի հովազակ, որը մերթ ընդ մերթ իր գեղեցիկ դլուխն ու ոսկեցոլ բաշը ցնցելով՝ վրնջում էր և պայտած սմբակներով դոփում դալար կանաչով պատած գետինը: Արագ հայտնվեց մի կին, որը նժույգը տեսնելով կանդ առավ ու հարցրեց·

— Բա ո՞ւր են մերոնք, սա մեր կոլխոզի Փոթորիկն է:

Ակնթարթաբար նա մերձակա պլուզից ոտքով էր եկել և չտապելուց քրտինքը ողողել էր նրա արևատ դեմքը: Նրան ընդառաջ եկավ մի ծերունի և իր դողդոջ ձեռքը պարզելով՝ ցույց տվեց մի խումբ երիտասարդների, որոնք սրախոսում էին, կատակում: Նրանցից մեկը, որն ավելի պարթևանջ էր, առնական, իր հուժկու ձեռքերը շարժելով ասաց.

— Տանից դուրս ենք եկել, մինչև բեռլին կգնանք:

—Կամա՛ց,—հեգնանքով ժպտաց խորամանկ աչքերով մի երիտասարդ և ապա լուրջ տեսք ընդունելով՝ մեղմաձայն հարցրեց.—Սլասի Ջան, սավառնակով կգնա՞ս, թե՞ դնացքով:

— Այդ ուժեղ ոտքերը, որ տրակտորիստ Սլասին ունի, նրա լինչլ՞ն են պետք սավառնակն ու դնացքը,—հանդիստ տոնով նկատեց մեկ ուրիշը, որ հանդարտ ծխում էր:

Քրտնամխած կինը մոտեցավ նրանց և Սլասուն տեսնելուն պես գրեթե ճչացող, սուր ձայնով կարկլատի նման վրա տվեց.

— Ճիշտ է ասած թե՝ եղբայրն ասել է քույր չունեմ, քույրն ասել է՝ եղբայր ունեմ: Բա լա՛վ, այդպես բան կլինի՞...

— Մեկ էլ ո՞վ պետք է գար սարը, Սալվի Ջան,—կատակով պատասխանեց Սլասին, մոտենալով քրոջը:

— Պա՛հ, չիմացողն էլ կկարծի, թե Ինձռաշատի կոլխոզի սարը շատ է հեռու: Մեկ ժամվա ճամփա է՞...

— Սանամեր Ջան, Սլասին ուզում է շուտ բեռլին հասնել, կուրծքը շքանշաններով զարդարի, որ սերած վարդիթերն էլ նազ չանի:

Վարդիթերը կլոր ու խոշոր աչքերը թարթելով ամբողջովին չառաջդունեց։

— Ա՛յ տղա, ի՞նչ ես լեզվիդ կապերն արձակելել,—մեջ մտավ համակրելի արտաքինով, կարճահասակ մի երիտասարդ,—ի՞նչ կատակի ժամանակ ես գտել, ֆաշիստները հիմա մեր քաղաքները, գյուղերն ավերելով առաջ են գալիս, դու այստեղ լեզուդ ես պնդացրի նման տկտկացնում...

— Ինչքան ուզում են թող առաջ գան։ Նրանցից ոչ մեկն էլ ետ չի գառնա։ Ռուսաստանը նրա համար է Ռուսաստան, որ նրա հողի վրա ոտ դնող թշնամուն վրկուԹյուն չկա։

— Ճի՛շտ է,—խոսողի ասածները հաստատեց Աղասին և խմբից բաժանվելով՝ քրոջը թևանցուկ արեց։

Երիտասարդների խմբից մի քիչ հեռու, մի բարդու տակ հավաքվել էին մի խումբ տղամարդիկ ու կանայք։ Լայն ճակատով, ալեխառն մազերով, եղջյուրե ակնոցով մի մարդ լրագիր էր կարդում։ Ամենքը լարված, սրտատրոփ որսում էին յուրաքանչյուր բառ։ Այս ու այն տեղից մարդիկ չտապում էին դեպի լրագիր կարդացողը, կիսաշշուկ հարցեր տալիս ու լսելով՝ իրենք էլ լսում կարդացողին։ Ինճորաշատցի մի սատուկ արցունքը սրբելով բարձրաձայն անիծում էր Հիտլերին։

Նրա մոտ կանգնած մի ջղուտ երիտասարդ ջանում էր անիծող սատակին հանգստացնել, բայց սատակը չարունակում էր անեծքի տարափը։

Հունիսյան կիզիչ արևը լուրթ գենիթից վառում էր թեքվել դեպի մայրմուտը։ Նրա ճառագայթները բեկվելով բարդիների, հինավուրց էնարինների և գանգուր ակացիաների սաղարթների մեջ՝ բոցավառվում էին ոսկեղեն ցոլքերով։ Տոթ

էր: Շրջակայքն ամռանը քանի գնում ավելանում էր: Մի շոգեքարշ գիծն էր վախտամ, նրա աուբյոններից սթռնված անիծած պատավը լուծ և էլ ոլացին նայելով ասաց.

— Ձլինի՞ թե գնում եք:

Խռնված բազմության մեջ ձայներ լսվեցին.

— Լևո՛նը, Լևո՛նը եկավ:

— Ո՞վ է Լևոնը:

— Ի՞նչ է, չգիտե՞ք: Կամենքամի խության շրջկոմի քարտուղարը:

— Սպիտ ոլա է:

— Որ էդքան գովազ եք, թող գնա Հիսեքլի պռնչը ցրիվ տա, ինչո՞ւ է մնում այստեղ,—ամենից բարձր հնչեց անիծող պատավի չոր ու խիստ ձայնը:

Մի քանիսն անուշադրեր նայեցին նրան:

Այդ միջոցին պատավին մոտեցավ Աղասին և ժպտալով ասաց.

—Տատի՛, հո բոլորը միտռամից չէ՞ն գնա: Նրա հետքին էլ կգա: Լևոնի մնալը մեզ օգուտ է:

— Է՛, դե որ օգուտ է, թող մնա,—հառաչեց պատավը, բերանն ամուր փակեց ու մայրական սիրտը հայացքով նայեց Լևոնին, որը ոլջույն տալով ծանոթանալին ու ընկերանալին՝ առաջ էր գնում:

Նա կանգ առավ: Շուռով նրան շրջապատեցին բանակ մեկնող երիտասարդները: Լևոնն այդ օրը հասել էր գինեվաճառի ամառոցին բլուզ, կառույց գիտողական դպրոցի, երկարաճիտ կոշիկներ: Նրա դեմքի, լայնարիր ու ան աչքերի արտահայտությունից երևում էր, որ ներքին խոր հուզում է ապրում: Պատերազմի լուրը լսելուն պես Լևոնը նեղվացավել էր գինվոմիսարիատ և խնդրել, որ իրեն ուղարկեն բանակ: Գինվոմը կոտրակոնատես մերժել էր նրա դիմումը: Նա այդտեղից հեռացել էր վշտացած և չտապել պատշրջկոմի քար-

տուզար Մանթաշյանի մոտ: Լևոնը գիտեր, որ Մանթաշյանն իրեն շատ է սիրում և հույս ուներ, որ իր ցանկությունը կկատարվի:

— Ինդրում եմ, ընկեր Մանթաշյան,—դիմել էր նա շրջկոմի քարտուղարին,—մինչև որ ինձ էլ ուղարկեն բանակ: Ձիավոմը մեկնեց իմ դիմումը: Ինձ համար խիստ ծանր է այս օրերին մնալ այստեղ:

— Ձիավոմը ճիշտ է վարվել,—ծանրությամբ Լևոնի ականջին հնչել էին Մանթաշյանի խոսքերը:— Առայժմ ձեր այստեղ լինելն ավելի անհրաժեշտ է քան դնալը:

Այնուհետև, երբան էլ թախանձել էր Լևոնը, Մանթաշյանն անդրդվելի էր մնացել: Այժմ նա մի նեղքին նախանձով էր նայում բանակ մեկնողներին:

Ամենից առաջ նրան դիմեց Ազատին:

— Ընկեր Վահանյան, դժվարն այն է, որ հասնենք ռազմաճակատ: Հավատացած եղեք, որ կոմերիտականի անունը բարձր կպահենք:

— Հիմիկվանից դուխտ մի դավիր, կռիվ չես տեսել, դրա համար մեծ-մեծ ես խոսում,—ասաց Լիսոն և դարձավ Լևոնին:—Ճիշտ չե՞մ ասում, ընկեր Վահանյան: Կռվողը, հերոսը, չի սիրում խոսել:

Ազատն տաքացավ, իր հոդի ուսերը շարժելով պատասխանեց Լիսոյին.

— Հենց հերոսը նա է, որ խոսելու տեղը լավ խոսի, կռվելու տեղն էլ լավ կռվի:

Լևոնի մոայլ դեմքին մի ժպիտ բացվեց: Նա առանձնակի գորովով էր նայում իր առաջ կանգնած կոմերիտականներին, որոնց հետ բավական ժամանակ աշխատել ու պայքարել էր: Եվ ահա պատերազմը նրանց բաժանում է միմյանցից: Նա

արծվաբիւր աչքերով մերթ նայեց Լիպոյին, մերթ Աղասուն իր ձեռքերը քնքշանքով դրեց նրանց ուսերին և շատ հանդիստ ձայնով ասաց։

— Ես չեմ կասկածում, տղերք ջան, որ դուք և ձեր ընկերները, ինչպես որ հերոսաբար աշխատել եք գործարաններում, սոցիալիստական դաշտերում, այնպես էլ կկռվեք թշնամու դեմ։ Կոմերիտականն իրավունք չունի վատ կռվելու։ Շատ եմ ցավում, որ ես էլ ձեզ հետ չեմ...Բայց միևնույն է, երբ էլ լինի կգամ...

— Ի՞նչ է,—նորից տաքացավ Աղասին,—որ բոլորս գնանք, բա էլ ո՞վ պիտի մնա թիկունքում, առանց թիկունքի ռազմաճակատ չկա՛։

— Ճի՛շտ է։

— Բա՛վո, տրակտորիստ Աղասի։

— Այսօր մխտքդ պայծառացել է։

— Բա ի՞նչ կարծեցիր, սա էլ մի նոր Աղասի է, մի Սբովյան է պետք, որ սրա քաջագործությունները նկարագրի,—վրա բերեց մեկ ուրիշը։

— Դուք քաջություն արեք, Սբովյաններ կգտնվեն,—եղան Աղասու խոսքերը։

2.

Մինչ նրանք խոսում էին, կատակում, ամբոխի մեջից հնչեց մի ուժգին ձայն.

— Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն...

Խոսողը զինակոմն էր։ Մի պահ աղմուկը դադարեց։ Բոլորը իրենց տեղերում արձանացած սպասում էին։

— Բանակ մեկնողները թող անցնեն այս կողմը,—նորից լսվեց նույն ձայնը և մարդկանց զըլ-

խավերևում բարձրացավ զինկոմի ձեռքը՝ ցույց տալով այն տեղը, ուր պետք է կանգնեին զորակոչիկները։ Այդ ժամանակ դրեթե վազելով կոմիսարին մոտեցավ մի լեյտենանտ, զգաստ կանգնեց, այջ ձեռքը դեպի քունքը նետելով պատվի առավ և զեկուցեց.

— Ընկեր մայոր, գալիս է ընկեր Մանթաշյանը...

Նոնված բազմությունը երկփեղկվելով՝ ճանապարհ տվեց պարտիզկոմի քարտուղար Մանթաշյանին։ Դեպի նա էին ուղղված բոլորի հայացքները։ Զինկոմն ընդառաջ գնաց Մանթաշյանին, որի նիհար դեմքի վրա դրոշմվել էր անքնություն, սև ու խիտ հոնքերի տակ մոայլվել էին խոշոր աչքերը։

— Ինչպե՞ս են գնում գործերը,—հարցրեց Մանթաշյանը, սեղմելով զինկոմի ձեռքը։

— Լավ է, ամեն ինչ կարգին,—պատասխանեց զինկոմը և իր սովորության համաձայն ինքնաբերաբար երկու ձեռքով ձգեց բլուզի փեշերը, ջղաձգորեն ցնցվեց նրա այջ ուսը։ Այդ ներվային ցնցումը տակավին մնացել էր քաղաքացիական կռիվների ժամանակ ստացած վերքերից։

— Բացականե՞ր կան։

— Չկա՛ն, ընկեր Մանթաշյան,—նորից ուսը ցնցելով պատասխանեց զինկոմը։

— Ավտոմեքենաները բավարարեցի՞ն։

— Այո՛, ընկեր Մանթաշյան։

— Գնացքը ե՞րբ կմեկնի։

— Մի ժամից հետո։

Մանթաշյանը ձեռքը ձգեց, որից քշմվեց կապույտ պիջակի թևքը և նայեց դաստակի ժամացույցին։

Դիմացի բարձր սարերի ուրվագծերը հետզհե-

ան հավելում էին խավարի մեջ: Մթնաշաղը կա-մաց-կամաց լիզնում էր: Վրա հասնող մթնշաղն ամբից հալիլ նշմարվում էր մերկ լեռան կատարին վեր խոյացող հինավուրց կաղնին, որին թվում էր, թե անտառը որպես հաղթանակի դրոշ էր պարզել հողմերի և փոթորիկների դեմ: Մանթաշյանը բարձրացավ շոգեքարշի ետևանի վրա, լայնեղը, ամրակազմ պլատիկը հանեց գլխից, ալեհառն մազերը ետ սվեց և հուզմունքից փոքր ինչ դողդողացող ձայնով գլխից սրտեն չարքերով կանդնած գինակոչիկներին.

— Պատերազմն ընդհատեց մեր խաղաղ կյանքը: Ոխտագրուժ թշնամին մինչև ատամները զինված նորանոր գիշերյաններ է նետում ռազմաճակատ: Ոչ մի զոհն առաջ կանդ. չառնելով՝ նա տղում է մեր նվիրական հայրենիքի խորքը:

Կատաղատեսյամ, նրա շրջապատում արդեն դադարել էր ամեն մի շարժում: Բոլորը լարված, ընչազուրկ ունկնդրում էին խոսողին: Մանթաշյանը հետզհետե բարձրացնում էր ձայնը և թվում էր, թե նա էր ամեն բառն արձակում է հզոր հայրենիքի ուժով:

— ...Մեզ հետ են աշխարհի ազատասեր ժողովուրդները: Մեզ պատերազմ է հրահրում Սատանան: Թշնամին կջախջախվի, հաղթանակը մերը կլինի: Հանուն այդ հաղթանակի ոչինչ չպետք է խնայենք:

Այդ միջոցին նրա աչքն ընկավ արտասվող և անիծող պառավին, որն այնպես լարված և անքթիթ նայում էր խոսողին: Պառավի խորշոմախիտ դեմքին կրկել էր մի խոշոր թմբուկ: Ու, չգիտես ինչու, նրան թվաց, որ այս խոսքերն ուղղված էին իրեն:

Մանթաշյանի վերջին խոսքերը ուղեկցեցին

բուռն ծախսատրամադրություններին սպասվող մեծ, որն սկսվեց բանակ մեկնողներից և տպա անցավ հասարակությանը:

Ծանր ու հառաչ դողդոջեց զանգը: Մանչաշյանն լռեց չոքեցավից: Լսվեցին հրաժեշտի, կնոջ համբույրի ձայներ, ոտնաձայն, մխիթարական խոսքեր, հեկեկանքներ: Բանակ մեկնողներն իրենց հարազատներից վերցնելով պարագաները՝ բարձրացան վագոնները: Լռոնն ակամա եղավ պատասխանել և իր միակ որդու հրաժեշտին: Պատասխանը, որքան ուժ ուներ, իր ամբողջ ձեռքերով գրկել էր տղային և հուզված ու դողդող ձայնով ասում էր.

— Գնա՛, իմ անուշ բալա, Լիպո Ջան, գնա՛, թե պատռվով չդառնաս, ավածս կաթը թող քեզ... Ես աչքերդ համբուրեմ, որ անվախ նայես թշնամուն, էդ թշնամին մեր պապենական թշնամին է: Էդ հներն էին, որ արնախում թյուրքերի հետ հորդ պատնեցին:

Երեսատարը մոր խանդակաթ գրկից պատռվելով որդեց համբույրից թրջված աչքերն ու այտերը և դռնապ ձայնով ասաց.

— Մայրի՛կ, մայրի՛կ, դու անհոգ կաց, թող հայրդ անգամ քո ավածկաթին ինձ հարամ լինի, թե որ ես իմ թիկունքը ցույց տամ թշնամուն...

— Բարձրացիր Լիպո Ջան, դանդը հնչեց,— ձայնեց Սլաման և տոնելով Լևոնին՝ նրան պըրկելով ասաց.—Դե՛, ես գնացի: Հույս ունեմ որ...

— Բարի ճանապարհ և բարի հաղթանակ, Սլաման,—ամուր համբուրելով նրան ասաց Լևոնը:

Սլաման գրկեց, համբուրեց քրոջը՝ Սալխան, «երած տղկան՝ Վարդիթերին և ասաց.

— Ես չգիտեմ, թե իմ տրտիտրը որ մեկիդ կհանձնեն... բայց ես ոչ հանձնում եմ ձեզ,—և բարձրացավ վագոն:

Այս անգամ զանգը հնչեց ավելի տաղնապալից և կայարանի աղմուկն էլ ավելի սաստկացավ։ Չիզ ու երկար դողդողաց չոգեքարշի սուլոցը, որին հաջորդեցին շարժվող վագոնների մետաղյա ձայները և դանդաղ գլորվեցին նրանց անիվները։ Օդում շարժվում էին տասնյակ ու հարյուրավոր ձեռքեր, թաշկինակներ։ Դեպի շարժվող վագոն–ներն էին նետվում ծաղիկներ, ծաղկեվոնջեր։

— Գնաք բարո՛վ։

— Բարի վերադա՛րձ։

— Հաղթանակով կգաք։

— Մա՛հ գերմանական զավթիչներին։

Էիպոն նայեց շուրջը, կարծես որոնում էր մե–կին, որ իր մորը հանձնի նրան և ահա գտավ նրան. դա Լևոնն էր։

— Ընկեր Վահանյան, մորս հանձնում եմ ձեզ։

Այսքանը հազիվ կարողացավ ասել և արցունքոտ վազելով՝ բռնեց վագոնի աստիճանների ձողից, ցատկեց և սև, խոշոր աչքերով նայեց պառավ մորը, որի թևից ամուր բռնել էր Լևոնը։ Վերջին անգամ լսվեց չոգեքարշի սուլոցը, ապա գնացքն ա–րագացրեց իր ընթացքը, մտավ անտառապատ ձո–րը, իսկ կառամատույցում հավաքվածները դեռ երկար ժամանակ անշարժ կանգնած նայում էին դեպի անտառն իրենց, որտեղից որպես վերջին հրաժեշտ բարձրանում էր թանձր ծուխը։

Պառավը դեռ ուշքի չէր եկել, երբ նրան մո–տեցավ Մանթաշյանը, բռնեց նրա թևից և դրո–վալի ձայնով ասաց.

— Մայրի՛կ, մայրի՛կ, արտասվելիը, ոչինչ, տղաղ կգա, անպայման կգա՛,—և բռնելով մի ձեռ–քից նա, մյուսից Լևոնը, պառավին տարան դեպի ավտոմեքենան։

Երկրորդ օրն էր, որ լուսաքողարկում էր։ Լևոնի մոտով անցավ մի ապրանքատար ավտո, որը կրում էր կապույտ լամպ։ Կապույտ լույսի դողդոջ փունջն ընկավ նրա դեմքին և արագ անցավ։ Ջիչ հեռվից լսվեց մխիթիոնների սուլիչի սուր ձայնը, որին հաջորդեցին այս խոսքերը.

— Լույսե՛րը, հե՛յ, լույսը, չո՛ւտ։

Լևոնի սիրտը ճմլվեց։ Դրանից երեք օր առաջ նույն փողոցով, նույն պահին ժողովից վերադառնում էր տուն։ Լուսամուտներից, պատշգամբներից, էլևկտրասյուներից շողում էին էլեկտրական լամպերը և ասֆալտապատ փողոցի նորակերտ, բազմահարկ շենքերը ողողվել էին լուսաթափիշով։ Իսկ այժմ խավար է։ Ոչ մի տեղից լույսի շող չի երևում։ Եկավ պատերազմը և խավար բերեց։

Այդ միջոցին նրա ականջին հասան բարձրախոսի բառերը. «Ուշադրությո՛ւն, խոսում է Մոսկվան»։ Նա կանգ առավ, մթության մեջ սկսեց որոնել ռադիո բարձրախոսը։ Տուֆաշեն գրադարանի անկենդան խոռոչների նման լուսամուտներից մեկի գոգին դրված ռադիոբարձրախոսը նորից հնչեց. «Ուշադրությո՛ւն, խոսում է Մոսկվան»։ Լևոնն անհուն թեթևություն զգաց։ Եթե խոսում է Մոսկվան, նշանակում է խոսում է ազատությունը, աղնվությունը, հաղթանակը։ Այո՛, Մոսկվան ամեն ինչ է։ Եվ նրա աչքերում այնպիսի կայծեր շողացին, թվում էր, թե այդ խավար պահերին կարող էին ամբողջ աշխարհը լուսավորել։

Մոսկվա՛...Ո՛ր մայրական գրկումն է անցկացրել Լևոնն իր ուսանողական երջանիկ, երազային տարինները։ Դու նվիրական քաղաք, ուսանողի համար եղել ես մի թովչական աշխարհ և

յուսավառել նրա մխացը: Հեքիաթային քաղաք, առաջին անգամ Լևոնի սրտում դու ես բորբոքել ապնիլ սիրո կրակը: Մոսկիա՛, Մոսկվա՛, քոնը ապնիլ ու բարձր զգայմունքների և խոհերի լուսեղեն օրրան...

Իսկ ի՞նչ է անում Լյուդմիլան: Չէ՞ որ մի քանի օր առաջ նա գրում էր, թե Կոնեղլատրիայի արտասմունքները վերջանալուն պես գալու է ամառանոց: «Անցյալ տարի ամառը շատ հաճույքով հանդատացա ձեզ մոտ,—գրում էր նա,—ինչքա՜ն լավ էր: Առաջ Անդրիվոլիսաը ես պիտի մնայի Պուշկինի, Տոլստոյի, Լերմոնտովի գրածներից, իսկ անցյալ տարի իմ աչքով տեսա և՛ ծաղկեփնջի նման բարմերտոնը, ուրախ Թբիլիսին, և՛ արևաշող Երևանը, և՛ ձեր ամառանոցային փոքրիկ կանաչազարդ քաղաքը»:

Պատերազմն սկսվեց, իսկ Լյուդմիլան...Ել առաջվան գործողությունների մասին տրված ամփոփագրից հետո ռադիոյից հնչում է «Մոսկվայի» երաժշտությունը:

— Իմ Լյուդմիլա...Ո՞ւր ես հիմա, Լյուդմիլա,—շշնջաց Լևոնը:

Ձեռքով չինելով լայն ճակատը՝ նա լուսում էր երաժշտությունը և մտովին տպրում էր այն օրերը, երբ Զայկովսկու անվան կոնսերվատորիայի դահլիճներից մեկում Լյուդմիլան դաշնամուրով նվագեց Զայկովսկու անմահ գործերից: Այն ժամանակ նա ուսանող էր: Լյուդմիլայի երաժշտության առաջին դասերը գործան սիրտ առաջին երգանքները: Լևոնը վերհիշեց Զայկովսկու անվան կոնսերվատորիան, Լյուդմիլայի հետ զբոսանքները Մոսկվա գետի ափին, երբնց սիրտ նվիրական խոսքերը:

Լևոնը քայլերն ուղղեց դեպի դործարան: Եր-

կար ձգվող ծառուղին լուսավորված էր վառարան-
ների բոսորագույն ցոլքերով: Լուսաքողարկման
համար այստեղ դեռ հարմար միջոցներ չէին դրել,
և անատոմի վեճին բարձրացող հսկայական էր-
պուանները լույսի տակ սիրտարար իշխում էին ամ-
բողջ շրջապատին: Ծառուղին քաղաքից թեքվում
էր ալ և ձգվում մինչև դրծարան: Գործարանի
ընդարձակ ցեխերը ձուլվում են անատոմին և մա-
սամբ խառնվում փարթամ ծառերի տալերների
հետ: Գիշերն ավելի դժվար է կռահել, թե որտեղ
են վերջանում ծառերը և որտեղ են սկսվում էլեկ-
ևարի կորպուսները: Տարիներ առաջ, երբ հըն-
դամյա պատռել անատոմ վեճերին պրոֆեսոր առա-
ջին քլունդները և դործարանի հիմքը դրվեց, քա-
ղաքում ոմանք դուշակեցին, թե սկսվում է անատո-
մի ոչնչացումը: Բայց քաղաքի կոմերիտմիությու-
նը վերցրեց ինչպես դործարանի կառուցման, այն-
պես էլ ծառատնկման չեֆությունը: Այս ծառու-
ղին, որ ամենասկզբնական վայրն է քաղաքում, կո-
մերիտականների նախաձեռնությամբ առեղծվեց:
Նրանց աշխատանքով անատոմն ավելի ցած լծակ,
ծառերով ծածկվեցին բացատներն ու կիրճերը: Նոր
շինարարության հետ սկսվեց նոր անատոմաստա-
տում: Այդ օրերին շինարարական տեղամասերից
ոչ շատ հետու տնկեցին առաջին մատղաշ եղևնինե-
րը, որոնք այժմ վեր են բարձրացել և իրենց կա-
նաչավուն կատարներով մի նոր շուք ու դեղեց-
կություն տվել շրջապատին: Եղևնիների այդ
փունջը, որ դնալով ընդարձակվում է, մեծանում,
կոչվում է «Կոմերիտմիության անտառ»: Վառա-
րանների լուսյաների ներքո նոր անատոմի տալերները
կորպուսների տալերների հետ տարածվում են հե-
ռու:

— Կա՛նգ առ, ո՞վ ես,—հնչեց մի բասե ձայն:

Լևոնը մոտեցավ հերթապահին, ցածրաձայն ասաստանեց նրա հարցին և մտավ դրծտրան: Նրա ականջին հասան խոսակցության ձայները.

— Մեր լուսերը չեն կարող քողարկել:

— Ինչ պետք է անեն գերմանացիները մեզ:

— Նրանք հեռու են, այստեղ չեն հասնի:

— Իսկ սավառնակները կարո՞ղ են:

— Կարող են...

Ստամբուլից մեկը գործարանի դիրեկտոր Մազմանյանն էր, որին Լևոնն իսկույն ճանաչեց: Դիրեկտորը ձեռքերն առաջ տարածելով՝ լուսաքողարկման մասին կարգադրություններ արեց: Մյուս երկուսը գլխով համաձայնության նշան անելով՝ հեռացան, իսկ Մազմանյանը նստարանով հանդիպեց Լևոնին:

— Ա՛յ, լավ է, որ եկաք,—Լևոնի ձեռքը սեղմելով բարձրաձայն ասաց նա,—մի տեսեք ինչ աշխատանք է գնում: Այսօր մեր գլանի գերակատարումը կհասնի ռեկորդի...—ապա լռեց, խորհրդավոր նայեց Լևոնին ու հարցրեց.

— Ի՞նչ նորություն:—Եվ չսպասելով պատասխանի՝ շարունակեց,—պատերազմի լուրն լսմանալուն պես մերոնք որոշեցին կրկնակի, եռակի անդամ ավելի արտադրանք տալ...Չեն վախեցնի ֆաշիստները մեզ: Նրանք կընկնեն երեսնց փորած փոսի մեջ...Մեր երկիրը հզոր է, ոտք ժողովրդին, ստեպան ժողովրդին հաղթել չեն կարող...

— Չեն կարող,—արձագանքեց Լևոնը և նրանք սկսեցին լուռ քայլել գերեզմիջյան ճանապարհով: Մազմանյանը մտածում էր լուսերի քողարկման մասին, իսկ Լևոնը մտովին նորից այցով Մոսկվա, Զայկովսկու անվան կոնսերվատորիան և մրցույթում կրկնում էր.

— Լյուդմիլա, սիրելի՛ս...

Կոմերիտմիության շրջկոմում ամեն ինչ վերաշխուժացել այնպես, որ նա աշխատի հանուն ռազմաճակատի, հանուն հաղթանակի: Գիշեր-ցերեկ պատերազմի հետ կապված բազմաթիվ հարցերով այստեղ էին գալիս շատ երիտասարդներ՝ տղաներ ու աղջիկներ: Նրանց թվում էր, թե շրջկոմի քարտուղարը միշտ նոր առաջադրություններ կունենա ռազմաճակատից, թե կոմխոհում ավելի դյուրին, քան հաղորդում է ռադիոն: Եվ այստեղ էլ ծավալվում էր խոսակցությունը պատերազմի մասին: Ոմանք կարծում էին, որ պատերազմը կարճատև կլինի, ոմանք ընդհակառակն էին պնդում: Տաք վեճեր էին բորբոքվում այն մասին, թե ո՛ր երկիրն ինչ դիրք կբռնի, նրանցից ո՛րը մեր կողմը կլինի, որը՝ դեմմանացիների:

— Թյուրքերի համար նպաստավոր պայմաններ առաջացան:

— Նրանք առևթը բաց չեն թողնի:

— Ճապոնացիք նույնպես:

— Դատարկ բաներ են: Ինչպես պատմաբանքն, այնպես էլ արևելքն, հարավի պետությունների դիրքը կախված է պատերազմի ընթացքից: Նայած, թե ինչպես կզարգանան դեպքերը, ինչպես կտուկա Սովետական Միությունը:

— Այո՛, մեր երկիրն է կրում հարվածը և մեր երկիրն էլ պետք է հաղթի հակահարվածը:

— Մեր ուժերով պետք է ջախջախվի ֆաշիզմը:

Մոլոտովի ռադիոելույթից հետո ամեն առավոտ հավաքվելով քաղաքի հրատարակիների ռադիոբարձրախոսների շուրջը՝ մարդիկ անհամբեր սպասում էին, թե ե՞րբ կխոսի ընկեր Ստալինը: Հաճախ բարձրախոսների մոտ ինքնաբերաբար միտինգի

Անուշ գիրք—2

14.601
Ա 2470

նման բան էր տեղի ունենում: Մեկը սրտի խորքից «ախ» էր անում, մյուսները վրեժխնդրության լցված տում էին.

— Թա՛նկ կնաստ ձեզ վրա այդ բոլորը:

— Դեռ մեր բանակը ձեզ ցո՛ւյց կտա:

— Դեռ դուք կտեսնե՛ք:

Զայրույթն ու տեսլություն ավելի էին մեծանում, երբ ռադիոն հաղորդում էր այն դատավճռությունների մասին, որ դրծադրում էին Ֆաշիստների սոլետական ռազմատերինների նկատմամբ: Հաղորդման յուրաքանչյուր նախադասության հաջորդում էին ցասումնալից խոսքեր.

— Բարբարոսնե՛ր...

— Դատաննե՛ր...

«Ֆաշիստները ռազմատերներից մեկի կոծքին տատղ են փորել...»

Եվ դեռ չավարտած հաղորդումը՝ մի կին դրեթե նվաղելով բացագանչում էր.

— Սրիկանե՛ր, անխիղճնե՛ր:

Բազմությունն տես օվկիանի նման ալեկոծվում էր, այս ու այն կողմից բացագանչում էին.

— Մ՛տղ...

— Կարմիր մ՛տղ...

— Ինչից տարտափում են Ֆաշիստները...

— Քաղեղորդ զարի մարդակերները...

— Վանդալնե՛րը...

5.

Ռազմաճակատի օդնության համար Պետական Պաշտպանության Կոմիտեից նոր առաջադրանք տանալուց հետո Մանթաշյանն ամբողջ գիշերը նախագծումներ էր անում, գործարանների անուններն գիտաց թվեր գրում: Նրան գրաղեցնում էր նաև այն միտքը, որ մի քանի կոլխոզներում բեր-

քահանաքի օրերին աշխատող ձեռքը չէր բանակա-
նացնում: Մի՞թե կոմերիտականները չեն կարող
կիրակնօրյակների միջոցով հավաքել բերքը...
Ավելի լավ է քաղաքից բարձր դասարանների աշա-
կերտներին, հիմնարկային աշխատողներին ուղար-
կել կոլխոզները, ուղարկել ոչ թե մի օրով, այլ
մեկ–երկու ամսով: Այն ժամանակ դյուզը կկատա-
րի աննդամքերքի մատակարարման պահանջը: Եվ
Մանթաշյանը ձեռքը տարավ դեպի լսափողը՝ կե-
սվոնին կանչելու: Նրա ձեռքը մնաց լսափողի վրա.
նա հիշեց, որ մի քանի րոպե առաջ Լևոնին ուղար-
կել է գործարան...Այսօր օրը առավոտյան Ման-
թաշյանը բերքահավաքի մասին առաջադրանք ստա-
ցավ հետո Լևոնին տվաց.

— Դրությունը լուրջ է: Երիտասարդության պետք է պահել մոբիլիզացված վիճակում: Կատա-րել, ինչ գնալ ուզում է լինի՝ կատարել ռազմա-ճակատի պահանջը: Ամեն ինչ պետք է անել հաղ-թանակի համար:

Կենտկոմից ստացված էին առաջին կարճակ հեռագրերը երիտասարդության ուժերը մոբիլի-զացնելու մասին:

Մի քանի օրվա ընթացքում բանակի շարքերը համալրելու գնացին կոմերիտականների կեսից ավե-լին: Գնում էին նաև կոմերիտական կազմակեր-պությունների քարտուղարները, նրանց փոխարեն ընտրվում էին նորերը: Երեկոյան ընտրված քար-տուղարը հաջորդ առավոտյան բանակ էր կանչ-վում: Սկսվեին տեղերը ուղարկելիս Լևոնը հանձ-նարարեց ընտրություն կատարել, կամ գործերը հանձնել դեռ չզորակոչված կոմերիտականներից մեկին: Մի քանիսը հրկում վերադառնալով՝ պե-կոցեցին.

— Վերջացավ:

— Ընտրեցի՞ք:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ:

— Բոլոր կոմերիտականները ռազմաճակատ են մեկնել:

— Այդպե՛ս: Շուտով մենք էլ կղնանք և շրջկոմի դռան վրա կդրենք Նիկոլայ Օստրովսկու հայտնի խոսքերը՝ «Շրջկոմը մեկնել է ռազմաճակատ»,—հանդիսատ ավելացրեց Լևոնը և իր տոլորությանն համաձայն՝ բժամատերը թևատակերին գրած քայլեց ետ ու առաջ:

— Է՛հ, ընկերնե՛ր,— սրտնեղվեց դնչուհու նման սևահեր Սրբուհին՝ շրջկոմի հաշվառման վարիչը,—նորից վիճակագրական հաշվետվության մեջ պետք է ցույց տանք մեկ լիկվիդացված կազմակերպությո՞ւն:

Լևոնը կանգ առավ, մեղմորեն ժպտաց և ձեռքը դնելով Սրբուհու ուսին ասաց.

— Ոչինչ, Սրբուհի, պատերազմ է...

— Հա՛, պատերազմ,—կրոր աչքերը չռելով տրտնջաց Սրբուհին և ուսերը թափահարելով վրա տվեց,—իսկ դիտե՞ք որքան դժվար է կենտկոմ հաշվետվություն ներկայացնելը, բացատրագիր կազմելը:

Նրանք երկար խոսեցին, բայց, այնուամենայնիվ, Լևոնին չհաջողվեց համոզել Սրբուհուն, որ պատերազմը, համենայն դեպս, ավելի դժվար է, քան վիճակագրական հաշվետվություն ներկայացնելը:

— Իսկ գինկոմի պահանջը՞, ռազմական ուսուցո՞ւմը, մի՞թե կարելի է մի գիշերում ավարտել,— կարծես իրեն արդարացնելու համար ասաց Սրբուհին:

— Գինկոմի՞:

Այդ մինչև նեղս մտան մի խումբ կոմերի-

ռականները: Լևոնն ասես նրանց էր սպասում և ուրախ բացականչեց.

— Այո՛, կավարտենք, ընկերները մեզ կօգնեն և գինկոմի պահանջը կկատարվի: Այդպես չէ՞, ընկերնե՛ր,— դիմեց նա կոմերիտականներին:

— Անպայման: Մենք հենց դրա համար էլ եկել ենք,—առաջ գալով պատասխանեց ուսուցչուհի Աստղիկ Շահյանը, որ պիոներական աշխատող էր, ու թեև տարիքն անցած, բայց միշտ ընտրվում էր կոմերիտական դեկավար օրգաններում և եռանդով լծվում աշխատանքի:

Լևոնը նրան աթոռ առաջարկեց և ձեռքերը հաճույքով իրար քսելով՝ ժպտաղեմ ասաց.

— Այդպես էլ գիտեի: Իմ լավ դաստիարակչուհին, իմ առաջին ղեկատարվելը օգնության կգա:

— Այսինքն մենք բոլորս այդ նպատակով ենք եկել,—միջամտեց Գարեգինը, նա, որ շուտ ընկալելու ընդունակ էր, որին Զապահ Գարեգին էին անվանում, և որը մասնակցել էր ֆիննական կռիվներին ու զորացրվելուց հետո ամբողջովին նվիրվել էր ռազմական ուսուցման գործին: Սովորականի նման նա հագել էր զինվորական բլուզ, գալիֆե ու սապոգներ: Գլուխը բաց էր, մազերը խնամքով եռ անրած: Ինչ էր պատահում, որ Գարեգինը զբաղարկ դնի: Սիրում էր, որ իրեն կոչեն կամ Զապահ Գարեգին, կամ ուղղակի «Ընկեր հրամանատար»: Երբ մեկն ու մեկը մոռանում էր այդ, նա զինվորականի պես պատվի առնելով՝ խստորեն ընդհատում էր նրան.

— Оставить! Начни с нова!

Ապա նա պատմում էր որևէ էպիզոդ ֆիննական կռվից, հետո հիշում Զապահին, նրա դիվի-

գնայի կամխաթելն և ավելացնում. «Այսպես կասեր Զապաևը»: Լեռնեցիք զորավար Զապաևի անհրաժեշտությունները վատ կերպով տպավորվել էին Գարեգնի գլխում և նա իր սկած հերոսին համառում էր պատերազմի ու հաղթանակի սիմվոլ: Նույնիսկ ֆիննական կռիվներին նրան թվում էր, թե ուր որ է դուրս կգա Զապաևը իր ձին հեծած և բևեռը պտրելով կասի.

— Նո՛ւ, սերժանտ Գարեգին, կհաղթե՞նք:

— Կհաղթե՛նք, ընկեր Զապաև,—մտքում կըրկնում էր Գարեգինը, և նրա աչքերը փայլում էին երջանկությունից:

Լևոնը շատ էր սիրում Գարեգինին և ասում էր.

— Այդպիսի երիտասարդների հետ մենք կհաղթահարենք բոլոր տեսակի դժվարությունները:

Ուշ գիշեր էր: Լևոնը միայնակ նստած էր չըկվոմում և կարդում էր ստացված պրոլետյուններըը, նամականները: Բոլորը գրված էին հունիսի 22-ից առաջ, դրանք այժմ կարևոր չեն...Ել ուզում էր տուն գնալ, երբ ձեռքն ընկավ մանուշակագույն թանաքով գրված մի թուղթ: Դա կոմերիտական Սուրեն Ալեքսյանի գիմումն էր, որով խնդրում էր նրան ուղարկել առաքածակաս: Լևոնն ընկղմվեց բազկաթոռի մեջ և սկսեց ուշադիր կարդալ: Լուսամփոփի լույսի տակ ավելի տրտում հայտնվեց էր գարձել դեմքը, իսկ մեծ ու երազկոտ աչքերը մի տրտակարծ փայլ էին տարածել: Նրա երևակայության առաջ կանգնեցին անցյալի ուրախ պատկերները՝ պիոներ ժամանակ դեպի Բլրադյուղ

և Ինճորաշատ դյուղերը կատարած։ Հետաքրքրական էքսկուրսիաները, ռազմական խաղերը։

... Մի երեկո Վահանյաններն տանը կատարյալ եռուզեռ էր։ Ոմանք չտալ նեղս ու դուրս էին անում, ոմանք չախմատ էին խաղում, ոմանք վիճաբանում կյանքի ու բնության օրենքների մասին։ Հավաքվածները ամենից շատ խոսում էին Բլրապյուղից եկած սևանակ բանաստեղծ Սուրեն Ավետիսյանի և Լենինգրադի Գեղարվեստների Ակադեմիան նոր ավարտած քանդակագործ Հայկ Նալբանդյանի մասին։ Հայկը, որ վայելուչ արտաքին ուներ, բայց մոռեցման ոչ այնքան բարիքի ձևեր, ծաղրում էր Սուրենին.

— Այն ոտանավորները, որ գրում ես աղջիկների ալբոմներում, ոչ մի արժեք չեն ներկայացնում։ Ել ի՞նչ են գրված մի քանի աղջիկների ալբոմներում, սրանից-նրանից թռցրած քաղվածներ, երբեմն հին, վաղուց հայտնի խրատներ։

Մեկ անգամ Հայկը քանդակել էր մի կիսանդրի և ընկերներին հրավիրել տուն՝ այն ցույց տալու։ Երբ նա հանդիսավոր կերպով քանդակի վրայից ետ քաշեց կտավը, բոլորը նայեցին կիսաքանդակին։

— Ո՞վ է,—հարցրեց Հայկը։

Հյուրերը կիսանդրուն խորհրդին նայելուց հետո՝ մի պահ լռեցին, իսկ Սուրենը բացատրեց.

— Լավ ես կատարած հորդ անմահացրել, քեզ էլ՝ հեռը...

Հավաքվածները փռթկացին, իսկ Հայկը դառնացած դլուխն օրորեց։

— Է՛հ, է՛հ, բանաստեղծ եղբայր, ցավալի է. կատարյալին և ճեմհուլենին չես տարբերում իրարից։

Այդ օրը երեկոյան քանդակագործը Լևոնի տունը եկավ սովորականից ուշ։ Անձրևից թրջված

նա ներս մտավ և մոտացավ կրկնակոշիկները հանելը:

— Թրջված մուկ է դարձել,—ձայնեցին այս ու այն կողմից, իսկ Սուրենը նայելով նրա ցեխոտ կրկնակոշիկների ջրոշմած տեղերին, բարձրաձայն ու հանդիսավոր արտասանեց Գոթեևկի խոսքերը. «Եվ ես՞ մեկնում եմ՝ ջրոշմելով իմ ներկայությունը սանդուղքի աստիճանները ծածկող գորգի վրա: Ես պիտի եմ ցեխոտել հարուստ մարդու գորգերը ոչ թե փոքրոգությունից, այլ անհրաժեշտության մասին պատկերն ղալ տալու համար»:

Բոլորը լսածից ծիծաղեցին չվոխված Հայկի վրա, իսկ երբ նա հանեց կրկնակոշիկները և հանգիստ նստեց աթոռներից մեկին, Սուրենն սկսեց ոգևորված կարդալ իր նոր ոտանավորը.

«...Քո հայացքը հրաբորբոք մթնշաղի արևի պես,
Դու նայում ես ինձ խռովահույզ ու հեզ,
Լույս են տալիս իմ հոգուն երկնահնձ
Քո դանդրահեր մազերն են հոլմածեծ...»:

Ներկաներից մի երկուսը ծաղրահարեցին և հիացական խոսքեր ասացին.

— Ա՛յ բանաստեղծություն:

— Աքանչելի՛ է: Մե՛ծ չնչով է գրված:

Իսկ մնացածները մի քանի ակնարկելով կեղծ լրջության: Սուրենը գովեստներից ջերմկրային հաճույք էր զգում և ինքնահիացման ժպիտը դեմքին նայում էր մերթ սրան, մերթ՝ նրան: Բայց երբ աչքն ընկավ Լևոնի խայթող հայացքին, չվոխվեց, ցնցվեց:

— Վա՛տ է,— ասաց Լևոնը,— դու բառեր են գործածում առանց իմաստը հասկանալու: Ահավասիկ. մթնշաղի արևը ո՞րն է: Մինչև հիմա չգի-

տես, որ դանդրահեր նշանակում է գանգուր մա-
զեր...

Իսկ Հայկը խոսելով բռնահանգեների, հակա-
սությունների մասին, ասաց.

— Թվում է, թե 40 աստիճան տաքության մեջ
ես դրել:

Մյուս ընկերները չէին կարողանում իրենց
վոխիկացը զսպել: Հիացողները հանցավորի պես
նայում էին Սուրենին, որոնց հայացքները կարելի
էր թարգմանել այսպես. «Ներեցեք, մենք զրակա-
նությունից բան չենք հասկանում»:

Մեկ անգամ էլ, ամռանը պիոներական պալատի
ընդարձակ դահլիճն էին հավաքվել կոմերիտմիու-
թյան շրջկոմի պլենումի անդամները, ակտիվը:
Մանթաշյանը մոտենալով նախագահության ա-
ղանին՝ հայտարարեց.

— Առաջարկում եմ կոմերիտմիության շրջ-
կոմի առաջին քարտուղար ընտրել Լևոն Վահա-
նյանին:

Դահլիճում ծափերի որոտ բարձրացավ: Վեր-
ջին շարքում նստած Սուրենը տեղից բացական-
չեց. «Մխանգամայն արժանավոր թեկնածու»: Ծա-
փերը վերսկսվեցին ավելի ուժգին: Լևոնը հուզ-
ված էր: Ընտրվելուց հետո շատ էր խորհում, թե
կարո՞ղ է արդարացնել Մանթաշյանի և իր ընկեր-
ների վստահությունը, կարո՞ղ է դլխավորել երի-
տասարդների դաստիարակության գործը: Անցավ
ժամանակը: Սկսվեց պատերազմը: Ամեն ինչ փոխ-
վեց արտասովոր արագությամբ: Նրա և իր ընկեր-
ների համար սկսվեցին անքուն գիշերները... Լու-
սամփոխի մեղմ լույսի տակ նա նորից կարդաց
Ավետյանի գիմումը, որ վերջանում էր այսպես.

«Ինդրում եմ ինձ ուղարկել ռազմաճակատ:
Որպես կոմերիտական երդվում եմ մինչև արյա-

նըս վերջին կաթիլը կռվել մեր երջանկության համար, մեր վերջնական հաղթանակի համար, մեր մեծ հայրենիքի համար, Ստալինի համար»:

Այս դիմումի մեջ ուրքան է առաջադիմել Սուրենը: Սա ավելի բանաստեղծական է, քան այն ոտանավորները, որոնք հիշելիս նա ծնծաղում էր...

Լևոնը հուզված վեր կացավ, ապեց դանդաղ քայլել սենյակում: Նա մտորում էր, որ այդ ևնման բազմաթիվ դիմումներն առաջնորդել ոադիոհեռուստիր արշաւիքն էին: Այդ եւուրքը ոչ միայն կոմերիտականներին զեպի ռազմաճակատ է մղում, այլև ամբողջ երկրին գոտեպնդում: Նա նորից մոտեցավ լուսամուտին և բացեց այն: Հունիսյան խաղաղ գիշեր էր: Փոքրիկ քաղաքի զեղեցիկ երկինքը լազուրի համար էր կապել նրա գլխավերևում: Աստղերի փայլը և լուսնի մեղմ շողերը լուսավորում էին անտառը, գործարանը, տները: Վառարանների դռռոցը, անտառից եկող ծառերի խշշոցը, զետակի խոխոջը չլսում էին նրա ականջը: Ճաճելի զուլուքյունը ցերեկվա հոգից, լարված աշխատանքից, անքնուքյունից հոգնած Լևոնին թարմացրեց: Ռադիոն սկսեց հաղորդել Ստալինի հունիսի 3-ի ելույքի արձագանքները աշխարհի բոլոր երկրներում:

7.

Դուռը կամացուկ բացելով՝ Լևոնը ոտքերի մատների վրա զգուշությամբ ներս մտավ: Նրա մայրը՝ Աննան նստած լուսամփոփի մոտ ճաղերը չնգացնելով ձեռնոց էր գործում և հետն էլ ցածրաձայն մի տխուր երգ երգում: Արցունքի կաթիլները լճացել էին նրա աչքերում:

Լևոնը նույն զգուշությամբ ծածկեց դուռը:

Աննան չկամացավ որդու ներս մտնելը և շարունակում էր իր աշխատանքը:

Վեռնը զգուշ մոտեցավ Աննային:

— Մայրի՛կ,—հազիվ լսելի ձայնով չընջաց նա մորը վախաթխվելով,—ի՞նչ է պատահել...Մայրի՛կ...

— Ոչի՛նչ, հոգնած եմ,—խուսափողական պատասխան տվեց մայրը և աչքերը սրբեց:

Վեռնը գիտեր մոր վշտի պատճառը: Օր ու գիշեր նա խորհում էր անդրանիկ որդու մասին, որը պատերազմի առաջին օրերին մեկնել էր ռազմաճակատ և ոչ մի լուր չկար նրանից: Ջնայած դրան, Աննան տանը րոպե անգամ ձեր կորցնում: Նա արտելից կտոր էր բերում, բանակայիններին համար տաք հագուստ, սպիտակեղեն էր կարում, կամ մինչև ուշ գիշեր էլեկտրական լույսի տակ մեղմիկ չնգացնում էր ճաղերը և դործում ձեռնոցներ, դուլպաներ: Գործած ձեռնոցները, դուլպաները հարևանուհիների հետ նվեր-ծանրոցների մեջ դնելով ուղարկում էր դործող բանակ: Ու որքան էլ զբաղված լիներ, նա լսողությունը լարած ունկընդրում էր ռադիո-ընթրամսույցին: Իսկ երբ ցրիչը թերթերը բերում էր, նա խնդուն վերցնում էր դրանք, դուրս գալիս պատշգամբ, տեսուհիներին, հարևաններին հավաքում, բարձրաձայն կարդում էր լինֆորմբյուրոյի հաղորդագրությունները և օրվա նորությունները: Բակի կանայք պատերազմի օրերին խոր սիրով ու հարգանքով կապվեցին Աննայի հետ: Անգամ կուվարար Սաթոն, որ ամբողջ թաղում բոլորի հետ ընդհարվում էր և Աննային ծաղրելով «թաղի գիտուն» էր անվանում, իր տղային բանակ ուղարկելուց հետո Աննայի հետ կապվեց անքակտելիորեն: Եվ առաջինը Սաթոն էր, որ բարձրանում էր նրանց պատշգամբը

և աչքերն անթարթ սևեռած «Թաղի պետուն»
վրա՝ հարցնում.

— Ի՞նչ բարի լուր կա, Աննա ջան...

Աննան մանանգում էր ռազմաճակատին ցույց տրվող օգնության մասին: Հակաօդային պաշտպանության շտաբի կողմից նշանակված էր թաղամասի պիոներային հերթապահ և աստղում էր լուսաքարկումը: Մեկ անգամ ուշ երեկոյան նա գնաց Մանթաշյանի մոտ:

— Ինչո՞ւ ես եկել, մայրի՛կ,—հետաքրքրվեց Մանթաշյանը:

Աննան պատասխանի փոխարեն մոտեցավ, սեղանի վրա դրեց մի փոքրիկ դեղեցիկ զարդատուփ, որի մեջ դրված էին իր նշանդրեքի ոսկյա մատանին, սրտիկ՝ իր շղթայով և մի ակնոցուռ տպարանջան:

Զարդարանքները նվիրելուց մի երկու օր անց, ժողովրդական աշխարհազորի կազմակերպման նվիրված մի խոհնդում հանդես եկավ Աննան և ասաց.

— Ես երեսաասրդ չեմ, բայց ընդհանուր դրծին կարող եմ օգնած տալ: Այս խմորը շատ չուր կվերցնի: Ինձ էլ դրեցեք աշխարհազորական: Ես իմ երկու որդիներին պահել, մեծացրել եմ կար ու ձև անելով: Այո՛, ես կար ու ձև անող եմ և անահնեղի անունից խոսք եմ տալիս այնպես աշխատանք, որ Հիտլերի պատանքը կարենք:

Նա կանգ առավ: Ուզում էր ինչ որ բան ասել, բայց հուզմունքը կարծես սեղմում էր նրա կոկորդը: Մոտեցավ նախագահության սեղանին և Մանթաշյանի ձեռքից վերցնելով դրիչը՝ աշխարհազորայինների ցուցակում իր անուն ազգանունն

ելոմաց ստրապըեց: Եվ Աննա մայրիկին այդ օրվանից քաղաքում կոչեցին «Հիտլերի պատանքը վարող»:

8.

Թատրոնի դահլիճը լեփ-լեցուն էր: Ամբոխի մեջ էր Մանթաշյանը, որն ասաց.

— Հայրենասեր Ավետիսյանի օրինակին կհետևեն շատերը: Երիտասարդների համար այժմ չկան այլ խոհեր, քան հայրենիքի պաշտպանությունն է: Կվերջանա պատերազմը, Ավետիսյանն ու իր ընկերները հաղթանակով կվերադառնան ահեղ մարտադաշտից ու հաշիվ կպահանջեն. «Դուք, որ թիկունքում եք մնացել պատերազմի օրերին, ինչ եք արել»:

Դահլիճը թեթևակիորեն ալեկոծվեց:

Մանթաշյանի ելույթից հետո մեկը մյուսի հետևից սկսեցին ամբոխն բարձրանալ երիտասարդներն: Նրանք պահանջում էին, որ իրենց ուղարկեն առջամաճակատ:

Վերջին ելույթ ունեցողը, մի կճաս, խաժ աչքերով և խարտյաշ մազերով երիտասարդ էր, որն այնպիսի հանդարտությամբ մոտեցավ ամբոխին, ինչպես մի ծանրաշարժ դասախոս և նույն հանդարտ տոնով էլ ասաց.

— Ընկերնե՛ր, ընկերնե՛ր: Այսինքն ինչ կարիք կա երկար խոսելու. ամեն ինչ պարզ է: Ուղղակի պետք է այստեղ ցուցակագրվենք առջամաճակատ գնալու համար,—և կանգ առնելով, թվում էր, թե իր ուժերն է լարում, որքան կարող էր վոկոլոգային ձայնով բարձր չարունակեց:

— Հայրենիքը մեզ է կանչում: Գումեռք պինվոր: Մեր սրբազան հայրենիքին սպնիլ ծառայենք: Կեցցե՛ Սոսլինյան Բանակը: Նղո՛վք և մահ Ֆաշիստական գավթիչներին:

Երբ երևոսարդը բեմից իջավ և դադարեցին ծափերը, այս ու այն կողմից լսվեցին աթոռների ուժգին թխկոց-չխկոցներ, փոքիկոս ոտնաձայներ: Բեմ էլին բարձրանում երևոսարդները և դիմում Մանթաշյանին ու պինկոմին.

— Ինդրում ենք մեզ ուղարկել գրասաս:

Չինկոմն ամեն մեդամ իր սովորության համաձայն ինքնաբերաբար երկու ձեռքով ձդում էր բլուզի փեշերը և չդածդրեն ցնցելով աչ ուսը, խորտաղնին նայում էր դիմող երևոսարդին, ոսկե գլուխ նրան չափում, մինչ որ հարցնէր ասվա, ապա թեքվելով Մանթաշյանի կողմը, որ իր ամբողջ ուշքն ու միտքը սրկած՝ լսում էր երկյթ ունեցողներին, հարցնում նրա կարծիքը, հետո երևոսարդի անուն ազգանունը դրում կամավորների ցուցակում: Կամավորների ցուցակագրումը ժողովով չվերջացավ: Սյնուհետև կոմերիտմիության չրջկոմ էլին գալիս երևոսարդները, հասակավորներ և պահանջում իրենց ռազմաճակատ ուղարկել: Ներկայացավ նաև կոմերիտուհի Էմման: Նա դիմումի մեջ գրել էր. «Մեր ընտանիքի բոլոր անդամները պիտանի են բանակի համար: Մեզանից հինգը կարող է պինք վերցնել: Սվադը մեր պապն է, որ լավ խոհարար է: Կրտսերը՝ Համլետը պիոներ է և երազում է դառնալ հեռախոսչի»:

Լևոնը չրջկոմում չէր: Դիմումը վերցրեց Սերբուհին: Նա կարդաց և դանդուր գլուխը աչերի մեջ առնելով մանկան ձայնով հարցրեց.

— Ինչո՞ւ եք գրել: Ի՞նչ օգուտ գրանից: Ախր,

որ իմանաս ինչքա՜ն անպատրաստ ենք այս կռվին: Շատ են ուժ-եղ չները: Վախենում եմ մերոնց հաղթեն: Սխատս մեր ազատ կյանքը: Ա՛խ, ես ինչ դիտեմ...

Ու Սրբուհին կծկվեց բազկաթոռի վրա, ամեն փոքրացավ, սկսեց հեկեկալ: Իմման ուսերը թոթվելով, կարեկցական մի հայացք գցելով նրա վրա՝ սկզբում մեղմ, ապա հանդիմանական ասաց.

— Դու սխալ ես, Սրբուհի:

Վերջինս աչքերը դամեց Իմմայի վրա:

— Պատերազմի ընթացքը ցույց է տալիս, որ ղեմանացիների բարձրացրած ազմուկը կայծակնային պատերազմի մասին՝ տապալվում է: Մ՛թե դու չլսեցիր Ստալինին: Մ՛թե դու չես լսում Սովետական Ինֆորմբյուրոյի հաղորդագրությունները...Որքա՞ն փոքրոդի ես ու վախկոտ: Ամո՛թ քեզ, ինչպե՞ս չես ամաչում: Եվ մ՛թե դու կոմերիտուհի ես: Դու արդեն հանդես ես գալիս որպես խուճապահար,—ձայնը բարձրացրեց Իմման:

— Իմիկ ջան, ես այդ բոլորը սրտի ցավով եմ ասում: Ի՛, դանակ ասա, արյուն չի կաթի: Ջե՞ռ տեսնում մերոնք նահանջում են, թողնում են քաղաքները, գյուղերը...Հայրենիքը ձեռից գնում է:

— Հայրենիքը ձեռից չի գնա, քեզ նման երկչոտները կարող են միայն այդպես դատել: Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես ասում: Սթափվի՛ր: Եթե իմ մտքով մարդիկի անցած անցնի, որ այդ ամենը համոզված ես ասում, քեզ հետ այլ լեզվով կխոսեմ: Եթե դու երկրորդ անգամ թույլ տաս այդպիսի բաներ ասել, այն ժամանակ այլևս քո դյուրթյունն այս պատերն անգամ չեն հանդուրժի: Հասկացիր, թե դու որտեղ ես գտնվում:

— Ինչ անեմ, Իմմա ջան,—դողդոջ ձայնով

և վախի նուն արտահայտությունը դեմքին դանդուր գլուխը ցնցեց Սրբուհին, ապա մի հառաչ արձակելով շարունակեց.—դու կարծում ես, ես այդ բաները դիտավորյալ եմ ասում: Ինչ անեմ, որ բնությունն իմ կրծքի տակ թույլ սիրտ է դրել, նախանձում եմ, որ նայում եմ քեզ:

— Բնությունն իմ կրծքի տակ թույլ սիրտ է դրել,—քրթմնջաց Էմման,—քաղքենուհու խոսքեր:

Էմման դեռ շարունակում էր նույն ցասկոտությամբ կշտամբել Սրբուհուն, երբ ուժգնորեն բացվեց դուռը և ներս մտան մի խումբ համարձակ, կենսախինդ աղջիկներ՝ ձեռքներին դիմումներ:

Էմման մեկ նայեց ներս մտնողներին, մեկ Սրբուհուն և այդ հայացքով ուզում էր ասել. «Ա՛յ, արանցից օրինակ վերցրու»:

9.

Կոմերսիամության չքվելուց մտավ մի բարձրահասակ պատանի: Նա դիմելով Վահանյանին ասաց.

— Ես ավարտել եմ ֆաբրիկա-գործարանային դպրոցը: Փականագործ եմ: Այս տարի սկսեցի սովորել մինչնակարգ դպրոցում,—նա փոքր ինչ կանգ առավ, գլխարկին արագորեն հանեց, կարծես, նոր զգալով դրա անհրաժեշտությունը, ապա շեշտակի նայելով Լևոնին՝ շարունակեց.

— Այժմ ուզում եմ աշխատել իմ մասնագիտությամբ: Իսկ ուսումս շարունակել գիշերային դպրոցում...Պատերազմի ժամանակ է,—ավելի լուրջ տոնով շարունակեց նա,—էլ ո՞ր օրվա համար պետք է պահեմ մասնագիտությունս, երբ...

— Ինչպե՞ս է Ձեր անունը,—հարցրեց Լևոնը:

— Կոմիտաս,—պատասխանեց պատանին:

— Կոմիտա՞ս,—աչքերը լայն բաց արեց Լևոնը,—շատ լավ անուն ունեք...Կոմիտաս...Աշխատանքի մեջ այդ անունը բարձր կպահեք... Լավ եք որոշել,—մեղմ ժպտալով ավելացրեց Լևոնը,—իսկական կոմերիտականն այդպես կլինի...Պատերազմի ժամանակ պետք է ռազմաճակատին օդնել ով ինչպես կարող է, ուժերի առավելագույն լարումով:

Կոմիտասը չրջկոմի ուղեգրով գնաց գործարան և աշխատանքի անցավ: Այն, ինչ խաղաղ ժամանակ պահանջում էր տարիներ, պատերազմի օրերին կատարվում էր ամիսների, նույնիսկ շաբաթների ընթացքում: Երեք ամիս անց Կոմիտասը քննություն տալով ստացավ հինգերորդ կարգի փականագործի կոչում և նշանակվեց բրիգադայի վարպետ, իսկ երբ հավաքման ցեխում բրիգադիրներից մեկը կանչվեց բանակ, Կոմիտասը փոխարինեց նրան:

— Մատաններն ու փականագործները մեզ մոտ օժանդակ բանվորներ էին համարվում առաջ,—նշանակման հրամանն ստորագրելով ասաց գործարանի դիրեկտոր Մազմանյանը,—օժանդա՛կ,—առանձնապես այդ բառը շեշտելով նա դլուխը բացասաբար շարժեց, ապա շեշտակի նայելով Կոմիտասին՝ շարունակեց,—հիմա ի՞նչ կասեն: Օրական մի քանի անգամ փոխվում է արտադրանքը: Հակառակ պատերազմական դժվարություններին՝ մերոնք կատարելագործում են վառարանները, բարելիոխում տեխնոլոգիան...Հասկանո՞ւմ ես, Կոմիտաս, այժմ մենք տալիս ենք ամենաբարձրորակ արտադրանքն ամբողջ աշխարհում:

— Ամբողջ աշխարհո՞ւմ,—հիացմունքով կըրկ-

նեց Կոմիտասը և բավականությամբ չփնեց կզակը։

— Այո՛, այո՛,—ավելի ոգևորված ձայնը բարձրացրեց Մազմանյանը, բայց մի թռուցիկ հայացք գցելով պատի ժամացույցին, կարծես թե որ հիշելով, արագ հավաքեց թղթերը, փակեց պզրոցում և դնացքից ուշացող մարդու նման արագ վրա ավեց։

— Մեր դործարանի արտադրանքը, սիրելիս, արդյունաբերության համար կարևոր է։ Այսօր Ուրալից էլ պատվեր ստացանք։ Ուրեմն այնտեղ էլ կա մեր արտադրանքի պահանջը։ Երեկ ուղարկեցինք Հեռավոր Արևելք։ Ավտոդեն զորամասը դու պետք է ամենաշտապ կարդով ավարտես նոր ցեխի սարքավորման մոնտաժը։ Մենք քեզ հետ միասին ամենալավ դենքը կուղարկենք ռազմաճակատ, այնպես դենք, ո՛ր...—նա բառնցքներն ամուր սեղմեց, որից Կոմիտասը հասկացավ, թե ինչ է ուզում ասել դիրեկտորը և դլխով դրական նշան արավ։

— Ապրե՛ս, բրիդադիր, դե քեզ տեսնենք,— վերջացրեց Մազմանյանը և բարեկամաբար խփելով Կոմիտասի ուսին՝ շտապով դուրս եկավ դրասենյակից։

Կոմիտասը մտապրաղ մտավ ցեխ։ Հայտնեցին, որ նոր ցեխի սարքավորումը տեղադրելու համար ժամանել է հրավիրված կոնտրուկտորը։ Կոմիտասը մոտեցավ նրան և շուտով սկսվեց ջերմ զրույցը։ Կոնտրուկտորը շատ կենսուրախ մարդ էր և մեծ եռանդով պատմում էր վերջերս արևելքը էվակուացված մի գործարանի մասին, ապա սկսեց խոսել Կոմիտասի հետ և հետզհետե չկարողանալով զսպել՝ ասաց.

— Եթե աշակերտն այսպես լավ է հասկանում, ա՛լ ինչա՞ն է վարպետը։

— Վարպե՞տը, վարպետը ես եմ,—դծագիրը վերցնելով համարձակորեն ասաց Կոմիտասը: Նորեկի առջև կանգնած էր բարձրահասակ, նիհար մի երիտասարդ, որի աչքերն անքնությունից արյունոտ էին լցվել, խիտ հոնքերը ստվեր էին դցել աչքերի վրա: Նա լրջանալով խորտակնին նայեց երիտասարդ վարպետին և ծոծրակը քորելով ասաց.

— Ինչ արած, պետք է ենթարկվել:

Կոնստրուկտորի խոսքերի վրա հավաքվածները լսողք ծիծաղեցին:

— Դուք դեռ չդիտեք մեր վարպետին,—ծծծաղի միջից լսվեց մի հատակավոր բանվորի բաս ձայնը,—նա դրանից դժվար գործեր է կատարել:

— Էն սիրած աղջիկը՝ Սեդան, որ նա ունի...—Կոմիտասին չեղակի նայելով ասաց մեկը:

— Է՛, այդպես մի ասի,—միջամտեց մեկ ուրիշը,—այն օրվանից, ինչ Սեդային առաջ քաշեցին, տարան Հարևան ցեխի բրիգադիր, Կոմիտասը Սարոյի երգը ամեն օր հիշում է.

«Աման, էրեցիր, սիրտս քո սիրով,
Ոտս կապեցիր թել-թել մազերով...»

— Ինչո՞ւ ես այդպես ասում,—լսվեց նույն հատակավոր բանվորի բաս ձայնը,—Սեդան հո միշտ գալիս է այստեղ: Նա նորից մեզ հետ է: Ապա դառնալով կոնստրուկտորին՝ ավելացրեց,—Բա՛, այդպիսի տղա է մեր Կոմիտասը:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ,—հիացած պատասխանեց կոնստրուկտորը և գործի անցավ: Բայց նոր ցեխը չահագործման հանձնելու դժվարությունները ավելի շատ էին, քան պատկերացնում էր նա: Ստացված ապրքալորման մեջ կային կոտրըված և պակաս մասեր: Նորն ստանալու մասին մտածելն անգամ ավելորդ էր, որովհետև երկար ժամանակ կպահանջվեր: Իսկ Պաշտպանության Պե-

տական Կոմիտեի առաջադրանքը նոր արտադրանք տալու մասին՝ պետք է կատարվեր, ինչ գնով էլ լիներ:

— Ինչ գնով էլ լինի,—պնդեց Կոմիտասը կոմերիտական կազմակերպության այն ժողովում, ուր քննության էր առնվում այդ հարցը:

— Կոմերիտական կազմակերպությունը վերցնում է նոր ցեխի շենքուԹյունը,—հայտարարեց նախագահը,—առաջադրանքն աչապռուն կատարելու համար յուրաքանչյուր ցեխից չորս, հինգ հոգի պետք է փոխադրվեն այստեղ:

— Եթե կոմերիտականները հնարավոր են գտնում, ես չատ ուրախ եմ,—ձեռքերն առաջ տարածելով, ասաց ծնկներին դնելով բացատրչեց Մազմանյանը:

Ժողովականները հայացքներն ուղղեցին դեպի դիրեկտորը, որը ճակատը չփնելով, ինչ որ բան հիշելով, ոտի կանգնեց և դիմեց ժողովականներին.

— Կոմերիտականները չատ բան են արել այս գործարանի կառուցման համար: Այն ժամանակ նույնպես դժվարուԹյուններ կային: Ջեր բռնատիրական ուժը, վատարաններն և մյուս ցեխերը չահագործման հանձնելու համար մատնատեաներ քիչ ունեինք: ԿոմերիմիուԹյունը որպես պարտեզի մարտական օգնական՝ հանդես եկավ իր նախաձեռնուԹյուններով և գործը գլուխ եկավ... Այժմ նույնպես հարց է դրված. «Մենք կարո՞ղ ենք...»:

— Կարո՛ղ ենք,—առանց նախագահից ձայն խնդրելու պատասխանեց հիմնական ցեխի պետը:

— Եթե հիմնական ցեխը կարող է, մենք ավելի չատ հնարավորուԹյուններ ունենք,—հարեց մեքենայական ցեխի պետը:

Կոմերիտական կազմակերպությունը որոշեց ստեղծել ճակատային բրիգադա և անհապաղ կատարել ռազմական առաջադրանքը: Ժողովից հետո Կոմիտասը ցեխում ստուգեց դիշերային հերթափոխը, և հանձնարարություններ տալով դուրս եկավ:

Երեկո էր: Լիալուսինն ամպերի մեջ կարծես պահմտոցի խաղալով առաջ էր սահում: Կոմիտասը նստեց բանվորական ավանի այգու նստարաններից մեկի վրա և խորասուզվեց մտքերի մեջ: Նա մտածում էր պատերազմի մասին, իր ընտանիքի հոգսերի և աշխատանքի մասին: Մտաբերեց այն օրը, երբ ռազմաճակատ մեկնեց մեծ եղբայրը: Ինքը ինչպես հրաժեշտ տվեց նրան...Շախշախում էր աչնան հորիզոնական անձրևը: Դպրոցից դուրս գալով Կոմիտասը հեռ-հեռ վազում էր դեպի հավաքատկայան: Նա ասես չէր զգում, թե ինչպես վարար անձրևը թրջում էր շորերը, լվանում դեմքը... Նա վազում էր դեթ վերջին րոպեին տեսնելու եղբորը: Երբ հասավ այնտեղ, արդեն ահագին բազմություն էր հավաքվել: Կոմիտասին տեսնելուն պես եղբայրը դրկեց նրան, մեղմաբար շոյեց մազերը և ասաց.

— Կոմիտաս ջան, ես էլ գնացի...

— Բայց ինչպե՞ս, այսքան շո՞ւտ,—հարցրեց նա:

— Այո՛, երկու ժամ առաջ ստացա ծանուցագիրը: Դու ինչպե՞ս լսեցիր:

— Դպրոցում լսեցի... Լավ էր, որ հասցրի, վազելով եկա:

Եղբայրը նայեց Կոմիտասի թրջված շորերին և ժպիտը խաղաց նրա դեմքին:

— Տան տերը հիմա դու ես: Հայրիկն այլևս

անընդունակ է աշխատանքի: Մնում ես դու: Տե՛ս, լավ կպահես տունը, ախպեր ջան:

Կոմիտասը ոչինչ չէր խոսում: Նա միայն տխուր աչքերով նայում էր եղբորը, երբեմն դլուխը դրականորեն շարժում:

— Շարվի՛ր,—լսվեց հրամանը և բազմությունից անջատվելով մեկնողները չուռպեցին շարվելու:

Կոմիտասի մայրն սկսեց բարձրաձայն հեկեկալ, իսկ հայրը ծխամորճը բերանին՝ մոայլված հանգստացնում էր կնոջը: Կոմիտասը մոքում կրկնում էր եղբոր խոսքերը. «Տան տերը հիմա դու ես: Հայրիկն այլևս անընդունակ է աշխատանքի»: Հանկարծ երկու ձեռքեր օղակեցին Կոմիտասին: Ետ նայեց: Լևոնն էր:

— Ինչի՞ մասին ես մտածում,—հարցրեց Լևոնը:

— Մտածում եմ, թե երբ կվերջանա պատերազմը, որ տովորելու դնամ,—ձեռքերը չվելով պատասխանեց Կոմիտասը:

— Շուտո՛վ, մի՛ մտածիր,—նրա կողքին տեղավորվելով ասաց Լևոնը,—յուրաքանչյուրս մի բան ունենք պատերազմի պատճառով կիսատ թողած...

10·

«Այսուհետև չարունակվում է ռազմաճակատի դիծը»:

Կրկին անգամ կարդաց Կոմիտասը դրծատրանի պատերի ճակատին փակցրած լոզունգը և ներս մտավ, ընդունելով հերթափոխը՝ դրծի դրեց պատգահները:

— Крутится, вертится шар голубой...

Մեքենայի աղմուկի միջից լսվեց նրա ձայնը։

Մի կինոնկար էր տեսել նա, որ երբեք հիշողությունից չէր հեռանում։ Սովետական իշխանության առաջին օրերին Վլադիմիր Իլյիչ Լենինը բոլշևիկներից մեկին բանկում աշխատանքի է նշանակում։ Այդ ժամանակ Պետրոգրադի և Մոսկվայի փողոցներում ռևոլուցիայի համար դեռ կռիվները չարունակվում էին։

Ուշ գիշեր է։ Դեռ չի դադարել հրաձգությունը, բայց նա, այդ բանակցությունը, միայնակ նստել է դրանեղյակում, կարդում է հին պարտամուրհակները և մտածում սովետական ֆինանսական քաղաքականության մասին։ Երկար աշխատանքը նրան հյուծել է, քունը ծանրացել է կոպերի վրա, բայց ինչպե՞ս կարելի է ընդհատել աշխատանքը, ինչպե՞ս կարելի է չհատուցել Վլադիմիր Իլյիչի հանձնարարությունը։ Եվ ահա քունը վանելու համար նա դլխին լցնում է սառը ջուր, թարմանում, նստում դրասեղանի մոտ և երգում.

— Крутится, вертится шар голубой...

Ու նորից չարունակում աշխատանքը։

Շա՛տ տարիներ անցան։ Սովետական երկիրն ամրացավ, հզորացավ։ Բայց սովետական մարդիկ չմոռացան անցած դրկանքները, անքուն գիշերները։ Եվ երբ սկսվեց պատերազմը ու միլիոնավոր մարդիկ հայրենիքի կոչով մեկնում են ռազմաճակատ, թիկունքում՝ գործարաններում, ֆաբրիկաներում, կոլխոզներում, նորից սկսվեցին անքուն գիշերները։

— *Նույնպիսի անքուն գիշերներ ու ծանր օրեր են մեզ համար,—մտածեց նա և պատրաստի արտադրանքը հանեց դազգահից։*

— Դե՛, տղերք, ո՛ւժ տվեք, այսօր պետք է պլանը 500 տոկոսով կատարենք,—դիմեց նա իր բրիգադայի անդամներին:

— Այո՛, պետք է լավ աշխատենք,—պատասխանեց նրան երիտասարդ բանվորներից մեկը:

— Բայց ձեր բրիգադան դեռևս չի ավարտել նոր ցեխի մոնտաժը, որի պատճառով մենք պարապուրդ ենք տալիս,—հանդիմանեց Սեդան, որը մի կենսուրախ, կորովալից կոմերիտուհի էր:

— Ճիշտ է, ընկեր Սեդա,—խորհրդավոր ժպիտով պատասխանեց Կոմիտասը,—անհանդստանալու կարիք չկա, այդ էլ կանենք: Այնպես, որ ձեզ չենք ամաչեցնի:

Սեդան վոքր ինչ հիմնելով՝ գլուխը կախեց: Երիտասարդ բանվորներից մեկը բազմանշանակ հայացքով նայեց իր բրիգադիրին: Սեդան նկատելով այդ՝ ավելի կարմրեց և ամոթխածությամբ հեռացավ նրանցից: Կոմիտասը հայացքով ուղեկցեց նրան և նորից վերսկսեց աշխատանքը:

Գործարանն այդ ժամանակ սկսել էր կատարել մի նոր հատուկ պատվեր: Կոմիտասն իր ընկերների հետ ռազմաճակատ էր ուղարկել հարյուրատ գործարանի առաջին արտադրանքը: Նա իր պլանը կատարել էր 1000 տոկոսով: Կոմիտասի նախաձեռնությամբ ցեխի ճակատին փակցվեց լոզունգ.

«Ցեխից դուրս չգալ մինչև չկատարվի ռազմական առաջադրանքը»:

Տիրապետելով արտադրության տեխնիկային և սովորեցնելով իր բրիգադայի մյուս անդամներին՝ նա ձգտում էր այն բանին, որ բոլորը լրենց պլանները կատարեն ո՛չ պակաս հարյուր տոկոսից:

Անցան աշխատանքի ու պայքարի բուռն օրեր ու գիշերներ: Ճակատային բրիգադան Կոմիտասի գլխավորությամբ ավարտեց նոր ցեխի մոնտաժը և

այն չահագործման հանձնեց Պաշտպանության Պետական Կոմիտեի նշված ժամկետից երկու ամսով շուտ: Մազմանյանը ջերմորեն սեղմեց Կոմիտասի ձեռքը և խանդաղատագին ասաց.

— Պատերազմը վերջանալուց հետո ես քեզ անպայման Մոսկվա կուղարկեմ:

Կոմիտասը Մոսկվա դնալու մասին տրված հեռացավ դիրեկտորի դրասենյակից և ուրախ մտավ իր ցեխը: Այդ ժիջոցին հեռախոսան աղմկեց: Կոմիտասին կանչեցին: Զանգողը Մազմանյանն էր: Նա նոր պատվերներ էր տալիս: Երիզպետերը լսեցին պատվերի մասին՝ խորասուզվեց մտքերի մեջ: Սկսեցին էլ ոչ նոր քննություն էր երիզպետի համար: Ինչ անց՝ եկավ զորանոցի դվխավոր ինժեները՝ բերելով գծագրերը: Կոմիտասը և դվխավոր ինժեները մտանելով սեղանին՝ բացեցին գծագրերը և սկսեցին խորհրդակցել աշխատանքի տեղի և դրաֆիկը կազմելու մասին: Ինժեները Կոմիտասին բացատրեց ցեխերից մեկում նոր արտադրանքի թողարկման համար նախագծված ժամկետը և միջոցառումները:

— Նախատեսում է առաջին արտադրանքը թողարկել մեկ ամիս հետո,— ասաց ինժեները մատիտը թողնելով գծագրի վրա և վոքր ինչ քաշվելով շարունակեց.—համենայն դեպս սա ավելի հեշտ է, քան նոր ցեխի մոնտաժը, որ դուք կատարեցիք ժամկետից շուտ:

Կոմիտասը կանգնել էր լուռ և նայում էր մերթ գծագրին, մերթ ինժեներին: Ճակատային երիզպետի բոլոր անդամները դանդաղ հավաքվեցին Կոմիտասի շուրջը և սպասում էին նրա վճռին:

— Կաշխատենք ավելի շուտ տալ,— երկար մտածելուց հետո պատասխանեց նա: Ինժեները գծագրերը թողնելով ուրախ հրաժեշտ տվեց և հե-

ռայալ։ Այդ ժամանակ Կոմխառսը նայելով իր բրիգադայի անդամներին՝ ասաց.

— Այնպես պետք է աշխատենք, որ ամոթով չլինենք։

Նրանց համար նորից սկսվեցին աշխատանքային վճռական օրերը և անքուն գիշերները։

11.

Բարձրադիր լեռան ստորոտով, վրիվրաշ գետի եզերքով ձգվում էր ոլորապտույտ ճանապարհը։ Շուրջը լուռ էր և ամայի։ Ճանապարհի երկու կողմում բարձրացած կաղնիների, եղևնիների, լորիների և բոխիների սաղարթներն արդեն սկսել էին դեղնել։ Նրանց միջից միայն կանաչին էր տալիս մշտադալար եղևնին։ Աչունը մոտենում էր։ Ուղևորները մոտենում էին Ինձորաշատ գյուղին։ Արդեն նկատվում էր աշխուժություն։ Ճանապարհները լիքն էին մարդկանցով։ Ոմանք լծնում էին կայտան, ոմանք՝ հարևան գյուղերը, իսկ հաստատուն ծառերի տակ հանգստանում էին վերջին դնացքով եկած գյուղացիները։

Սրանք գնիլիմումն էր, երբ Լևոնն ու Ինձորաշատի կոլխոզի կոմերկատական կազմակերպության քարտուղար Գրիգորը հեղվեցին խճուղուց և մոտեցան անտառի թավուտը։ Նստելով մի հինավուրց ծառի տակ՝ Լևոնը պլխարկը հանեց և սրբեց լայն ճակատի քրտինքը։

Գամին չարունակում էր ավալել և հրշյունով քշել վայր ընկնող հատ ու կենտ ոսկեթանգ տերևները։ Լևոնը հիշեց Հյուդմիլային, կամաց սուլեց մի ինչ որ երգի եղանակ և լինքն իրեն չննջաց.

— Պատերազմի ժամանակ էլ կարելի է սիրել...

Գրիգորը, որ ուշքն ու միտքը սրված չարունակ լսում էր Լևոնին, բայց չէր թողնում ոչ մի խոսք, հետաքրքրությամբ նայեց նրան և ինչ որ քան էր ուզում ասել, բերանը կիսաբաց լսեց: Լևոնը նկատելով այդ խնդուն հարցրեց.

— Ինչ կա, Գրիգոր, բան էիր ասո՞ւմ:

Գրիգորն ամոթխածությունից մինչև ականջները կարմրելով կմկմաց.

— Այո՛, ընկեր Վահանյան, ուզում եմ, որ մինչև մութն ընկնելը մտնենք մեր կոլխոզի մյուրինյան այգին: Մի տեսեք իմ բրիգադայի աճեցրած մյուրինյան տեսակները:

— Կարդացել եմ, Գրիգոր ջան, «Սովետական Հայաստան» թերթում կարդացել եմ,—հանդիսատ պատասխանեց Լևոնը և ձեռքը դնելով Գրիգորի ուսին՝ ավելացրեց,—դե, որ ասում ես, գնանք, տեսնենք:

Ինչ հետո նրանք մտան այգին:

— Երբ ծաղկում են մեր այգիները,—մյուրինյան պտուղները ցույց տալով՝ ոգևորված պատմում էր Գրիգորը,—մանք դյուղում ասում են. «Եթե ցուրտը չվախեցնի, տանձի ու խնձորի բերքը ծով կլինի»: Այժմ մեր բրիգադայի աճեցրած ցրտադիմացկուն խնձորները տարածվում են ամենուրեք և կոլխոզնիկներն այլևս չեն վախենում ցրտից:

Գրիգորը փոքր ինչ լուռ, ապա նայելով Լևոնին՝ չարունակեց.

— Եթե Մյուրինը հյուսիսում խաղող աճեցրեց...եթե Մոսկվայում, Լենինգրադում աճեցնում են մրգի նոր տեսակներ, բանջարանոցային նոր կուլտուրաներ, ինչո՞ւ մեզ մոտ չենք կարող անել...

Նրանք անցնում էին ծառերի մոտով, որոնք առաս անքում էին պտուղների ծանր բեռան տակ։ Շատ ծառերի ծանրացած ճյուղերը լինել, նառել էին գետնի վրա։ Շատերի ճյուղերի տակ հենակներ էին դրված։

— Ա՛յ թե տղերքը գային այս աշնանը,—վերջացրեց իր պատմությունը Գրիգորը, երբ նրանք արդեն անցան այգին և գյուղ մտան։—Ա՛յ, մի ճաշակելին մի՛շտ ուրիշների այգուց...

— Կգա՛ն, Գրիգոր, կգա՛ն,—լուռ վիճերն ուղղելով պատասխանեց Լևոնը։

Կոմերիտական դունդց ժողով էր։ Եկել էին նաև գյուղի հասակավորները, ծերերը, կանայք։ Ժողովի նախագահը ձայնը տվեց Լևոնին։ Վերջինս պատրաստվել ամբոնին և նույն հանդարտությամբ էլ սկսեց խոսել Փաշիանների կայծակնային պատերազմի ձախողման մասին։ Բոլորը շնչերը պահած լուռ լսում էին։ Լևոնը, որ սկզբում խոսում էր մեղմ, մի վայրկ էլ ցածրաձայն, հետզհետե բարձրացնում էր ձայնը։ Նա աշխատում էր որքան հնարավոր է խոսել պարզ, հասկանալի լեզվով։ Առնչ-առնչ վերցնում էր թերթերը, կարդում էր հատվածներ, թե ինչպես Փաշիանական հրամանատարությունը քանի դնում, փոխում է Մոսկվան գրավելու պլանը և թերում էր թվեր, թե այդ ուղղությամբ որքան կորուստներ են տվել Փաշիանները։ Մի ծերուն, որ նստած էր առաջին շարքում, իր բարի ու հեզ աչքերով այնպես էր նայում խոսողին, որ թվում էր, թե

յուրաքանչյուր բառը աչքերով էր արտասանում, բարձր և հանդարտ ձայնով ասաց.

— Հլա Հիտլերն ու իր դժվիները շատ կխոխեն իրենց պլաններըը: Մոսկվան Փարիսանների կուռ տալու պատառը չէ: Ինտեր Ստալինն ա նստած:

Վերջում մի պատանի չկարողանալով իր հուզմունքը զսպել՝ տեղից իր տուր ձայնով բացատրեցնեց.

— Կեցցե՛ Ստալինը: Կեցցե՛ կարմիր Մոսկվան:

Դահլիճում եղածներից ոչ ոք էլ չզգաց, թե ինչպես ինքնաթերթաթար հուզմունքն ու ոգևորությունը էլեկտրական հոսանքի նման անցան ներկաների միջով և բոլոր ժողովականներըը մի մարդու նման տոքե կանգնեցին: Ու պատրնդատան ծառերի միջից հնչում էին.

— Կեցցե՛ Սովետական Բանակը:

— Մա՛հ գերմանական զավթիչներին:

Լևոնը լուռ կանգնած՝ արծվային հայացքով նայում էր հուզված ժողովականներին և ինքն իրեն ասում. «Ո՛չ, մեր ժողովուրդն անպարտ է»: Երբ ծափահարությունները, բացականչությունները ու լողունգները դադարեցին, բոլորի հայացքները նորից ուղղվեցին Լևոնի կողմը: Նա իրեն հավաքեց, ձեռքերն առաջ պարզելով, որքան ուժ ուներ, բարձրաձայն ասաց.

— Մոսկվան եղել է՛, է՛, և կմնա սովետական: Այս պատերազմում մենք կհաղթենք: Մեր հայրենիքը պատերազմում է մեծ Ստալինի դեկավարությամբ: Պատերազմում սովետական բոլոր ժողովուրդները մարտնչում են ուսս մեծ և անպարտելի ժողովրդի օրինակով: Ուսս ժողովուրդը պատմության մեջ մինչ էլ վտանգով ու հաղթանակով է դուրս եկել:

— Կեցցե՛ ռուս մեծ ժողովուրդը,—նորից պոչեց նույն պատանին և ծափ տվեց: Նրան հետևեցին դահլիճում եղածները: Աղջկան նստած ծերունին շուռ գալով, ակնհայտորեն դոնում էր պատանուն, բայց նրա աչքերը հեռվից չնկատեցին նրան: Եվ հայացքն ուղղելով Լևոնի կողմը ասաց.

— Ապրի՛ Սիմոնի թոռը: Կոմսոմոլ է, ի՛նչ տեղին խոսքեր է ասում, մարդու քեֆը գալիս ա:

— Հա՛,—ծերունուն արձագանքեց կայարանում իր որդուն բանակ ուղարկող այն պատանի Հովհաննես, որ այնպես անեծքի տարափ էր տեղում Հիտլերի ու պատերազմ մաղձողների հասցեին,—ի՛նչ կոմսոմոլ է էդ Սիմոնի թոռը: Տասնըվեց տարեկան չկա, ուզում է բանակ գնալ: Անցած օրը կոլխոզի նախագահին ասում է. «Ընկեր Սրապ, քաղաքյանը սրտից է, ոչ թե՝ տարեքից»:

— Էդ մեկը ճիշտ է,—կարճ կապեց ծերունին և ակնապիշ նայեց Լևոնին:

Զեկուցողից հետո կանաչ մահուդով ծածկված սեղանի եռևից բարձրացավ ժողովի նախագահի՝ Գրիգորի պարթև հասակը: Նոր էր լրացել նրա քսան տարին, բայց այնքան հաղթանդամ էր և առնական, որ նայողներն ուղղակի հիանում էին: Գրիգորը իր դյուցազնական ազ ձեռքը բարձրացնելով օդի մեջ՝ ասաց, որ ամեն ինչ պարզ է: Սովետական ժողովուրդը, ազատասեր մարդկությունը Մոսկվայի հետ է: Եվ մի պահ կանգնելով՝ լայն ու դեղեցիկ ճակատին ձգելով երկու հատ կնճիռ, շրնդուն ձայնով ասաց.

— Մենք, թիկունքայիններս, պետք է գործով ցույց տանք, որ սրտով Մոսկվայի հետ ենք: Ես Մոսկվայի պաշտպանության համար տալիս եմ քսան չերվոնեց: Մրցման եմ հրավիրում կոմերիտական ընկերներիս,—և թվեց մի քանիսի անունազգանունը:

Ծանրերից հետո, նստած տեղից վեր բարձրացավ պատկառելի ծերունին և դողդոջ ձեռքը պարզելով դեպի ժողովի նախագահը՝ ասաց.

— Մոսկվան մենակ չահելների համար չէ: Մեր բոլորիս կյանք ու արևը փրկողը Մոսկվան ա: Մենք, ծերերս, որ խոսքը Մոսկվային է վերաբերում, չահելներից ետ չենք մնա: Ինձ էլ գրիր տասնհինգ հեղևոնոց:

— Դրուստ ես ասում, Օհան ախպեր, մեր հույսը, մեր կյանքի լույսը Մոսկվան է ու էնտեղ նստած Ստալինը: Ես Ստալինի չանին մատաղ, նա կլինի մեր ժողովրդին էս կրակից ազատողը:—Գրաֆը տմբտմբացնելով ծերունուն լրացնում էր Սոնան:—Ա՛խ, հիմի ուր է իմ Լիպոն: Օհան ախպեր աստ թող մի տասը հեղևոնոց էլ ինձ գրեն: Ես քեզ նման լեզու, բերան չունեմ, որ քեզ նման աշուշ ճառ ասեմ: Հա՛, յամանն է էս Օհան ախպերը, չահելներից ետ չի մնում: Զորս տղա ու թոռ է ղրկել, պողպատի նման ղրնդում է:

Ե՛վ կոմերիտականները, և՛ ներկա հասակավորները, ծերեր, կանայք, ծափահարեցին Գրիդորի կոչին և բոլորը Մոսկվայի պաշտպանության նվիրեցին իրենց վաստակած հեղևոնոցները:

Սրահը, որ նստած էր առաջին շարքում, ծերունուց մի փոքր հեռու և լարված լսում էր խոսողին, երբեմն ոտի էր կանգնում, ծափահարում ու նստում իր տեղը, կոկորդը մաքրելով ասաց.

— Կոմերիմիությունը մեծ ուժ է ռազմաճակատում, մեծ ուժ է թիկունքում: Ճիշտ որ Մոսկվայի պաշտպանության համար ոչ մի բան չպետք է խնայել: Ես էլ, որպես հին կոմերիտական,— այս խոսքերն ասելիս նրա առնական դեմքին փայլեց մի ժպիտ,—նվիրում եմ քառասուն հեղևոնոց, իսկ մեր Ինձորաշատի կոլխոզը Մոսկվայի պաշտ-

պաննելին հինգ տոննա խնձոր կնվիրի մեր Գրիգորի մխիթարության այգուց...—և դեռ խոսքը չէր ավարտել, հորս կողմից վրա բերին.

— Ինչո՞ւ մխայն խնձոր:

— Յո՛ւղ էլ, պանիր էլ:

— Նվերնե՛ր:

Սրտալը շուռ գալով դեպի առաջարկողները՝ պատասխանեց.

— Ձիշտ եք ասում, շատ բան ենք ուղարկել և պետք է ուղարկենք: Լավ կլիներ, որ ընկեր Լևոնն ու Գրիգորը մոսկվացիներին մի նամակ էլ գրեին մեր դյուղի անունից:

Ժողովից հետո կոլխոզի նախագահը, Լևոնը, Գրիգորը և դյուղի գլխավորը մնացին ակումբում: Այդ միջոցին Լևոնին մոտեցավ Սոնան և մայրաբար ասաց.

— Լևոն ջան, բա չե՞ս գա մեր տուն, Լիպոյիս տունը:

— Կգա՛մ մայրի՛կ, կգամ անպայման: Մխայն թե հիմա մենք պետք է նամակ գրենք մոսկվացիներին:

— Հա՛, գրեք, ես մոսկվացիների հարը տանեմ, իմ անունից էլ նրանց ասեք, որ էդ մարդագործներին լավ ջարդեն, մեր երկրի երեսից բնաջինջ անեն,—և հառաչելով, շալը ուսերին բարձրացնելով՝ քայլերն ուղղելով դեպի դուռը, հեռվի վրա շուռ եկավ և ասաց.

— Հենց էդպես, լրար հետո եկեք:

13.

Գիշերվա կեսն էր: Գյուղն ընկղմված էր խոր քնի մեջ: Մխայն քամին էր մերթ ընդ մերթ բախում ակումբի փողարկված լուսամուտները և նեղում եղածներին տոխպում աշխատանքը մի պահ

զարթեցնել, ունկնդրել նրա ձայնին: Վերջապես Լևոնը գլուխը բարձրացրեց և նրա բորբոքված դեմքին երևաց վաստակած մարդու գոհունակության արտահայտությունը: Մնացածները սպասողական վիճակում ակնապիշ նայում էին նրան: Լևոնը կոկորդը մաքրեց և սկսեց նամակի ընթերցումը.

«Թանկագին հերոսական մոսկվացինե՛ր և Մոսկվայի պաշտպաններ: Մեր կոմերիտական ժողովում մենք խոսեցինք ձեր մասին և կարոտով հիշեցինք ձեզ, ձեր հերոսական սխրագործությունները: Դուք արդեն հարկադրել եք հիտլերյան հրամանատարությանը փոխել մեր սիրելի, մեր թանկագին Մոսկվան գրավելու պլանները: Այն դիվիզիաները, բանակները, որոնք գալիս էին Մոսկվայի վրա, նրանցից շատերն արդեն ջախջախվել են և իրենց գերեզմանն են գտել Մոսկվայից շատ հեռու, և դեռ շատերը պիտի ջախջախվեն: Այդ վեհ գործի մեջ դուք ունեք ձեր անգնահատելի բաժինը: Ամեն օր մենք լսում ենք, կարդում ձեր հայրենասիրության, անձնազոհության մասին: Ձեզ է նայում ամբողջ աշխարհը: Չե՞ որ ձեզ հետ է, ձեր քաղաքումն է մեծ առաջնորդը՝ Ստալինը: Մոսկվայի տակ վճռում է ոչ միայն ձեր բախտը, Սովետական Միության ժողովուրդների բախտը, այլև ամբողջ ազատասեր մարդկության բախտը: Մոսկվան մեզ համար նույնքան թանկ է ու հարազատ, որքան և ձեզ:

Մոսկվան մեզ՝ կոմերիտականներիս համար ամենատպեղեցիկ ու պայծառ ներկան է ու ապագան, մեր ձգտումների, մեր երազանքների օրրանը:

Կեցցե՛ մեր հարազատ Մոսկվան: Կեցցե՛ն մեծ Մոսկվայի հերոսական պաշտպանները: Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»:

Լևոնը կարդաց նամակը և չիմանալ այրվող ճակատը լուռ սպասում էր ներկանների դիտողութիւններին: Նրա հարցական հայացքը սահեց ներկանների վրա: Կոլմոզի նախագահն դեմքին մի հիացական ժպիտ բացվեց և ուսերը թոթվելով ասաց.

— Էլ ի՞նչ կարելի է ասել, ամեն բանը ուղղին է:

— Սրտներից ջուր խմեց,—նախագահին արձագանքեց Գրիգորը:

— Իրր թե մենք էստեղ նստեցինք, որ մխային պրե՞նք,—քմծիծաղ տվեց դարբոցի դիրեկտորը, որը մի փոքր կարճատես էր և շուտ-շուտ դեպի քթարմատն էր մղում ակնոցը:

— Ինչո՞ւ եք այդպես ասում,—ընդհմախոսեց Լևոնը դիրեկտորին,— ընկեր Զարդարյան, մի՞թե դուք քիչ բան արեցիք: Ըստ իս սա ևս ձեռքբերում է, մենք առավոտյան մեկ անգամ էլ կհավաքվենք, կկարդանք, ուղղումներ կանենք և տալա կմտածենք թարգմանելու մասին:

— Կարծում եմ,—ցնծագին բացականչեց Զարդարյանը և ակնոցը մղեց դեպի քթարմատը,—ռուսերեն ավելի լավ կհնչի: Ռուսական լեզուն մարտական, հզոր լեզու է: Ես ինքս կթարգմանեմ:

Ակումբի վարիչը, որ մի կլոր ու սև աչքերով աղջիկ էր և նոր էր անցել աշխատանքի, հիացական արտահայտությունը դեմքին իր պայծառ հայացքը փոխադրում էր մերթ այս, մերթ այն խոսողի վրա:

— Հիշո՞ւմ եք, ընկեր Վահանյան, այն պարթևաբանչ, առնական դեմքով ուրախ երիտասարդին՝ Սրշակին, որը պատերազմի երկրորդ օրը բանակ մեկնեց,—հարցրեց Գրիգորը:

Լևոնը խորտակել նայելով ակումբի վարիչին՝ ասաց.

— Այո՛, կարծես թե հիշում եմ... ապա աչքերը կկոցելով և իրոք մի բան հիշելով, Գրիգորի ականջին շշնջաց. «Սա Աշխարի սիրած աղջիկը չէ՞, որ տպաներն ասում էին...»:

Ակումբի վարիչն զգաց, որ խոսքն իր մասին է և ամբողջովին կարմրեց:

— Նամակ ունե՞ս,—հարցրեց Լևոնը:

Աղջիկն արդեն դիտեր, թե խոսքը ինչ նամակի մասին է և դասը լավ սերտած աշակերտի նման վրա տվեց.

— Այո՛, ունեմ, ընկեր Վահանյան: Նա պրոմ է, որ երկու անգամ արդեն աչքի է ընկել կռվում և հրամատարության կողմից շնորհակալություն ստացել:

— Ուրախալի է, ուրախալի,— հրճվանքով ասաց Լևոնը:

Երբ նրանք թողին ակումբը և դուրս եկան մթամած բակը, Գրիգորի և կոլխոզի նախագահի մլջև վեճ սկսվեց, թե Լևոնն ո՞ւմ տանը պետք է դիշերի:

— Ջուր տեղը մի անհանգստացեք: Ես գնում եմ Սոնա մայրիկի տուն: Նրան խոսք եմ տվել: Նա տանն ինձ կսպասի:

— Պատավ կնիկ է, հիմա քնել է, չարժի նրան անհանգստացնել, առավոտը կանցնենք,— ասաց Սրապը:

— Ո՛չ, ես հավատացած եմ, որ կսպասի,— եղավ Լևոնի վերջին խոսքը:

— Բայց նրա տունը հե՛ռու է, ճորի պռնկին,— քրթմնջաց Զարդարյանը:

— Թե որ ուզում է, տղերք ջան, դուք տա-

բեք, ես մի աչք տամ դոմերին, խոտի դեզերին ոս գամ,—հարցեց Սրտալը և բաժանվեց նրանցից:

14.

Գամին հանդարտվեց և մխանգամից սկսվեց անձրևը: Պառավ Սոնան լսում էր անձրևի խշշոցը, էլեկտրական պայծառ լույսն տակ արագ-արագ շարժում էր ճաղերը և գործում բրդյա ֆուֆայկա: Ժողովից հետո նա սուն վերադառնալուն պես էր դաղդոջ ձեռքերով բաց արեց հնամյա մեծ սընդուկը և նրանից դուրս բերեց Լիպոյի երկարաճիտ կոշիկները, գինվորական ոսկեդույն կոճակներով բլուզը, կապույտ գալիֆեն և արտասվելով ինքն իրեն խոսեց. «Ձեր սիրտը մատաղ լինեմ: Յարաբ մեկ էլ կտեսնե՞մ, որ դա ձեզ հագնի: Վա՛յ, կռիվ հնարող, քո մուրազը քո փորը մնա: Չէ՛, լացը լաց էլ կբերի: Սխալ ես նրան էն խոսքերով ճամփա դրեցի, որ հիմի պետք ա սիրտս ամուր պահեմ: Սնաներ մնա, կռիվը նրա համար ա, որ մայրերը ամենից շատ դարդ ու ցավ տեսնեն: Էդ մեծ դարդին ու ցավին մոր սիրտը որ չդիմանա, ուրիշը էլ դիմանա: Դե, Սոնա, դիմացիր ու աչքիդ արցունքն էլ սրբիր: Ինչ անենք, որ թշնամին տալ մեր հողի վրա է դրել: Պետք ա էդ անիծած տալ կտրել, թե չէ նա իր արնոտ կրունկը կդնի մեր վզին ու հավետյան նրա խեղճ դերին կդառնանք: Հայրդ անպատմ մահը լալ ա, քան դերու կյանքը»:

Այս խոսքերը վերջացնելուց հետո նույն դրությանքով, նույն սիրով հանած երկարաճիտ կոշիկներն ու հագուստները տեղը դրեց, հառաչելով փակեց սնդուկը և ասաց. «Երանի էն օրը, որ Լիպոն կգա ու էդ ժամանակ բաց կանեմ սնդուկը»:

Նա այդ արարողությունը կատարում էր ամեն օր՝ քնելուց առաջ: Բայց որովհետև Լևոնը խոստացել էր իրեն՝ Սոնա մայրիկին այցելել այդ երեկո, ուստի նա ավելի շուտ կատարեց իր նվիրական աշխատանքը և ճաղերը վերցնելով սկսեց դուրս գալ: Նա թե՛ դուրսպա, թե՛ ձեռնոց և թե՛ ֆուֆայկա զգեցնելիս մտածում էր՝ ո՛վ է իմանում էս դուրսան կամ էս ձեռնոցը բաժին չե՞ն ընկնի իր Լիպոյին:

Ամեն անգամ այս միտքը գլխով անցնելիս պղչման և ամոթանքի մի արտահայտություն էր տեղում նրա խորշոմախիտ դեմքի վրայով և նա հանցանք գործողի նման շշնջում էր. «Մեկ էլ՝ Կռվի գաշտում բոլորն էլ իմ Լիպոյի նման հոր ու մոր զավակ են: Յա նրանք են հպարտ, յա՝ Լիպոն: Մեր սուրբ պարտքն էն ա, որ քանի չունչ կա բերաններումա, մինչ որ ձեռներից կգա, անենք ու պրկենք նրանց»:

Գիշերը խորանում էր և անձրևը սեղում էր նույն սաստկությամբ: Դրսից հասնում էին արդեն փողոցներում խոխոջող առվակների և կտուրներից հոսող անձրևաջրի ձայները: Պառավի համար կարծես ժամանակը քարացել էր: Նա անհամբերությունից նեղվում էր: Մի՞թե էլ պարս Լևոնը: Գոնե կգար, կխոսեինք Լիպոյի մասին, ցույց կտայի Լիպոյի նամականները, նա կկարդար և իր ականջին նորից կհասներ հարազատ որդու խոսքերը:

Նա պրեֆե հույսը կտրել էր: Տղայի պրասեղանին, որը պրված էր սենյակի վերևի աջ անկյունում, թկթկում էր պարզնեցնող ժամացույցը, որը ցույց էր տալիս ժամը երկուսը: «Չէ՛, չէ՛, էլ պա» պառնորեն շշնջաց պառավը և մոտեցավ պատրաստած անդանին, որի վրա նա պրել էր տապակած հավ, մի փոքրիկ շիշ կոնյակ, թթու վա-

բուեր և խնձոր: Նա այդ պատրաստությունը տեսել էր ժողովից առաջ, երբ իրենց հարևան ծերուն Սիմոնի կոմերիտական թոռը հայտնել էր Լևոնի դյուղ գալու մասին: Պառավը մի պահ կանգնած սեղանի մոտ, նայում էր և չդիտեր ինչ աներ: Սաստիկ հոգնած էր, քունը ծանրանում էր նրա կոպերին, բայց դեռ ինքն իրեն պահում էր, ու հաճախ կրկնում՝ «Չէ՛, որ ասել է, կգա: Կամամոլի խոսքը իր գլխից վեր է: Ին օրը, որ Լիպոյին ճամփու դրեցի, քիչ մնաց ուշաթափ լինեի: Նա որտուս պես դրկից ինձ, որտուս պես էլ տարավ իրենց տուն, մի օր էլ պահեց ու ամաոյով ճամփու դրեց: Մերն էլ անդին կլոր է: Իդախի մերը էդախի էլ տղա կունենա: Ին օրվանից ոնց որ սիրտս ճեղքեն ու Լևոնին մեջը դնեն: Թե առաջ մի տղա ունեի, հիմի՝ երկուսը: Բա որ մեր Սդամն կայարանում ասաց. «Տատի, որ բոլորը դնան կռվի, էլ ո՞վ կմնա թիկունքում», խելքս բան չէր կարում: Դուստա ա, դուստա: Ինչ կլիներ մեզպես-ներն հալը, եթե թիկունքում Լևոններ, Սրապներ չլիներին»:

Ել նա այնպես էր սրտանց ցավում Լևոնի համար, թվում էր, թե իր Լիպոն էր բանակից վերադարձել և տուն չի գալիս: Նա նորից վերցրեց աթոռի վրա դրված ֆուֆայկան և ուզեց շարունակել իր աշխատանքը, բայց գլխից, որ ընդարմացած մատների մեջ այլևս ուժ չկար: Նա ավելի հուզվեց և չդիտեր ինչ աներ: Հանկարծ այդ մելջոցին նրա մտքով անցավ, որ դուրս գա և գնա ակումբ: Եթե այնտեղ չլինի, շտապի Գրիգորենց տուն և անպայման, ինչ էլ ուզում է լինի, գտնի Լևոնին: Առանց նրան տեսնելու չի կարող այդ գիշերը լուսացնել: Նա արագ հագավ իր վերարկուն, գլխին փաթաթեց բուդյա շալը և ուզում էր

մտածել դռանը, երբ ականջին հասան սկըզբում թույլ, ապա ուժեղ ոտնաձայները: «Եկա՛վ» դուրս թռավ պատավի ցամաքած շուրթերից, բայց ականջներին չէր հավատում: Վերջապես նա լսեց դռան թակոցը: Ինքն էլ չիմացավ, թե ինչպես ոտնեց դեպի դուռը և դողացող մատներով բաց արեց փականը:

Առաջինը թրջված ներս մտավ Լևոնը: Սոնան ձեռքերը կարկատեց դեպի նա և հարցաց մոր նման ամուր ըրկեց:

— Ա՛խ, ինչ լավ արիր, որ եկար, սիրտս ճաքում էր, բայց: Ես է, ես էլ պակիս էի: Մտքումս ըրել էի՝ ուր էլ լինելիր, էս գիշեր քեզ պետք է գտնեի: Դե, մոտ արի: Վո՛ւյ, քուռանամ ես,—ըսչեց նա, տեսնելով, որ եկվորները թրջված են: Գրիգորը խանդաղատոտին նայում էր պատավին և ժպտում: Ներանք դեռ չէին նստել, երբ պատավը նեռվեց դեպի սնդուկը և այնտեղից հանեց Լիպոյի քիչ առաջվա խնամքով ըրված շորերը, ըրանց հետ մի մոխրագույն կոստյում և ներանց դիմելով ասաց:

— Տղերք ջան, հանվեք, Լիպոյիս շորերը հագեք: Դուք էլ իմ Լիպոն եք:

Ներանք երկար ժամանակ համառում էին, բայց Լևոնը տեսնելով, որ Սոնա մայրիկը խորապես վշտանում է, դիմեց Գրիգորին.

— Դե, շուտ հանվիր, որ մայրիկն ասում է, պետք է կատարել նրա ցանկությունը: Ջէ՞ որ մեծին չպտղի ոտը քարին կդա,—և առաջինը ինքը հանեց իր ամառային վերարկուն, պիջակը, որոնք

թրջվել էին: Նա թխկուն քին պատմ էր անձրևաջրի սառնության: Սոնա մայրիկը կուացավ, ուզեց Լևոնի ցեխոտված կոշիկների քուղերն արձակել:

— Ի՞նչ ես անում, մայրի՛կ, — սրտնեղեց Լևոնը և ոտքերը քաշեց իրեն:

— Դե՛ լավ, որ չես թողնում, ինքդ հանիր, էս է ջուր բերեմ, լվացեք ոտներդ:

Լևոնը, որ Գրիգորին շատ անպատմ էր հարցրել Սոնայի վիճակի մասին և շատ բան լսել, ներս տաղերից հետո պզայց, որ, հիրավի կոլխոզը նրան շատ ու շատ բանով է օգնել: Սոնա մայրիկը պղնձյա մի մեծ աման դնելով ներքած հատակին, Լևոնի ոտերի մոտ, ինչ որ բան հիշելով, հարցրեց:

— Բա ո՞ւր է Սրապը, ինչո՞ւ չեկավ:

— Սրապը՞, Սրապը կգա, — պատասխանեց Գրիգորը,—ու նրան չդիտե՞ս, մինչև պահեստները, խոտի դեզերը, դոմերը աչք չտա, պահակներին չտուզի, չի հանգստանա:

— Հա՛, հա՛,—հառաչեց պառավը,—մարդը ոչ դիշերն է հանգստանում, ոչ՝ ցերեկը: Ախր, շատ ապրի մեր Սրապը: Թե՛ կոլխոզն է լավ ղեկավարում, թե՛ բանակ դնացածների ընտանիքներին: Մեր ազուն ինքը տարավ Ջալոց, ապրց, ինքն էլ բերեց: Մի խոտքով վառելիքից սկսած, մինչև կովի կերով ապահովել է ու ամեն անգամ ասում է. «Մայրի՛կ, ոչ մի բանի մասին էլ մի մտածի: Մինչև էլոտյի գալը քեզ տպայությունը կանեմ»: Մենակ հո ինձ հետ չի էպլես, ամենքին էլ, ամենքի համար էլ ախր պես կանդնած ա:

Մինչև նրանք իրենց շորերը փոխեցին և լվացվեցին, հայտնվեց նաև Սրապը և պառավի ուրախությանը կրկնապատկվեց:

Կոմիտասի երիտասարդական ճակատային բրիգադան աշխատում էր երկու հերթ՝ տասնվեց ժամ։ Անցնում էին օրեր ու դիշերներ, և գործարանի չքամուտքի մոտ, վիթխարի ցուցատախտակի վրա բարձրանում էին նրանց բրիգադայի պլանների կատարման տոկոսները։ Բայց նա ներքուստ տխուր էր, որ Սեդան այլևս գործարանում չէ։ «...Սանենք, ոչի՛նչ,—հանգստացնում էր Լրեն,— չէ՞ որ Սեդան այժմ չրջկոմում է աշխատում և, հավանաբար, կտեղեկանա այս մասին»։ Ու նրա սիրտը համակվեց մի սիրուհի զգացում։ Ընդմիջումներին Կոմիտասը, իր սովորության համաձայն, մոնում էր հարևան դեխը, այն բրիգադան, որտեղ առաջ աշխատում էր Սեդան։ Նրան մի առանձակ հարսպատ էին այնտեղ բոլորը...Սեդան հաճախ էր գալիս գործարան, յինում էր բրիգադաներում, երիտասարդների մոտ։

— Հը՛, լա՞վ ես զգում այսօր,—կատակով հարցնում էին Կոմիտասի ընկերները,—Սեդան եկել է գործարան։

Այդպիսի մի օր հարևան դեխերից մեկում աղմուկ բարձրացավ։ Բանվորները, ծառայողները չսասկեցին դեպի աղմուկը։ Հնոցը պայթել էր։ Աշխատանքը կանգ էր առել։ Հնոցը վերանորոգելու համար պահանջվում էր մի քանի շաբաթ։ Հավաքվեցին բոլոր մասնագետները և խորհրդակցում էին, թե ինչպես անել, որ ինչքան հնարավոր է՝ արագ գործարկվի հնոցը։ Ամեն մեկն իր կարծիքը հայտնեց, իսկ Կոմիտասը վերցնելով համապատասխան գործիքներն ու կաշվե ձեռնոցները, վառնդի ենթարկելով իր կյանքը, նետս մտավ թեժ հնոցի մեջ։ Բոլորը շնչները պահած հետևում էին

Կոմխառնի չարժումներին: Նա պոռտականներն արագորեն ամբացրեց հնոցի առաստաղին և դուրս եկավ գլխի մտքերն ու հոնքերը խանձված, դեմքի մաշկը կարմրած:

— Այրվե՛լ է...—բացատրեց մեկը: Ինչ հետո Կոմխառնը ուշաթափվեց: Նրան օգնության հասավ գործարանի բժիշկը: Մինչև երավ շտապ օգնության ավտոմեքենան, Կոմխառնն ուշքի եկավ: Նրա գլխավորությամբ խանդնած էին գործարանի դիրեկտորը, Լևոնը, Սեդան և բանվորներ:

— Մեռցրեք էլեկտրական հոսանքը: Հնոցն այժմ կաշխատի,—այրված ձեռոցները հանելով ասաց Կոմխառնը:

Էլեկտրական հոսանքը մեռցնելուց հետո Կոմխառնը չհեռացավ, մինչև հետզհետե վիկացան հնոցի պատերը, և բանվորները հնարք էցնելով նրա մեջ՝ ծածկվելին դուռը:

— Ա՛յ, հիմա կարելի է հեռանալ,—բժշկի զայրացկոտ դեմքին նայելով ասաց Կոմխառնը:

Սեդան նայեց Կոմխառնին: Ասես ուժ առած գլանից, նա ոտքի կանգնեց և ուզում էր իր ցեխը պնդել, բայց նորից հանդիպելով բժշկի զայրացկոտ հայացքին, ձեռքը բացատարար թափահարելով ասաց.

— Դե լա՛վ, այրվածք է, կանցնի: Ի՞նչ եք անհանգստանում:

Բժիշկը մի քանի օր թույլ չտվեց Կոմխառնին աշխատանքի դնալ: Վերջինս կտրականապես առարկում էր նրան, ապելով, թե այսպիսի օրերին ինչպես կարելի է բացակայել գործարանից: Սեդան գրեթե ամեն օր լինում էր Կոմխառնի մոտ, հետաքրքրվում նրա առողջության վիճակով:

Մի անգամ Սեդան մոտավ գործարան: Այնտեղ էին Մազմանյանն ու գլխավոր ինժեները, որոնք

լուսամփոփի տակ կարդում էին ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը:

Նրանց դեմքին փայլեց երջանկության ժպիտը: Երկրի անվանի մարդկանց հետ Լենինի հքանշանով պարգևատրվել է նաև իրենց գործարանի կոմերիտական բրիգադը Կոմիտասը: Անժամանակ, երկար ու հանդիսավոր հնչեց գործարանի զանգը: Բոլորը չսպասեցին ընդարձակ բակը: Մթնում էր:

— Այսօր մեզ համար նշանավոր օր է,—հուզված դիմեց հավաքվածներին Մատմանյանը,—ռազմական հատուկ պատվերները հաջողությամբ կատարելու համար Լենինի հքանշանով է պարգևատրվել մեր սիրելի Կոմիտասը...Դեռ մի պարգեվը չտացած՝ նա ներկայացված է նոր պարգևի: Հնոցի գործարկման համար նա ցույց տվեց անօրինակ ախտադրծություն...

Սեդան մխոնդից չտպեց հիվանդանոց: Կոմիտասն իրեն լավ էր զգում: Սեդային նա դիմավորեց բավկաթուրն նստած: Պարգևատրման լուրը Կոմիտասին հայտնել էր հիվանդանոցի բժիշկը և ժպտալով կատակել.

— Այ դու կամակոր տղա, այնուամենայնիվ բժշկին պետք է լսել...

Սեդան սրտանց շնորհավորել Կոմիտասին՝ նստեց նրա կողքին:

— Ես կարծում էի, թե հրկկում առաջ քաշվելուց հետո այլևս գործարան չես գա,—ասաց Կոմիտասը սիրալիր նայելով Սեդային:

— Մի՞թե,— կարմրատակելով պատասխանեց Սեդան:

Նրանք նորից լռեցին: Երկուսն էլ մտածում էին մի բանի մասին, բայց չէին կարողանում

բարձրաձայն արտահայտվել: Կոմիտասը առաջինը համարձակությունն առանալով՝ ասեց.

— Իմ կյանքը պարզ է: Ինձ դաստիարակել են սխոնեական կազմակերպությունը, կոմերիտմիությունը: Ես նայում եմ իմ ապագային հաստատ, Կվերջանա պատերազմը, կդնամ սովորելու: Մազմանյանն ինձ կուղարկի Մոսկվա, ինժեներ կդառնամ... Դու ինձ հասկանում ես, Սեդա...

— Այո՛, Կոմիտաս, դիտեմ, որ դու կհասնես այդ բոլորին... Կվերջանա պատերազմը, ես էլ կդնամ սովորելու, պարտիական աշխատող կդառնամ...

— Պատերազմ, պատերազմ..., — ասաց Կոմիտասը: Դեռ չեն բուժվել առաջին պատերազմի վերքերը... Երբայրս դնաց և նամակ չկա, — ու մի խոր հոգոց քաշելով շարունակեց, — նա ծնվել է այն պահին, երբ ասկյարը հրացանի խղակոթով խփել է մեր դռանը, ցանկացել է մեր ամբողջ ընտանիքը սրի քաշել: Այդ ժամանակ հայրս չաոերի հետ բարձրացել էր սարերը: Տանը մնացել էին մայրս և տատս: Այդ պահին բակում հարայհրոց է ընկնում: Մի պատառ լվին առաջ է ընկնում, տղերամս, որ խնայեն երեն ու զավակներին... Թյուրքերից մեկը պատխոտոց է անում պատառվին... Սկսվում են աղմուկ, աղաղակ: Մեր տուն մանող թյուրքն էլ թողնում է ու հեռանում: Այդպես ժամանակ է ծնվել նա... Ա՛խ, — հառաչեց Կոմիտասը, և ամուր սեղմելով Սեդայի ձեռքը, ուզում էր էլի ինչ որ.բան ասել: Բայց նրան կանչեցին վիրակապության: Սեդան հուզմունքից մինչև ականջները կարմրատակելով՝ վերադարձավ քաղաք:

Սաամլատյան Լևոնը վաղ զարթնեց և դուրս եկավ տանից: Ջաղաքը նոր էր արթնանում: Այս ու այն կողմից երևացին փողոց մաքրողները: Բոլորին հայտնի Սամսոն քեռին օրորվելով պատերին էր վռնդում աֆիշաները: Լևոնն անցնելով անուտուռն ճանապարհին դանվող այգու մոլով՝ ապահովեն ծծում էր բուրումնալից օդը: Նա նստեց այգու նստարաններից մեկի վրա: Թվում էր, թե այս վաղվնկ քաղաքն աշխարհի հրաշալիքներից մեկն է, այստեղ են ծագելիները այգքան հոտավետ, առավոտն այգքան սքանչելի: Դեպի հարավ քաղաքն ունեցած սերը չէ՞ արդյոք երիտասարդ մարդկանց ոգեշնչում մարտի, հաղթանակի: Ջառամյալ ծերերն անգամ երբեմն քաղաքի մասին խոսելիս լցվում են երիտասարդական ավյունով: Ինչքա՜ն պեղելիք, հոյակապ է քաղաքի ապագան...Մեր ներկայի և է՛լ ավելի լավ ապագայի համար քաղաքի երիտասարդները նեռվում են ոգեմաճակատ...Լևոնը չատպեց շրջկոմ: Ինչ որ բանից բարեխառն էր նրա սիրտը: Այդ սերն էր՝ դեպի քաղաքը, նրա մարդիկ: Նա մտավ շրջկոմ: Այնտեղ էին Կամիտասն ու Սևոյան, որ ամենամոերմական ոլորտով նստած գործածային գրուցում էին: Լևոնին տեսնելուն պես, նրանց դլուխները հեռացան և նրանք խիստ ոսքի կանդնելով ողջունեցին եկողին:

— Հերթական արձակուրդի մե՞ջ ես,—ուրախ դիմեց Լևոնը:

— Այո՛, մեկ օրով:

— Սա հիվանդության պատճառով,—ուղղեց Լևոնը:—Բայց լավ է, որ այդքան երկար ժամանակով հանդստանալու ես:

Նա հանկարծ լռեց, նայեց երկուսին: Պարզ

էր, թե ինչ խոսակցություն կարող էր տեղի ունենալ երիտասարդ զույգի մեջ, որ իրար սիրում են, բայց չեն համարձակվում խոսվանել, միշտ հետաձգելով հաջորդ օրվան: Լեվոնը ցանկացավ նրանց հետ երկար զրուցել, բայց ռազմական կոմիսարիատից կանչեցին: Մի քանի հանձնարարություններ անելով Սեդային, շտապ-շտապ դուրս եկավ: Կոմիսարը և Սեդան իրար շունչ քաշեցին: Դուռը նորից բացվեց: Լևոնն էր, նա մոռացել էր հարցնելու, թե դրծարանում ինչպես են արձագանքում «Կոմերիտական հերոսներին»:

— Մենք սիրելինք երեք անգամ չաո,—պատասխանեց Կոմիսարը: Ամբողջ երկիրն է հավաքում: Կոմերիտական հերոսների արձագանքը հնչեց ողջ ռեսպուբլիկայում:

Լևոնը ժպտալով հեռացավ:

— Ա՛յ ընկեր, ա՛յ հոգի մարդ,—նրա ետևից ասաց Կոմիսարը:

Սեդան նայեց Կոմիսարին և սկզբանքի պես շատախոսեց:

Նրանք լուռ էին: Երբեմն էլ մոռանում էին մի քանի վայրկյան, բայց չէին կարողանում արտահայտվել: Շատ էր խորհել Կոմիսարը, թե ինչպես բացատրվի Սեդայի հետ: Սկզբում կարծում էր, որ այդ կանչ պատերազմից հետո: Ջի՛ր որ իր ընկերների մի մասն արդեն զորակոչվել են բանակ, մի քանիսը զոհվել են հայրենիքի համար մղվող մարտերում, իսկ ինքը դեռ թիկունքում է: Ո՛չ, նա անկեղծորեն կխոստովանի ամեն ինչ, նա իր անհուն սերը կբացատրի Սեդային: Սեդան կհասկանա, չի մերժի: Բայց այլ բան է խորհրդածելը, որոշումներ ընդունելը, այլ բան է արտահայտվելը: Ո՛չ, այսօր Կոմիսարն անպայման կբացի

ախտը... Ուրիշները դուցե այլ կերպ վարվեին, նրանք կգտնեին համապատասխան խոսքեր, նա Կոմիտասը դժվարանում է...Ցինի՞ մերժի, էնի՞ սպասում է ուրիշին, չինի դեռ շուտ է: Բայց պետք է վերջապես բացել վարագույրը: Եվ նա ակնոց սկզբում կաշկանդված, հետո ավելի համարձակ:

— Ո՞ւր կտանի մեզ այս ընկերությունը, Սեդա: Մենք ամուր կապված ենք աշխատանքով: Դուրս ես պրծում...Ես տեսնում եմ քո մեջ ապնիլ հատկություններ: Այդ է պատճառը, որ ես այսքան մոտ եմ պրծում քեզ...Դուռ ասում ես, թե ընկերուհիներդ վարձո՞ւ են նկատել մեր մոեմոությունը:

— Մենք երբեք լավ ենք հասկանում,—չարաչարանեց Սեդան,—երբ ինձ հետ ես, ամեն ինչ լավ է...

18.

Լևոնը դուրս եկավ պատշգամբ: Այդ միջոցին Գարեգինը անցնում էր փողոցով: Լևոնը նրան կանչեց իր մոտ և ասաց.

— Այսօր երկու հշեղան վիրավորներ են պատվա: Հարկավոր է կազմակերպել նրանց կայարանից վոխադրելու գործը:

— Կա՛, ընկեր Վահանյան,—զինվորականի պես պատասխանեց Գարեգինը և ժպտադեմ ավելացրեց,—Զապաևը կասեր...

— Նկատի ունեցիր, որ երկրորդ հշեղանը,—ընդհատեց նրան Լևոնը,—վիրավորվածներ չեն, այլ էվակուացվածներ:

Գարեգինը զինվորականի նման զգաստ կանգնելով պատասխանեց.

— Կա՛, ընկեր քարտուղար:

Նա չրջվեց և ուզում էր հեռանալ, բայց լինչ որ բան մտաբերելով, կանգնեց իր նախկին դիրքով և հարցրեց.

— Իսկ Լյուդմիլան չի՞ պալու։ Ջէ՞ որ նա գրել էր թե...

Պատասխանի փոխարեն Լևոնն ուսերը թոթվեց, իսկ Գարեգինը նեռվելով փողոց, դործի անցալ։ Նրան օգնության հասան մի քանի կոմերիտականներ՝ Վանիկը, Կոնստանդինը, Գյորգին, Առաքելը։ Նրանք կարմիր ժապավեններ կապեցին թևքերին և կանգնեցին փողոցում։ Գարեգինը չտապ անցնում էր մերթ այս, մերթ այն խաչուղին, ուշի-ուշով հետևում մեքենաներին։

— Կանգնի՛ր։

— Ո՞վ է։

— Ասում եմ, կանգնի՛ր։

— Ինչո՞ւ։

— Հետո կիմանաս, դե՛ չո՛ւտ։

— Ո՞ւմ կարդադրությամբ.

— Ինչպե՞ս թե, ո՞ւմ կարդադրությամբ։ Զապաև։

— Զապաև՞,—ուսերը վեր քաշելով զարմանում էր շոֆերը։

— Ֆեգ ասում եմ՝ ե՛տ դարձիր,—պնդում էր Գարեգինը, այս րոպեիս դնա կայարան։ Ռազմաճակատից վիրավորներ են գալու, տեղափոխեք հանգստյան տուն։ Այդպես է կարգադրել ընկեր Մանթաշյանը։

Մանթաշյանի անունը լսելուն պես շոֆերը ենթարկվում էր։

Քանաքերցի ավտոմեքենան կայարան ուղարկելուց հետո Գարեգինը զեկուցեց Լևոնին, հետո միանին ներկայացան Մանթաշյանին։ Բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտել էին,

սպասում էին կարգադրության: Վանիկը, Կոնստանդինը, Առաքելը, Գյորգին կանգնել էին ավտոների առջև: Եկել էին բժիշկները, բուժքույրեր:

Սկսվեց էվակուացվածների փոխադրումը: Կոմերիտականները կարգավորել ու կահավորել էին էվակուացիոն կետը, որտեղ ժամանակավորապես տեղավորվում էին նորեկները:

Լևոնը լսում էր բոլորին և իր բլոկնոտում նշումներ անում: Աշխատանքի եռուն պահին Գաբրեգինը մոտեցավ Լևոնին և նրա ականջին շշնջաց. «Ուրեմն չեկա՞վ»:

— Չեկավ, Զապան Գաբրեգին, չեկավ,—պլուկը բացատրեր չարժելով պատասխանեց Լևոնը:

Եկվորների դեմքերին հոգնածության դրոշմ կար: Բայց չերմ ընդունելությունից գլարթացան: Կատամատույցում նրանցից ոմանք հետաքրքրություններ տեղացիներին պատմում էին այն, ինչ սեփական աչքերով տեսել են, սեխական մաշկի վրա զգացել: Միաժամանակ նրանք տալիս էին զանազան հարցեր:

Լենինգրադի օպերետային թատրոնի մի դերասանուհի՝ Օլգա անունով, հետաքրքրվեց, թե ինչ հեռանկարներ կան համերգներ տալու համար: Բրյանսկից մի ծերունի հյուսն ուզում էր իմանալ, թե հնարավո՞ր է աշխատանք գտնել: Կիևի կոնսերվատորիայից եկած փոքրիկ Տատյանան շատ ուրախացավ, երբ լսեց, որ քաղաքում երաժշտական դպրոց կա:

— Այդ հրաշալի է, այդ հիանալի է,—բացականչեց Օլգան,—այդ մեզ շատ հանգստացրեց:

Իրենց հուզող հարցերով դիմում էին ժամագործները, կոշկակարները, վարսավիրները, նկարիչները, երաժիշտները, որոնք կամ ծերության, կամ

հիվանդության պատճառով էվակուացվել էին։ Վեց-յոթ հոգով վագոնից իջեցրին մի մահճակալ, որի վրա պառկած ծանր տնքում էր մի ծերունի։ Իվան Իվանիչ—այսպես էին կոչում նրան։ Իվան Իվանիչը բանվորական հին սերնդին էր պատկանում։ Նա կյանքի մեծ մասն անց էր կացրել ցարական ֆաբրիկայում։ Սովետական իշխանությունը նրան կենսաթոշակ էր նշանակել, բայց Իվան Իվանիչը չէր կտրվել աշխատանքից։ Էվակուացիայի ժամանակ նա հրաժարվեց հարյավ գնալուց և պահանջեց թողնել իրեն պարտիզանական ջոկատում։ Այդ ժամանակ կրկնվեցին Իվան Իվանիչի խրոնիկական հազի նոպաները, օր-օրի հյուծվում էր նա։ Գրեթե անզգա դրության մեջ նրան նստեցրին վագոն։

Կառամատույցում Լևոնը նկատեց, թե ինչպես ճամպրուկը և փոքրիկ կապոցը բռնած դեպի կայարան է շաժվում Լյուդմիլայի մայրը՝ Նատալիա Միխայլովնան։ Հուզմունքից Լևոնի սիրտն այնպես բաբախեց, որ նրան թվում էր, թե կրծքի տակ մի վիրավոր արծիվ է թիրտում։

— Վերջապե՛ս,—դուրս թռավ նրա բերնից և արագ քայլերով ճեղքելով խռնված բազմությունը՝ նա մոտեցավ Նատալիա Միխայլովնային,—օ՛, բարև ձեզ, Նատալիա Միխայլովնա, բարև՛։

— Ա՛խ, այդ դո՞ւ ես, սիրելի Լև Պետրովիչ...Ա՛խ, այդ ինչպե՞ս հանդիպեցի,— ասաց դեղեցիկ և բարձրահասակ կինը և կապոցը վայր դնելով՝ մայրաբար գրկեց նրան։

Լևոնը ողջագուրվելուց հետո անհանգիստ այս ու այն կողմ էր նայում և ինչ որ բան էր ուզում ասել, բայց ամրասփում էր։ Վերջապես իրեն հավաքելով՝ հարցրեց.

— Իսկ...իսկ...ո՞ւր է...Լյուդմիլան:

— Լյուդմիլա՞ն,—հառաչեց մայրը,—նա, որ-պյակս, Մոսկվայի շատ ու շատ կոմերիտականների հետ գնաց կամավոր, և վաղուց է, որ նրանից ոչ մի լուր չունեմ:

— Ինչպե՞ս,—գրեթե ճչաց Լևոնը,—չէ՞ որ ես նրանից վերջերս նամակ ստացա, որտեղ գրում էր, թե շուտով այստեղ կլինի:

— Ա՛խ, աստված իմ, Լև Պետրովիչ, այդ ճի՞շտ ես ասում: Դու իմ Լյուդմիլայից նամա՞կ ես ստացել: Այն էլ վերջե՞րս,—վրա տվեց մայրը,—որտե՞ղ է այդ նամակը, ճի՞շտ ես ասում:

— Գնա՛նք, գնա՛նք, ես ցույց կտամ այդ նամակը,—ասաց Լևոնը և վերցնելով ճամպրուկն ու կապոցը՝ դեռ մի քանի քայլ չէր արել, երբ տեսավ Մանթաշյանին, որը կարգադրություններ էր անում էվակուացվածներին օգնելու և նրանց ունեցվածքը տեղափոխելու մասին:

Ավտոմեքենայով Նատալիա Միխայլովնային տուն տանելուց հետո Լևոնը վերադարձավ այն ժամանակ, երբ սանիտարական գնացքը դանդաղ մոտեցավ կայարանին: Սկսվեց վիրավորների փոխադրումը: Կոմերիտականները բժիշկների և բուժքույրերի ցուցումներով պատգարակներով դուրս էին բերում վիրավորներին և տեղավորում ավտոմեքենաներում:

Լևոնը մերթ այս ավտոյին էր մոտենում, մերթ՝ այն, օգնում էր սանիտարներին: Այդ միջոցին պատգարակով վերջին ավտոյին մոտեցնում էին մի վիրավոր աղջիկ, որի խարտյաշ մազերը կախվել էին ցած: Նրա տենդագին, կապույտ աչքերը ինչ որ մեկին էին որոնում: Նա ծանր էր շնչում: Ակներևաբար տաքության մեջ էր: Հանկարծ

նրա կապույտ աչքերը լայն բացվեցին և ձեռքերն առաջ մեկնած դլուխը բարձրացրեց, հննջաց.

— Լյո՛վա, Լյո՛վա...

Լևոնը խայթվածի նման ցնցվեց: Շուռ եկավ: Աչքերին չհավատաց: Երա՞զ էր, տեսի՞լք, մի՞թե նա էր, Լյուդմիլան: Ջի՞ որ ինքը դրանից մի քանի օր առաջ նամակ էր ստացել, որի մեջ վիրավորվելու մասին ոչինչ չէր գրել: Եվ այժմ Լյուդմիլան պառկած պատգարակի վրա՛, այդպես հյուծված՛, գունա՛տ: Եվ ինքն էլ չգիտց, թե ինչպիսի ուժգնություն գործելով մոտեցավ պատգարակին և որքան ուժ ուներ գոռաց.

— Լյուդմի՛լա, Լյուդմի՛լա, այդ դո՞ւ ես:

19.

Պատերազմի ժամանակ շատ մարդիկ շատ բան կորցրին, իսկ քաղաքի թաղամասերից մեկի բնակիչ, հին գյուղի որդի Գեղամը վշտացավ, որ քաղաքային այդքան ընդհատակեցին եվրոպական պարերը: Ինչպե՞ս կարող էին պարերը չարունակվել, երբ նվագողներից շատերը բանակ էին մեկնել: Այդ դեռ բոլորը չէ: Գուցե հնարավոր լիներ պատեֆոնով գործը գլուխ բերել, բայց պարերի ընդհատման պատճառը, ինչպես Գեղամն էր ասում, կավալերներին ռազմաճակատ գնալն էր:

Շատ էր խնդրում Գեղամը ալջիկներին պարերը չարունակել, ինքը պատրաստ էր բոլորին հերթով պարեցնել, բայց բան չէր դուրս գալիս: Շատերի համար աննկատելի էր մնացել Գեղամը: Ավանդության նա արթնանում էր ուշ, սկզբում խնամքով մաքրում էր կոշիկները ու շորերը, ապա լվացվում, նոսրում հայելու առաջ, սափրվում,

մազերը սանրում, հոնքերը նրբացնում, շրթունք-
ներին թեթևակի քսում էր սնգույր: Ամեն օր նույն
ժամին և նույն չանասիրութեյամբ կոկվելուց հե-
տո հագնում էր նորաձև կոստյումն իր պրկված
դաեերով և դիմացի պատին փակցված հին ու դոր-
չացած մեծ հայելու առջև երկար դիտում իրեն,
ֆոկստրոտի, վայլսի զանազան ձևեր անում, ստու-
գում անդրավարտիքի արդուկը, դեմքի պուտահա-
տութեյունը, մազերի սանրվածքը: Տանից դուրս
գալով՝ նա կանգնում էր սայահատակած մայթին,
մինչև կհանդիպեր մի ծանոթ աղջկա: Նորը գլուխ
տալով նա փոքր ինչ առաջ թեքված, ալ ձեռքը
գոտկատեղի մոտ կխառնված, ժպտերես նայում
էր աղջկան, կարծես հարցնելիս լիներ. «Ինչպե՞ս
եմ դուր գալիս ձեզ, արդյոք ամեն ինչ կարգի՞ն
է»: Աղջիկները լավ գիտեին Գեղամի բնավորու-
թյունը և հանդիպելիս նրան ատում էին.

— Որքան լա՛վն եք այսօր:

— Ի՛նչ օդեկոլոն է:

— Ինչքա՛ն լավ է սազում ձեզ նոր կոս-
տյումը:

— Իսկական կավալեր եք, իսկակա՛ն:

— Աղջիկները իրար կջարդեն քեզ համար:

— Փայլո՛ւմ ես Գեղամ, փայլո՛ւմ:

Գեղամն ավելի էր ճգվում, ուրախանում և չե-
ղակի նայելով աղջիկներին, հաճույքով կրկնում
էր. «Ձի՛ կարող պատահել, չի՛ կարող պատահել»:
Եվ այսպես ամեն անդամ:

— Աղջիկների քանի՛ սերունդ եմ փոխել,—
բերանն ավելի փոքրացնելով և ապակու նման փայ-
լուն, փոքրիկ աչքերը խաղացնելով ասում էր
նա,—միշտ այսպես հավաքվում ենք, ուրախա-
նում:

Մեկ անգամ Գեղամին կանչեցին կոմերիտմիութեան ՀԸԿում:

— Գնա գործարան, մասնագիտութիւն ստացիր,—ասաց Լեոնը,—պատերազմը կվերջանա, մենք էլ քեզանից եվրոպական պարեր կսովորենք, կպարենք:

Գեղամն ակզբում չէր հասկանում իր լսածին: Առաջին անգամ էր իր կյանքում լսում այդպիսի խոսքեր:

— Ինչ եք ասում, ինչ եք ասում, ընկեր Լեվոն,—ձեռները կրծքին դնելով, ընկճված ձայնով թոթովում էր նա,—ես ո՞ր օրվա բանիմն եմ...Ախըր, ես ո՞ր օրվա...

— Այն դեպքում խնդրեմ, Թաղոնում կամ կվնտում հանկիչ,—վճռական առոգանքից Լեոնը,— այդ արդեն ֆիզիկական ուժ չի պահանջում:

Գեղամի փոքրիկ աչքերը փայլատակեցին: Նրա գլխում մեթք հղացավ Ֆոնդում կոպմակերպել ՀԱԶ, եվրոպական պարեր և համաձայնվեց աշխատել թիկուզ որպես հանկիչ: Այդպես էլ Գեղամն առաջին անգամ իր կյանքում մտավ աշխատանքի: Բայց, ավա՛զ, նրան չէր վիճակված երկար աշխատել, կոպմակերպել ՀԱԶ և եվրոպական պարեր: Մի շաբաթ անց՝ Գեղամին աշխատանքից ազատեցին ինչ որ տհաճ բանի համար:

Աշխատանքից ազատվելուց հետո Գեղամն իր «գամչիաներեն» ստրատիոտ պոմոտա էր, թե ինչպես մի անբարոյական երիտասարդ կվնտի դահլիճ մտնելով՝ ծոլերից լրեն. «կավարներից հանկիչ է»:

— Աչքերս մթնեցին,—պոմոտա էր նա,— դուրս պատվեց և ինքս էլ չհասկացա ինչպես ծոների վերտավորեցի նրան...

Այսպես Գեղամը կրկին ասֆն էր...

Մի անգամ իրիկնադեմին քալաքային այգուց լսվեցին Ջալի պվարթ հնչյուններըւ Առաջին անգամ Գեղամը իր համար անսովոր արագ քայլերով, նույնիսկ վազքով չտասեց այդի։ Ո՛վ զարմանք, ահագին բազմաթյուն էր հավաքվել և ունկընդրում էր Ջալին։ Կանգնել էր Գեղամը, նայում էր ու չէր հավատում աչքերին։ Երան թվում էր, թե էաոլապան սոսոլում, տանգո է պարում։

Ել ինչքա՛ն յավ էր նվագում Ջալը, որ կապմլված էր դասախոսում բուժվող վիրավոր մարտիկներից։ Մի քանիսը հենակներով էին, մեկը վիրավոր ոտքը դրել էր դիմացի աթոռին, մեկի դլուխն էր փաթաթած, մեկ ուրիշի աչքն էր կապած։ Ջալ նվագախումբը դեկավարում էր մի բարձրահասակ երիտասարդ։ Այդ Վեսելևսկին էր, Բլրադյուղի կոլխոզնիկ Իվան Գավրիլչի տղան, որի ձախ ձեռքը կապած էր կրծքին։ Ոսկեդույն մազերի վրայով ձեռքով ուղղելով՝ Վեսելևսկին կանդնեց էաոլապայի կենտրոնում և հանդիսատեսներին ներկայացրեց Ջալի բոլոր անդամներին։ Այդ քաղաքներում շրջող սովորական Ջազի նվագողներ չէին։ Դրանք պանապան ճակատներից եկած վիրավոր մարտիկներ էին, որոնք արհեստար մարտնչել էին հայրենիքի ազատության համար։ Ահա՛ թե ինչու Վեսելևսկու ծանոթացումը վեր ածվեց հուշերի, էպիզոդների նկարագրության։

— Ինչ վերաբերում է ինձ,—կատակով դարձավ նա հանդիսատեսներին,—ես Ջալի ամենատանդաղաթար մարդն եմ... Առաջ ես չաստուշկաներ էլ հորինում մեր գյուղի կոշիկարի մասին։ Կռվում չատ բան հնարեցի եֆրեյտոր Հիտլերի ու նրա գոչինների դեմ։ Ես չեմ կարող հարմոն նվագել, որովհետև թևս վիրավոր է։ Մեր Ջազի նվա-

զակցությամբ ես կերգեմ ճակատում իմ հոբինած երգերից մեկը:

Նա երգեց:

Ապա նորից կանգնեց էստրադայի կենտրոնում և ոսկեզուն մազերի վրայով աչ ձեռքով ուղղելով՝ հայտարարեց.

— Այժմ անցնում ենք պարերին: Մենք կնվագենք, իսկ դուք պարեցեք: Ո՞վ կարող է ղեկավարել պարերը:

— Գեղամը, Գեղամը,—ձայնեցին այս ու այն կողմից:

Գեղամն իրեն ուղղեց և ուրախությամբ առաջ եկավ:

— Այո՛, սիրելիներս, ես կղեկավարեմ: Ուշադրությո՛ւն: Կավալերները մոտենում են «դամընկաներին»: Կավալերների պակասության դեպքում թույլատրում եմ «դամչկաներին» կատարել այդ դերը: Այսպիսով երկարատև ընդմիջումից հետո քաղաքային այդում վերսկսում ենք եվրոպական պարերը:

Ապա աչ ձեռքը բարձրացնելով՝ ոգևորված բացագանչեց.

— Սկսո՛...

Ջազն սկսեց ֆոկստրոտ: Զույգերը՝ մոտեցան իրար և սկսեցին պարը: Գեղամը պարում էր էվակուացված աղջիկներից մեկի՝ Օլգայի հետ: Նրա ուշադրանքը, վայելուն պարը հետաքրքրությունն առաջացրին Օլգայի մեջ և նա գնեց իր կավալերին:

Ընդմիջման Օլգան սկսեց զրուցել Գեղամի հետ:

— Դուք եղել ե՞ք Մոսկվայում, կամ Լենինգրադում:

— Դժբախտաբար ոչ: Ես իմ կյանքում այս քաղաքից դուրս չեմ եկել:

— Իսկ դուք ինչո՞ւ բանակում չեք:

Գեղամն անտարբերությամբ նայեց Օլգային, հետո ժպտաց և կրկնեց սերտած ֆրազը:

— Առողջությունս չի ներում:

— Ցավալի՛ է: Իսկ որտե՞ղ եք աշխատում:

— Ոչ մի տեղ:

— Ինչո՞ւ:

— Համապատասխան աշխատանք չկա:

— Տարօրինա՛կ է, ի՛նչ անբան մարդ եք...

Գեղամը ցնցվեց: Այդպիսի վիրավորանք, այն էլ մի եկվոր օրիորդից, նա չէր սպասում: Նա վարանած կանգնած էր, երբ վեհերևակին ոակեդուն մաքերի փունջը աչ ձեռքով ուղիղով կանգնեց էսորտայի կենտրոնում և հայտարարեց.

— Վերսկսում ենք պարերը:

Գեղամն այլևս չպարեց: Նա երկար մտածում էր Օլգայի սառնների մասին: Պարերը վերջացան: Չաղլ անդամները նստեցին դոսպիտալի ավտոմեքենան, որն արագ սլացավ դեպի դոսպիտալ: Շուտով այդին դատարկվեց: Գեղամը դեռ նստարանի վրա թուլացած, ընկած էր և նրան թվում էր, որ ինքն այլևս աշխարհում հյուրընկալվելու ոչ մի անկյուն չունի: Նրա ականջին մարակի նման չաչում էին Օլգայի խոսքերը. «Ցավալի է... Ինչ անբան մարդ եք...»: Ամեն առաջխոսքում, օրորան ծառերը ավելացրած Օլգայի խոսքերն էին կրկնում. «Ցավալի է... Ինչ անբան մարդ եք...»: Ոչ մի պահ նրան թվաց, թե այդտ ամեն մի ծառը, թռչունը, ծաղիկը, տերևը, նույն բանն են կրկնում. «Ինչ անբան մարդ եք...»:

Եվ այդ պահին Գեղամն էր ոչ հոգով ցնցվեց: Բուրավետ այդին նրան թվաց տանջարան և նա ամաչարեց այդտեղից վախչել: Ամեն

այդուց դուրս գալիս պարի սիրահարն զգաց իր վտքրութիյունը:

20.

Մանթաշյանի ավտոն կանգնեց նախկին հանդըստի տան բակում, ուր դռնվում էր անտառի եզրին և այժմ գարձել էր դռնապետաց: Զմեռնամուտի սառը հողմը շառաչելով օրորում էր արդեն մերկացած ծառերը: Թվում էր, թե մի թախծոտ և անհասանում մելամըլ էր նվագում նրանց ճյուղերի վրա: Ավտոյի դուռը չխկոցով բացվեց, դուրս եկավ Մանթաշյանը, ապա Լևոնը: Թխպոտ երեկոյին ավելի մռայլ էր երևում նրա դեմքը: Նա անձայն ու փութկոտ քայլերով ուղղվեց դեպի դռնպետական մուտքը: Դռան առաջ կանգնած պահակին ողջունելով՝ կանգ առավ: Նրան հետևում էր Լևոնը:

— Կարելի՞ է,—պահակին դիմեց Մանթաշյանը:

— Ի՞նչը կարելի է,—կիսախավարի մեջ զարմացական չռվեցին ծեր պահակի խոր ընկած մանր աչքերը և անշարժացան հարց տվողի վրա:

— Ներս գնա՛լ,—կամաց և հանդարտ տոնով ասաց Մանթաշյանը:

— Ներս գնա՞լ,—զարմացած արձագանքեց պահակը,—հիմի ավլդանի չկա,—յուրօրինակ ծանրը ու սառն չեշտով ասաց ծեր պահակը:

Մանթաշյանի դեմքի մռայլությունը տեղի տվեց մի պայծառ ժպիտի: Լևոնը սրտնեղվեց և նրա դեմքին երևացին բարկության նշաններ: Նա մի քայլ արեց դեպի պահակը և նրա ականջին կամաց շշնջաց.

— Դու գիտե՞ս, ով է սա: Երջկոմի քարտուղար ընկեր Մանթաշյանն է, եկել է վիրավորներին տեսնելու:

Ակնթարթորեն ծերունու տրտունջը սուր չէր. նա դլուխը ցնցելով վիճակից.

— Հընդեր ջան, ես քեզանից լավ եմ համանում, թե սա ով է: Մեր քաղաքի ու սրջանի ծծկերից մինչև հալվորը ճանաչում է ընկեր Մանթաշյանին: Լավ կլինի, որասես թե դո՞ւ ով ես: Համա հիմի պատերազմի ժամանակ է, ամեն ինչը վայենի է, դլավնի նաչալնիկը պրիկազ է տվել՝ ով ուզում է լինի՝ ներս չթողնել առանց պրոպուսկի:

Մանթաշյանը մտերմաբար ու սիրալիր ձևով դրեց ծերունի պահակի ուսին և կամին ակնարկելով ասաց.

— Պապաշա, ասլես, դու ճիշտ ես: Բայց էլ լինի լսանանալ, թե որտեղ է ձեր «գլավնի նաչալնիկը»:

— Ինչի չէ,—հպարտ մանկան ցնծությամբ ձայնը բարձրացրեց ծերունին:—Գլավնի նաչալնիկ ընկեր բալկոնակին հենց նոր, քիչ առաջ գնաց:

— Իսկ ո՞վ է նրան փոխարինում,—խնդուքն վրա բերեց կամին:

— Ընկեր բալկոնակուն հեչ մեկն էլ չի փոխարինում: Ո՞վ կարա նրան փոխարինել:

— Իսկ բժիշկներից ոչ ոք ներսը չկա՞,—նորից ձեռքը ուսին դնելով հարցրեց Մանթաշյանը:

— Ներսը մնացել է պիժուրնի վրաչը, մեկ էլ սեստրաները:

— Իսկ չի՞ կարելի «պիժուրնի վրաչին» ձայն տալ,—հարցրեց Մանթաշյանը, պահակի խոսքերը չեշտելով:

— Ինչի չէ, էդ մեկն աչքիս վրա,—խորը տընքալով ասաց պահակը, և դուռը վրա բերելով բա-

նալին պատեցրեց ու հեռացավ ինքն իրեն խոսելով,—էս մինուճին։

Մանթաշյանը և Լևոնը դուռն ապակու միջից տեսան, թե ինչպես յոթանասունին մոտ ծերունին որքան ուժ ուներ, վազում էր միջանցքով, ապա արագ բարձրացավ աստիճաններով, ծռվեց դեպի աջ և անհայտացավ։ Լևոնը, որ անչափ ընտրնեղվում էր և զայրույթով էր լցված դեպի ծերունին, անհամբեր սպասում էր վայրկյան առաջ մտնել նեբս և տեսնել Էյուդմիլային։ Այդ բանը խորապես զբաղեցնում էր Մանթաշյանը, բայց ծերունի պահակի այդ վարմունքը հուզել էր նրան։ Այո՛, այդ ծերունին դուր եկավ Մանթաշյանին։

— Տեսնո՞ւմ ես,—ասաց Մանթաշյանը Լևոնի ուսին խփելով,—այս ծերունի պահակը գիտակցում է իր պարտքը։ Սա շատ մեծ բան է։ Եթե մեզանից ամեն մեկն զգա, թե ինչի համար է ինքը կոչված և ինչպես պետք է իր պարտականությունները կատարի, դրանով մենք շատ արդյունքի կհասնենք։ Ես այս մասին անպայման պետք է ասեմ գոսպիտալի պետին և թող նա խրախուսի պահակին։

Նա դեռ չէր վերջացրել իր խոսքը, երբ արագ-արագ աստիճաններով լիքն հերթապահ բժիշկն ու ծերունի պահակը, որն ամեն կերպ ուշադրություն էր ետ չմնալ բժշկից։

Հերթապահ բժիշկը, որ մի պեղեցիկ արտաքինով երիտասարդ էր, Մանթաշյանին տեսնելուն պես՝ դեմքին բացեց մի ներողամիտ, լայն ժպիտ և պահակի ձեռքից մեծ բանալին վերցնելով դուռը բացեց ու ասաց.

— Խնդրո՛ւմ, համեցե՛ք, ընկեր Մանթաշյան,— և նա հանցավորի տեսք ընդունելով՝ ասաց,—

խնդրում եմ ներեք, դե ինչ արած, Քերոբ բիձան այդպիսի բնավորություն ունի:

— Ճիշտն ասած, Քերոբ բիձան շատ ճիշտ վարվեց... Կեցցե՛, այլևս էլ պետք է,—պատասխանեց Մանթաշյանը և անցավ առաջ: Ծերունի պահակը ալեհեր կզակը չխելով, մի բան, որ նա անում էր շատ մեծ ոգևորության ժամանակ, ժպտաց:

Մանթաշյանն զգալով Լևոնի ներքին տագնապը՝ ամենից առաջ հերթապահ բժշկի հետ մտավ այն պալատը, ուր մի երկու կին վիրավորի հետ պառկած էր Լյուդմիլան: Նրանցից մեկը զինբժշկուհի էր, մյուսը՝ սանիտարուհի: Բժշկուհու ձեռքը դրված էր պիսպի մեջ, ինքը թիկն տված բարձին անթարթ նայում էր ներս մտնողներին: Մանթաշյանը հազիվ սպիտակ խալաթի օձիքը ինքնաբերաբար չխելով բարևեց նրանց: Հերթապահ բժիշը դիմելով վիրավորներին՝ ասաց.

— Ինդրում եմ ծանոթացեք, ընկեր Մանթաշյանն է, պարտշրջկոմի քարտուղարը,—և ժպտալով ձեռքը մեկնելով դեպի Լևոնը՝ ավելացրեց,—իսկ այս երիտասարդը կոմերիտմիության շրջկոմի քարտուղարն է:

— Շատ հաճելի է, շատ հաճելի,—ասաց բժշկուհին ժպտալով և ապա նայելով Լևոնի կողմը շարունակեց,—իսկ այդ երիտասարդին մենք արդեն պիտենք, և շուտ պալով դեպի Լյուդմիլան, որն արդեն հառպուռնել էր, ավելացրեց,—այդպես չէ՞ Լյուդմիլա, մենք գիտենք այդ երիտասարդին:

— Շատ ուրախալի է,—ժպտաց Մանթաշյանը,—որ պիտեք մեր Լևոնին:

Մոերմական ջերմ զրույցի ընթացքում Մանթաշյանը հետաքրքրվեց, թե ով ո՛ր ռազմաճա-

կատից է եկել, ինչ հարազատներ ունի, արդյոք որտե՞ղ են հիմա նրանք, յուր ունե՞ն թե ոչ:

Այնուհետև հետաքրքրվեց, թե ինչպես է լրենց վիճակը, բուժ-սպասարկումը, աննըդի դործը, արդյոք որևէ բանից չեն նեղվում:

— Ամեն ինչ հիանալի է,—ասաց բժշկուհին:

Այդ ամբողջ ժամանակ Լևոնը նայում էր Լյուդմիլային, որը տաքության մեջ էր և լարված լսում էր Մանթաշյանին:

Ճշմարիտ է, որ Լևոնն անասհմանորեն սիրում էր պարտիզկոմի քարտուղարին և անչափ հարգում: Սիրում ու հարգում էր նրա համար, որ նա նվիրված, անձնազոհ բոլշևիկ էր, ամեն բանում հանդես էր բերում պարտիական անհողդողդ կամք, պայքարելու և դժվարությունները հաղթահարելու ուժ: Բայց երբեք նա ներկա չէր եղել մի այնպիսի դեպքի, երբ Մանթաշյանը այդ աստիճան քնքուշ զգացումներ արտահայտեր, լիներ այդքան նրբանկատ և ուրիշի զգացումներով ապրող անձնավորություն...

Այդ օրը նա կրկնակի սիրեց Մանթաշյանին և ինքն իրեն մտքում ասաց. «Սրա խոսքով մարդ իրեն կրակը կգցի»: Եվ ամենից շատ Լևոնը հուզվեց, երբ Մանթաշյանն ավելի շատ հետաքրքրվեց Լյուդմիլայի վիճակով, եղբայրաբար հորդորիչ խոսքեր ասաց, մխիթարեց Լյուդմիլային:

— Արդեն վտանգն անցել է, շուտով կկապդուրվեք, Նատալիա Միխայլովնան այտեղ է, ամեն ինչ լավ կլինի,—ասաց Մանթաշյանը:

— Ես այսօր մայրիկիս տեսա,—հանկարծ Լյուդմիլան,—կյանքումս երբեք այդքան չէի ուրախացել: Նա պարզապես իմ վերքերի վրա սրեղանի դրեց... Ախ, մայրի՛կ, մայրի՛կ:

— Իսկ Աննա մայրիկից գո՞հ է,—ժպտալով հարցրեց Մանթաշյանը, հիշելով Լևոնի մորը:

— Ի՞նչ եք ասում, նա հիացած է այն հյուրընկալության համար, որ ցույց է տվել նրան Աննա մայրիկը:

Էլի ուրիշ շատ հարցերի մասին խոսելուց հետո՝ նրանք անցան մյուս պատառներըը, խոսեցին հրամանատարների, կոմխարների, պինվորների հետ: Մանթաշյանն առանձնապես հետաքրքրվում էր ռազմաճակատի իրադարձություններով, հաճույքով լսում էր նրանց պատմածները, իր հերթին հարց էր տալիս Ֆաշիստական ռազմական ուժերի, տեխնիկայի և այլ հարցերի մասին: Ապուհետև եղավ կարմիր անկյունում, Լևոնի հետ դիտեց խոհանոցը, բաղնիքը և դիշերվա ուշ ժամին դուրս եկավ դասախոսից:

21.

Մութ փողոցով դանդաղ գնում էր ավտոն: Քաղաքի կենտրոն հասնելուն պես Մանթաշյանը հրամայեց կանգնեցնել այն: Նա Լևոնի հետ իջավ, մոտավ մի մթին և ցեխոտ նրբանցք: Քիչ հետո նա բախեց մի դարպաս: Թակոցին բակից իր խուպոտ հաչոցով արձագանքեց մի դամփռ: Շան հաչոցին պատշգամբում հայտնվեցին ոտնաձայներ, ապա այս խոսքերը...

— Ո՞վ է, ի՞նչ եք ուզում:

— Մի րոպե կարելի՞ է,—հարցնողին պիմեց Մանթաշյանը:

— Ա՛, ընկեր Մանթաշյա՞նն է,—արձագանքեց էմման և արագ վազեց դեպի դարպասը:

Քառորդ ժամից հետո Մանթաշյանը և Լևոնը

մոան մի ընդարձակ սենյակ, որի կենտրոնում դրված ճաշասեղանի չուրջը նստած էին մի ռուս ծերունի, մի պառավ և չորս երեխա, որոնցից ամենամեծը ինը տարեկան կլիներ: Ներս մտնելուն պես նրանց քթին առավ տապակած մսի հոտ: Մանթաշյանը հենց կայարանում իմացել էր, որ ծեր Զոլոտովների տղան ու հարսը մեկնել են ռազմաճակատ և երեխաներին թողել զառամ ամուսինների հույսին: Նա առանց հուզմունքի և խորն ապրումների չէր կարող հիշել և տեսնել այդ ընտանիքը: Եվ հարգանքով մոտենալով, նա սեղմեց նախ պառավի, ապա՝ ծերունու ձեռքը:

— Նո՛ւ, ո՞վ եք նոր բնակարանից, ինչի՞ կարիք եք ղդում, խնդրեմ առանց քաշվելու ասեք, ինչպես կասեիք ձեր որդի Անդրեյին:

Մանթաշյանի խոսելու տոնը, ժպիտը անչափ դուր եկան ծեր ամուսիններին: Նրանցից ամեն մեկը ցանկանում էր առաջինն ինքն իր զոհունակության և երախտապարտության խոսքն ասել:

— Գանգատվելու իրավունք չունենք,—արտասանած ծերունին:

— Ճի՛շտ է, ճի՛շտ է,—վրա բերեց պառավը,— մենք այստեղ մեզ ղդում ենք մեր սեփական տան պես:

Ծերունի Զոլոտովը ծխամորճը վառելով և ծխի քուլաներն առատորեն բաց թողնելով՝ ասաց.

— Այո, ինչպես մեր տանը...Այսօր առավոտյան երեք պիոներ եկան մեզ մոտ: Թոռնիկներիս համար շատ նվերներ էին բերել: «Գալիս ենք գոսպիտալից»,—ասաց նրանցից մեկը,—«Մեր պիոներական ջոկատը վերցրել է գոսպիտալի պալատներից մեկի հեֆությունը»: «Եվ ձեր ընտանիքի հեֆությունը» ավելացրեց մի պատիկ պիոներ: Ես-

Ֆուֆյուն... նորից ծխի քուլաներն առատորեն բաց թողնելով չարունակեց ծերունին,—ոչի՛նչ... Անդրեյս ձեր լավության տակից դուրս կգա։ Նա չի թուլլ տա, որ թշնամին ոտք դնի Անդրկովկաս, նա վրեժ կլուծի...

Ծերունու աչքերն արցունքակալեցին։

— Դե լա՛վ, հանգստացի՛ր,—դիմեց պառավն իր ամուսնուն,—քանի անգամ եմ ասել, որ Անդրյուշան չատ կնեղանա, որ իմանա, թե իր հայրն արտասվում է։ Դու չգիտե՞ս նրա բնավորությունը,—այս ասելով, այնուամենայնիվ, պառավի աչքերը նույնպես լցվեցին։

Քիչ հետո հարևան սենյակից եկավ տանտերը, որը մի կարճահասակ ու վոխտ ծերունի էր։ Նրա դեմքին կար մանկական հիացմունքի ժպիտ։ Թվում էր, թե ոան տիրոջը պարգևել էին մի չատ թանկարժեք բան։

— Ա՛յ, ինչ եմ ասում,—դիմեց Մանթաշյանը տանտիրոջը,—եթե իմանամ, որ սրանց որևէ չափով վշտացրել ես, կամ չե՛ս ընդառաջել, մենք կլինենք ամենամեծ թշնամիներ։ Այս երեխաներին այնպես կնայես, ինչպես քոռներիդ։ Ինչի կարիք որ զգում ես, եկ ինձ մոտ և ասա։

— Նո՛ւ, լավ կլինի, որ ռուսերեն խոսեք,—տրտնջաց ծերունին,—որ մենք էլ հասկանանք, գուցե դուք մեզ բամբասում եք։

— Այո՛, ձեզ բամբասում ենք,—ժպտաց Մանթաշյանը,—ի՞նչ կա որ։

— Ընկեր Մանթաշյան,—խոսեց տանտերը,—էս ընտանիքը, որ եկել է մեր տունը, աչքիս լույսի նման կպահեմ։ Ռուսները մեր ժողովրդին են փրկել։ Բա ամեն մեկս չե՞նք կարա մի ընտանիքի հետ ախպոր պես ապրել ու նրանց կարիքները հոգալ։

Մանթաշյանը տանտիրոջ խոսքերը ուսաներեն թարգմանեց, ջերմ հրաժեշտ տալով դուրս եկավ և շոֆերին ասաց, որ ավտոն քշի դեպի Իվան Իվանիչի տունը:

22.

Հողմը չառաչում էր և անձրևի հետ տեղում էին ձյան փաթիլները:

Պարտադիր ռազմական ուսուցման հատուկ ստորաբաժանման մարտիկներին առաջադրանք էր տրված մինչև լուսաբաց «մարտերով» Դվալի լեռնանցքով հասնել լեռան գագաթը, Պուշկինյան հուշաղբյուրը: Զինկոմն անձամբ ինքն էր կազմել տակտիկական պարապմունքի պլանը և ղեկավարում էր գործողությունը: Զապաև Գարեգինը ոսկոյդլուխ թրջված՝ վազքով անցնում էր մերթ այս, մերթ այն ջոկը, դասակը, վաշտը, հրամանատարի հրամանները վոխանցում: Վանիկը, Կոնատանդինը, Առաքելը, որպես ռազմական և քաղաքական ուսուցման դերապանդիկներ, նշանակվել էին դասակի հրամանատարներ, և մեկը մյուսին նայելով՝ քայլերում էին տղաներին:

— Տեսե՛ք, եւո չմնաք, հրամանը պետք է կատարվի:

Երբ Գարեգինը մոտեցավ դասակներից մեկին, Վանիկը, որին հաղթանդամության համար Տորք Անգեղ էին կանչում, ուրախ ասաց.

— Զապաև Գարեգին, մեր դասակը կհասնի լեռան գագաթը:

Գարեգինն իսկույն կանդ առավ, փոքր ինչ մոայլվեց և զինվորական պատիվ տալով ասաց.

— Оставить! Начни снова!... Մենք դռնվում

ենք մարտական պայմաններում: Ես քեզ համար Գարեգին չեմ, այլ՝ հրամանատար... Այո՛, այդ լավ պետք է իմանալ...Ընկերությունը ընկերություն, բայց այժմ ռազմական գործի մեջ ենք... Ջեկուցեք, ընկեր դասակի հրամանատար, ինչպե՞ս է մարտիկների քաղբաղոյական վիճակը:

Վանիկն արագորեն ներքաններըը խփելով մի-մյանց՝ ոազմիկի նման զեկուցեց.

— Գերազանց, ընկեր հրամանատար: Բոլորը ձգտում են առաջինը հասնել լեռան գագաթը և տակտիկական քննությունը տալ գերազանց գնահատականով:

— Այդ լավ է: Բայց խրամատավորումը վատ եք կատարել: Բայց թողած հրթիռի լույսի տակ բոլորը երևացին: Կնշանակի մի գնդացիր կարող է հնձել բոլորիդ...Դասակին առաջադրանք է տրվում՝ լավ խրամատավորվել և սպասել նոր հրամանի:

— Կա՛, ընկեր հրամանատար:

— Կրկնիր առաջադրանքդ:

— Մեր դասակին առաջադրանք է տրված լավ խրամատավորվել և սպասել նոր հրամանի:

— Այդպես, լա՛վ է:

— Թույլ տվեք գնալ, ընկեր հրամանատար:

— Կարո՛ղ եք:

Վանիկը հեռացավ: Գարեգինը մոտեցավ Առաքելի դասակին: Օգտագործելով կարճատև դադարը, դասակից մի քանի մարտիկ գրպանի լապտերի լուսավորության տակ պատրաստում էին «Մարտական թերթիկի» նոր համարը: Գարեգինը մոտեցավ և սկսեց ուշադիր կարդալ. «Մի քանի օրից հետո մեր ստորաբաժանումը կմասնակցի ուսուցումը և կմեկնի ռազմաճակատ...»: Թերթիկում աչքի էին ընկնում նաև ծաղրանկարները: Մի նկա-

յուն մարտիկներից մեկը ժամապահության պահին քնում է։ Նկարի տակ գրված է. «Ծույլ զինվորի քունն է տանում...»։

Շուտով Գարեգինը հանդիպեց զինկոմին և պնդեց դասակների վիճակի մասին։ Լույսը բացվում էր, դասակները, վաշտերը գրոհեցին դեպի լեռան գագաթը։ Պուշկինյան հուշաղբյուրը գրավված էր։ Տրվեց դադար։ Առաքելի դասակի մի քանի մարտիկներ ստացան «Մարտական թերթիկի» նվերները։ Շատ չանցած՝ բոլորը հավաքվեցին «Մարտական թերթիկի» շուրջը և սկսեցին վիճաբանել, ծիծաղել։

— Իսկ ինչո՞ւ չեք նայում մեր «Մարտական թերթիկին»—ձայնեց այն կողմից Կոնստանդինի դասակից մեկը, գույնզգույն թերթիկը գլխից վեր պահելով։

Բոլորի ուշադրությունը գրավեցին հետաքրքրական ծաղրանկարները «Հիտլերը դժանոցում» ընդհանուր վերնագրի տակ։

Մինչ այդ Առաքելը, Կոնստանդինը և Վանիկը նստեցին աղբյուրի մոտ։ Վանիկը ցածրաձայն սկսեց երգել, նրան ձայնակցեցին ընկերները։

— Տղե՛րք,—բացագանչեց Կոնստանդինը,—այստեղ մեծ պոետը հանդիպել է Գրիբոեդովի ստճյունին,—և մի փոքր լռելով գլուխը խրոխտ վեր բարձրացրած արտասանեց.

«Ահա՛ Կովկասն իմ ոտքի տակ։ Ես մեն-մենակ վերևում
Սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պես բարձր, արծիվն հևռում, դեպի երթեր վերացած՝
Օդում հանգիստ սավառնում է՝ թևերն հզո՛ր տարածած.
Ել տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փրփրալից
Ինչպե՛ս ծնվում, ինչպե՛ս ձյունի հյուսեր փրչում ստրերից։

Այստեղ, ահա, շա՛ր-շա՛ր ամպեր մեղմ սահում են
իմ դիմաց,
Գոռ ջրվեժներ նոցա ճեղքում ու սլանում դեպի ցած.
Եվ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կույտերին.
Իսկ քիչ ներքև—շոր մացառ է, մամուռ՝ կպած քարերին.
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կանաչ, թավուտ
անտառներ,
Ուր վըխտում են եղջերուներ և ծլվլում թռչուններ»։

Այդ ժամանակ հավաքվեցին մարտիկները։ Եկան զինկոմն ու Գարեգինը։ Բոլորը կլանված լսում էին Կոնստանդինին, իսկ Գարեգինը թիկնել էր մի մամռապատ ժայռի։ Ցնդեց թանձր մառախուղը։ Մայրամուտին էր մտենում ձմեռնամուտի անուժ և հոգնած արևը։ Սառնաշունչ հողմից հետո հանգստացած աշնանային մերկացած անտառը լուռ ունկնդրում էր նրանց և տխուր նայելով արևին՝ ասես նրանից ջերմություն էր հայցում։

Գարեգինը նայում էր բարձր սարերին, լեռնային ճանապարհին։ Շատ տարիներ առաջ այս լեռնալանջով ողբերգական ճռինչով զոմշասայլը տանում էր ռուս մեծ ժողովրդի հանճարեղ զավակ Գրիբոեդովի դիակը։

Այժմ դանդաղ և ճռնչացող զոմշասայլի վոխարեն սլանում էր ավտոմեքենան։ Թերևս այս հին ճամփուրց անտառում կանգնած կաղնիները, բոխենիները ականատես են եղել ճռնչացող զոմշասայլին։

Մեքենան կանգ առավ Պուշկինյան հուշտղբյուրի մոտ։ Բոլորը ճանաչեցին։ Այդ ջրկոմի մեքենան էր։ Առաջինը դուրս եկավ Մանթաշյանը, ապա Լևոնը։ Բարևելով բոլորին՝ Մանթաշյանն ու Լևոնը նստեցին աղբյուրի մոտ։ Թրջված չինելի վերը սապոգներին չփշփացնելով, եկավ զինկոմը,

բարևեց Մանթաշյանին, Լևոնին և նստեց նրանց մոտ:

— Ահա «Պրավդա»-ն,—ասաց Մանթաշյանը՝ թերթը դնելով գինկոմի առաջ,—կարդացեք և հպարտացեք Աղասիով... Մ՛յ, ինչպիսի տղաներ ունենք մենք...

Գինկոմը նայեց: «Պրավդա»-ի առաջին էջում տպագրված էր Աղասու մեծ լուսանկարը: Նա կարդաց ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը «Հայրենական պատերազմում, զեր-մանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում հանդես բերած բացառիկ արիության ու խիզախության համար Աղասի Դավթի Մամիկոնյանին շնորհել Սովետական Միության հերոսի կոչում...»:

— Բռա՛վո, Աղասի, ա՛յ թե լինչ...Թե՛ մեզ հպարտանալը և թե՝ կոմերիմություն:

Մինչ գինկոմը ոգևորված խոսում էր Ինճորաշատի կոմերիտական կոլխոզնիկ Աղասու մասին՝ Լևոնի երևակայության առաջ կանգնեց, թե լինչպես նա պատերազմն սկսվելուց առաջ տրակտորի վրա նստած հերկում էր հայրենի բերրի հողը: Կոլխոզի նախագահը մոտենալով նրան, տեսնելով ևեցը՝ հրճվանքով բացադանչեց.

— Աղասի ջան, կեցցե՛ս: Է՛, լինչ կարող եմ ասել, հերոսի պես ես աշխատում:

Եվ հուշերն արագ սահեցին ու անցան: Լևոնի երևակայության առաջ պատկերացավ զորահավաքի օրը, թե լինչպես Աղասին վերջին անգամ գըրկեց Սալվոն, Վարդիթերին և ասաց.«Ես չգիտեմ թե ևմ տրակտորը որ մեկին կհանձնեն... բայց ես այն հանձնում եմ ձեզ»: Լևոնը նրա ասածները չմոռացավ: Եվ Սալվոն և Վարդիթերին ուղարկեց տրակտորիստների կուրսեր: Նրանք եր-

կուան էլ սոցիալիստական մրցության մեջ մտան, ղեռազանց գնահատականով ավարտեցին տրակտորիստների կուրսերը: Ամենից ուշագրավն այն էր, որ նրանք կուրսերն ավարտելուց հետո մի փոքր վիճեցին: Սկզած աղջիկը ուզում էր ինքը Աղասու տրակտորի վրա նստել, քույրը՝ ինքը: Բայց հետո Սալվին գրկեց Վարդիթերին, համբուրեց նրա ճակատը և ասաց.

— Եղբոր տրակտորը քեզ եմ զիջում այն պայմանով, որ Աղասուն հավատարիմ սիրես ու նրա տրակտորն էլ լավ բանեցնես:

Այս ամենը լսել էր Լևոնը և այդ մասին ընտանեբար գրույց էր ունեցել Սալվու և Վարդիթերի հետ: Եվ ահա, Հայրենիքը, Հայրենական Պատերազմը բարձրացրին Աղասուն: Որքա՜ն ուրախ էՀ Լևոնը: Այստեղից վերադառնալուց հետո պետք է ողջույնի հեռագիր ուղարկի Ինձորաշատ, և՛ Սալվուն, և՛ Վարդիթերին: Այո՛, Վարդիթերին: Չէ՞ որ դրանից մի քանի շաբաթ առաջ եղավ դաշտում: Լուսնյակ գիշեր էր: Հեռվից ուրվագծվում էին անտառը, լեռները: Գորշ ֆոնի վրա ճգվել էին Վարդիթերի տրակտորի խոր ու երկայն ակոսները: Լուսնի շողերի ներքո նա նշմարեց Վարդիթերի արևավառ դեմքը, որի վրա կար հաղթանակի հավատ, այնքա՜ն սեր ու համարձակություն: Եվ այդ պահին Լևոնը ոչ միայն խանդաղատանքով նայեց այդ կոմերիտուհուն, այլև խորը հարգանքով լցվեց դեպի նա և մտքում ասաց. «Արդյոք Սլաստին սրա սիրուն արժանի՞ է»: «Պրավդա»-ն կարդալուց հետո Լևոնը մի տեսակ ամոթ զգաց և ինքն իրեն ասաց. «Այո՛, արժանի է»:

— Հավաքեցեք մարտիկներին և մասսայականացրեք «Պրավդա»-ում տպվածը,—ասաց Մանթաշյանը:

Հավաքվե՛լ,—բարձր ու հանդիսավոր հընչեց զինկոմի ձայնը, որի աչքերին փայլում էին ուրախության արցունքներ:

Նրա ձայնին արձագանքեցին ամբողջ Դվալի բարձրավանդակը, անտառը: Բոլոր ստորաբաժանումներում դադարեցին պարապմունքները և մարտիկները վազքով հավաքվեցին մխոինգի:

Պարապմունքից հետո Գարեգինը կոմերիտական կազմակերպության ժողով գումարեց քամուց պաշտպանված մի տեղում:

— Մեր ժողովի օրակարգում մի հարց կա. ընդունելության կոմերիտմիության շարքերը,— հայտարարեց նա և առաջինը կարդաց գործարանի շարքային բանվոր Ղամբարյանի դիմումը.

«Ես, պարտադիր ռազմական ուսուցման հատուկ ստորաբաժանման մարտիկս, խնդրում եմ ինձ ընդունել կոմերիտմիության մեջ: Ուզում եմ կոմերիտական տոմսով մեկնել ռազմաճակատ և կռվել ֆաշիստների դեմ»:

— Ի՞նչ հարցեր կան:

— Տակտիկական պարապմունքին ի՞նչ գնահատական ստացար,—հարցրեց մեկը:

— Գերազանց,—Ղամբարյանի փոխարեն պատասխանեց զինկոմը:

— Իսկ քաղաքական ուսուցո՞ւմը:

— Գերազանց,—այս անգամ պատասխանեց Գարեգինը:

— Ի՞նչ ես կարդացել վերջերս:

— Ընկեր Ստալինի հրամանները, Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը, «Զապաևը», «Ինչպես էր կռվում պողպատը»...

— Քանի՞ տոկոսով ես պլանդ կատարում:

— Չորս հարյուր:

— Իսկ ո՞վ է երաշխավորությունդ տվողը:

— Լևոն Վահանյանը։

— Ընդունե՛լ։

— Ընդունե՛լ կոմերիտմիության մեջ որպես անդամ,—առաջարկեցին մի քանիսը։ Ղամբարյանը միաձայն ընդունվեց կոմերիտմիության մեջ։

— Երկրորդ դիմումը Գեղամն է տվել,—չարունակեց Գարեգինը։

— Քանի՞ տարեկան է,—հարցրեց մեկը։

— Քսանչորս,—պատասխանեց Գարեգինը։

— Մեծ է։ Թող դիմի պարտիայի մեջ ընդունվելու համար,—առարկեց մեկ ուրիշը։

— Ես կարծում եմ, որ Գեղամի տարիքն այնքան մեծ չէ,—ասաց կոմերիտականներից մեկը,—հետո, սխալ է, որ ասում են թող մի անգամից դիմի պարտիայի մեջ ընդունվելու։ Նա դեռ դաստիարակության կարիք շատ ունի։

—Իսկ ինչո՞ւ այդքան ուշ է դիմում,—հարցրեց մեկ ուրիշը։

Գեղամը ոտքի կանգնեց և սկսեց խոսել՝ սկզբում անհամարձակ, հետո ավելի ազատ։

— Ճիշտ են ասում ընկերները։ Բայց ես առաջ ուրիշ կերպ էի մտածում, ուրիշ,...Ես պարտական եմ ընկեր Վահանյանին...Նա փոխեց իմ կյանքի ուղին։ Դուք գիտեք, սարերից բացի ես ոչինչ չգիտեի... Այո՛, ընկեր Վահանյանն ինձ օգնեց...Դուք բոլորդ ինձ օգնեցիք։

Գեղամը փոքր ինչ կանգ առավ, ապա իրեն ուղղելով ավելի համարձակ շարունակեց.

— Ես այժմ աշխատում եմ գործարանում...

Նա հուզված կանգ առավ, ճակատի քրտինքը թաշկինակով սրբեց, այլևս չկարողացավ շարունակել։ Մի քանիսը ելույթ ունեցան և պնդեցին, որ

Գեղամը դեռ այնքան չի հասունացել, որ կոմերիտմիության շարքերն ընդունվի:

23.

— Կարծես մեքենաներն էլ են չտապում, կարծես նրանք էլ են զգում, որ պատերազմ է,—հաշվառման թիթեղը համարակալի վրա կախելով ասաց Ղամբարյանը և հրճվանքով նայեց վառարաններից բարձրացող թանձր ծխին:

— Մեքենաները չէ, այլ մարդիկ,—նրա եսեվից համարակալին մոտենալով պատասխանեց Կոմիտասը:—Մարդն է մեքենայի ու բնության ղեկավարը: Մարդն էլ պետք է ջախջախի ֆաշիստական գազանին:

— Իսկ գազանը շատ մեծաներ է հացնում, վերքեր պատճառում մարդկանց,—մտախոհ ասաց Ղամբարյանը:

— Այո՛, բայց մարդիկ, այն էլ սովետական մարդիկ, զինվում են ավելի կատարելագործված տեխնիկայով, ավելի հզորանում և գազանին կտան մահացու հարված:

Կոմիտասի այս խոսքերից հետո նրանք մի պահ լուռ քայլում էին ցեխամիջյան ճանապարհով, երբ նրանց հանդիպեցին Մանթաշյանն ու բարձրահասակ մի մարդ: Մանթաշյանը ներկայացրեց.

— Ընկերը Ուրալից է:

Տղաների դեմքերը պայծառացան:

— Ուրալի՞ց:

— Այո՛,—զգալով Կոմիտասի և Ղամբարյանի ուրախությունը՝ ժպտադեմ պատասխանեց բարձրահասակ մարդը:—Ձեր գործարանի արտադրանքն

է հարկավոր շտապ: Գիտե՞ք հիմա ինչ է կատարվում Ուրալում:

— Այո՛, կարդում ենք թերթերը և լսում ռադիո,—ուրախ վրա բերեց Կոմիտասը:

Բարձրահասակ մարդը նույնպես ուրախ ժպտաց: Նրանք՝ հյուսիսի և հարավի մարդիկ, սովետական մարդիկ, լավ հասկացան իրար:

— Իսկ ճանապարհները ինչպե՞ս են,—հարցրեց Կոմիտասը:

— Խիստ ծանրաբեռնված...բայց Ձեզ համար բոլոր սիմաֆորները բաց են...

Նրանք նորից ժպտացին բարեկամաբար և բաժանվեցին որպես հին ծանոթներ: Մանթաշյանը ուրալցուն ուղեկցելով հարևան ցեխը պատմում էր.

— Կոմբինացված աշխատանքում յուրաքանչյուր պատուտակ ունի իր արժեքը: Իսկ Կոմիտասը, որ գործարանում տիրապետեց բազմաթիվ մասնագիտությունների, վտխարինում է մի քանի մարդու: Նրան կարելի է տեսնել և՛ գոլման ապարատի մոտ, և՛ տրանսֆորմատորը՝ կարգի բերելիս, և՛ էլեկտրամոտորների սարքավորման բաժնում, և՛ էլեկտրոդի ցեխում...Ամենուրեք Կոմիտասը հանդես է գալիս որպես գործին յուսատեղյակ, նորարար: Մազմանյանը նրան անվանում է կորզինացված վարպետ, իսկ պարտքյուրոյի քարտուղար Ոնանյանը՝ տեխնիկական դիտողություններն էնցիկլոպեդիա:

— Իսկ ինչպե՞ս է էլեկտրաէներգիայի մատակարարումը,— հարցրեց ուրալցին, երբ նրանք մտան էլեկտրացեխը:

— Ամեն ինչ արվում է, որպեսզի գործարանն ապահովվի...Քիչ գործ չեն անում հենց այստեղ՝ էլեկտրաէներգիայի խնայողության համար: Ամփոփելով սոցիալիստական մրցության արդյունք-

ները՝ պարզվեց, որ եռամսյակում մինչև հաշվով մեկ տոննա արտադրանք տալու պրոցեսում խնայվել է 120 կիլովատ ժամ էլեկտրաէներգիա:

— Այդ մեծ հաղթանակ է,մանավանդ, որ անցել եք տեղական քարածուխի օգտագործմանը,— բամբ ձայնով ասաց ուրալյին և սկսեց զննել ամպերմաները, ոլոմաները...Մանթաշյանը դեռևս չէր վերջացրել իր միտքը: Նա ուզում էր ասել, որ գործարանը պարարտանյութ է տալիս կոլխոզային դաշտերի համար, կատարում է նաև ռազմական այլ պատվերները...Բայց այդ մինչեն սևավունած ամպերն ավելի խտացան, սկսվեց որոտը և միանգամից սկսվեց տեղատարափ անձրևը: Մանթաշյանը մոռայլվեց: Դեռ մի քանի օր առաջ թիլթեղ չլինելու պատճառով թմբուկներ չարտադրվեցին և արտադրանքը մնում էր դրսում: Սառեցման ցեխը լեփ լեցուն է, ասեղ գցելու տեղ չկա նաև բակում, իսկ անձրևը...—Ու Մանթաշյանը չնչակոտուր դուրս նետեց իրեն:

Սառեցման ցեխից շաքշափող անձրևի աղմուկի մեջից ուրիշ ձայներ էլին լսվում: Մանթաշյանը վազեց դեպի այն կողմը և վարանած կանգ առավ: Մազմանյանը, Ունանյանը, կոմիտասը, Էմման, Ղամբարյանը, Գեղամը և ուրիշներ արտադրանքի առած զանգվածի վերջին կտորները բրեզենտով ծածկած տեղափոխում էին հարևան ցեխերը, կարմիր անկյուններըը, դրասեղյակները:

Անձրևը հորդառատ էր և երկար տևեց, բայց արտադրանքը փրկված էր:

— Շուտով Ուրալից թիլթեղ կստանանք,—ցեխոտված շորերը մաքրելով ասաց Մազմանյանը:— Այնուամենայնիվ անհրաժեշտ է նոր ծածկոց կառուցել հենց վաղը: Ոչ մի գրամ արտադրանք չպետք է կորչի, ոչ մի գրամ...

— Աշխատանքից հետո,—եռանդով միջամտեց Կոմիտասը,—մենք ինքներս կկատուցենք ծածկոցը։

— Իսկ Ուրալը ձեզ թիթեղ կտա, որքան էլ ծանրաբեռնված է երկաթուղին,—նույն բամբ ձայնով ասաց Ուրալից եկած բարձրահասակ մարդը։

— Երկաթուղայիններըը կօժանդակեն մեզ,—եզրակացրեց Ունանյանը։

Սառնցման գնխում մարդիկ հավաքված հանգիստ լսում էին ուրալցուն, որը վագոնիկի վրա նստած և երկարաճիտ կոշիկները շլինելով սառամոմ էր, թե ինչպես Ուրալում էլ մարդիկ ապրում են ադամաճակատային կյանքով և թե ինչպես են կոփում հաղթանակը։

24.

Առավոտյան Լևոնենց տան ընդարձակ բակը մոտավ մի եզատայլ։

— Իվան Գավրիլի՛չը... բացագանչեց Լևոնը և վազեց դուրս։

— Ну, Левончик, как живем?—նրան գրկելով հարցրեց Իվան Գավրիլիչը։

Լևոնը երեխայի նման ուրախացած Իվան Գավրիլիչին առաջնորդեց տուն և անմիջապես վերադառնալով բակ՝ եզներն արձակեց, ապա բարձրացավ սայլի վրա, խոտ իջեցրեց, լցրեց եզների առջև, ձեռքով շոյեց մերթ այս, մերթ այն եզան գլուխը, մեջքը։ Իվան Գավրիլիչը հաղթանդամ, բարձրահասակ, երկար մորուքով, տիպիկ ռուսական արտաքինով մի մարդ, նայում էր լուսամուտից, նայում էր Լևոնին և բավականությամբ շոյելով մորուքը՝ հրճվում.

— Да, вот это человек...Ինչ որ սովորեցրել եմ երեխա ժամանակ, չի մոռացել։ Հիմա մեծ մարդ

է դարձել, հրկիզմի քարտուղար է, բայց էլի պետական աշխատանքը սիրում է:

— Այո՛, շատ է սիրում,—Իվան Գավրիլիչին ջուր տալով ասաց Աննան,—մի չարաթ առաջ տուն եկավ ամբողջովին հոգնած: Նայում եմ՝ ձեռքի ափերի մեջ բշտիկներ են դուրս եկել: Այդ ի՞նչ է: «Վաղուց է հունձ չէի արել, խամացել եմ, սարում հունձ արինք, շատ լավ էր», պատասխանում է նա: Այդ լավ է, Իվան Գավրիլիչ, կարծես թե թարմանում է: Հը՛, ի՞նչ կասես, Իվան Գավրիլիչ:

Իվան Գավրիլիչը մտազբաղ նայում էր դուրս: Աննան զարմացած մոտեցավ նրան, ոտից գլուխ զննեց.

— Չես լսո՞ւմ, Իվան Գավրիլիչ, ծերուիթյունը հալթե՞լ է, վատ ես լսում:

Իվան Գավրիլիչը սթափվեց և կարծես վիրավորված պատասխանեց.

— Ну, что ты, Анна Ивановна!,—ապա նորից մխրուքը չոյելով ավելացրեց.—Дело есть важное...

Լևոնը մորը պատվիրեց թեյ բերել և նատեց Իվան Գավրիլիչի կողքին:

— Ես լսում եմ, Իվան Գավրիլիչ:

— Դու հո ինձ ճանաչո՞ւմ ես,—լուրջ ու խորհրդավոր հարցրեց նա և առանց պատասխանի սպասելու շարունակեց.—Քեզ փոքրուց գիտեմ: Հորդ հետ հին բարեկամներ ենք: Գյուղից ուղիղ գալիս էի այստեղ որպես իմ հարազատ տունը: Սչնանը կարտոֆիլ, յուղ ու պանիր էի բերում քաղաքում վաճառելու, այստեղ էի լինում: Դեռ Նիկոլայի ժամանակ մեր ընտանիքները շատ մոտ էին: Դաշնակցականների օրոք ես և քո հայրը պայքարում էինք նրանց դեմ:

Իվան Գավրիլիչը լռեց, ապա մորուքը չոյելով, առանց գլուխը բարձրացնելու շարունակեց.

— Ինձ համար մեր կոլխոզի մասին է։ Մեր կոլխոզն այժմ վատ վիճակում է, շատ վատ։ Գյուղում պարտիական կազմակերպություն չկա։ Հարկավոր է այդ մասին դուք մտածեք։ Կոլխոզի նախագահ Ղարադյոզյանը գործը ձախողել է։ Մի կողմից էլ պատերազմի ժամանակվա դժվարությունները։ Կոլխոզնիկները յավ աշխատել գիտեն, բայց նրանց կազմակերպող չկա։ Ղարադյոզյանը վաղուց է կորցրել իր հեղինակությունը։ Նրան չեն հարգում, չեն յուսում...Դե՛, ասենք ինչ հարկավոր է...Մի խոսքով վատ է գրությունը բլրադյուղում։ Դու շրջանի մասշտաբով աշխատող ես, ինչպե՞ս ես հանդուրժում, որ կոլխոզը ձեռքից գնա։ Ասում են այժմ ամեն ինչ ռազմաճակատին։ Շատ լա՛վ։ Բայց ինչ պետք է ուղարկենք ռազմաճակատ, երբ բերքը փչացվում է, երբ կոլխոզի ունեցվածքն աչք ու ձախ հափշտակվում է։ Հետո ինչ կասեն, Իվան Գավրիլիչը կո՞ւյր է եղել, ինչ է։ Նա ուսուցչության ժամանակ կռվել է դաշնակցականների դեմ, եղել է կոլխոզի հիմնադիրներից մեկը, կռվել է կուլակային սաբոտաժի դեմ։ Իսկ այժմ աչքերը փակում է։ Չէ՛, այդպես չի կարելի, տե՛ս, Լևոնչիկ, ավելի բարձրի՛ն կդիմեմ, Ստալինին կգրեմ, հա՛, ինձ Իվան Գավրիլիչ կասեն...

Թեյի ժամանակ Լևոնը հանգստացրեց Իվան Գավրիլիչին և ասաց, որ ամեն ինչ կարվի կոլխոզի գործերը կարգավորելու համար։

— Հույս քեզ վրա է հա՛...—Ավելացրեց Իվան Գավրիլիչը թեյով լիքը բաժակը շրթունքներին մոտեցնելով, բայց նորից ետ տանելով ասաց.

— Տե՛ս, չմոռանաս խոսքերս։

Լևոնը մանրամասն հարց ու փորձ արավ կոլ-

խոզի բոլոր գործերի մասին և Իվան Գավրիլիչից ներողություն խնդրելով՝ գնաց շրջկոմ: Աննան սկսեց Թեյասեղանը հավաքել և դրուցել նրա հետ:

— Հիշո՞ւմ ես, Իվան Գավրիլիչ, այնքան էիր եկել մեզ մոտ, այնքան ընտելացել, որ մեր տան անդամներից չէինք բաժանում: Լևոնս շատ էր սիրում քեզ: Երբ ես նրան դուրս էի տանում, նա ուշադիր նայում էր փողոցով անցնող սայլերին և հարցնում.

— Մայրիկ, Իվան Գավրիլիչը ո՞ր սայլի վրա է, նա մեր տուն կգա՞ այսօր: Այն ժամանակ Լևոնը բոլոր մոտուքավոր մարդկանց Իվան Գավրիլիչ էր անվանում: Պատահում էր, որ չնչակտուր վազում էր տուն և ասում. «Փողոցում մի Իվան Գավրիլիչ տեսա, հարցրի, թե չե՞ս տեսել արդյոք մեր Իվան Գավրիլիչին, նա մեր տուն չի՞ գալու, վրաս ծիծաղեցին: Իվան Գավրիլիչը լավն է, բարի, նրա սայլն էլ լավն է, եզներն էլ»:

Իվան Գավրիլիչը հաճույքով չոյում էր մորուքը և ժպտում.

— Շատ լավ տղա է Լևոնը...Մի տես, մեր գյուղում ինչքա՜ն են սիրում նրան: Կոլխոզի հաշվետար Նատալյան, որ մեր կոմսոմոլի քարտուղարն է, խոսքի տակին, խոսքի գլխին Լևոնի անունն է տալիս: Ոսկի՛ տղա է, Աննա Իվանովնա...

Նրանք դեռ շարունակում էին իրենց անցյալը հիշել, երբ աշնանային սառն օդից կարմրատակած ներս մտավ Նատալիա Միխայլովնան և արձակից բրդյա հաստ շալը, գցեց մահճակալի գլխին:

— Ինչո՞ւ ուշացաք,—սիրալիր դիմեց Աննան Նատալիա Միխայլովնային,—ինչպե՞ս էր Լյուդմիլան, ի՞նչ էր ասում,—և ձեռքը պարզելով Իվան Գավրիլիչին ու առանց սպասելու Նատալիա Միխայլովնային ուղղած հարցերի պատասխաննե-

գին ավելացրեց,—խնդրեմ ծանոթացեք Նատալիա Միխայլովնայի հետ։ Մոսկվայից է եկել, էվակուացված է։

—Մոսկվայի՞ց,—արձագանքեց ծերունին և նրա աչքերում թվում էր, թե Մոսկվա անունը վառեց մի անմարելի կրակ։—Մոսկվա, ա՛խ... Հիմա Մոսկվան ծանր օրեր է ապրում։ Դուք, Նատալիա Միխայլովնա, տեսե՞լ եք ընկեր Ստալինին։

— Ինչպես չէ, ինչպես չէ։

— Ստալինը Մոսկվայումն է, նշանակում է գերմանացիները ոտք չեն դնի այնտեղ։

— Մենք բոլորս էլ այդ հույսով ենք,—ավելացրեց Աննան և ապա դիմեց Նատալիա Միխայլովնային,—իսկ դուք ոչինչ չեք խոսում Լյուդմիլայի մասին։

— Լյուդմիլան դարձել է անհամբեր և ասում է՝ «ինչ ուզում է լինի, այս շաբաթվա վերջը պետք է դուրս գրվեմ»։

Աննան նկատելով ծերունու զարմացական հայացքը, սկսեց պատմել, թե ինչպես պատերազմի սկզբից մայր ու աղջիկ միմյանցից բաժանվում են, Լյուդմիլան ռազմաճակատում վիրավորվում է, իսկ Նատալիա Միխայլովնան Մոսկվայից էվակուացվում է և մայր ու աղջիկ միմյանց հանդիպում են այստեղ։

— Լյուդմիլան սքանչելի աղջիկ է։ Ես անսահման սիրում եմ նրան,—ավելացրեց Աննան։

Նրա պատմածը լարված լսում էր ծերունին և դեմքից չէր հեռացնում հիացական, բարի ժպիտը։

25.

Ձյան խոշոր փաթիլները դանդաղ իջնում էին, նստում կտուրներին, ծառերին և ծածկում պար-

տեղները, փողոցները: Այդ օրը, հնացած մոայլ եղանակին, Նատալիա Միխայլովնան, Լևոնը և Աննան արտակարգ ցնծության մեջ էին: Լյուդմիլան լրիվ ապաքինվելուց հետո դուրս էր պրծել դասախտալից: Եվ ահա նրանք Մանթաշյանի ավտոյով գնում էին Լյուդմիլային տուն բերելու: Մի ժամից հետո, երբ նրանք արդեն վերադարձան դասախտալից և մտան իրենց սենյակը, Աննային թվում էր, թե Լյուդմիլան իր հետ մի արեվոտ գարուն բերեց իրենց բնակարանը: Նա այնքան ուրախ էր և այնպե՜ս աշխուժացած: Այդ պղում էր նաև Նատալիա Միխայլովնան և մտքում անդադար կրկնում.

— Աննան պարզապես մի հրեշտակ է, այո՛, այո՛, հրեշտակ: Ես բացի մեր ուսանելից ուրիշ ժողովրդի մարդկանց չէի տեսել: Որքա՛ն լավ են այս մարդիկ:

Իսկ Լյուդմիլան անվերջ ժպտում էր և իր պատհունակությունն էր հայտնում ջերմ ընդունելության համար: Նա առաջին անգամ չէր, որ եղել էր այդ հարկի տակ, բայց երբեք այդ տունը իր ամեն, ամեն մի կահույքով այնքան հարազատ, այնքան սիրելի, ջերմ չէր թվացել, որքան այդ օրը, այդ ժամին: Ակնհայտորեն նրա այդ ջերմությունը դեպի այդ ընտանիքը սաստկացել էր իր մոր այնքա՛ն զմայլանքով լեցուն դավեսաններից, դավեսանները, որոնք ուղղված էին Աննային, հայ կնոջը:

Որքան էլ այդ ամենը հաճելի էին, ոգևորիչ, այնուամենայնիվ մի ժամից հետո նրան պետրողը կզբաղ, որ գոսպիտալից դուրս գրված հայրենասեր աղջիկը այլ խոհերով էր ապրում: Այո՛, նա խորհում էր այն մասին, թե հիմա ո՛րտեղ է

էր ծերունի պարտիզան հայրը, ու՛ր է և ո՛ր ճա-
կատում է կռվում իրենց դիվիզիան, որի հրամա-
նատարները, քաղաքհատուցները և մարտիկները
հանուն հայրենիքի, հանուն Ստալինի այլևս ոչ մի
քայլ ետ չէին նահանջում: Ինչ եղավ իրենց տան-
տարական դամարտակը: Այս մտքերով նա շատ
անգամ էր ապրել, բարձր կերամատիճանի ժամա-
նակ պատանցել, բայց երբեք այնքան խոր չէր զգա-
ցել այն բոցավառ կարոտը, որ այժմ զգում էր:
Ինչ, ինքը հիմա նատած մնա տաքուկ անկյունում,
որտեղ ուրախ բոցերով ճարճատում է վառարանը,
տարածում հաճելի ջերմություն...Պատերին մե-
կացած ծառերի վրա հանդարտ ու անշշուկ իջնում
էին ձյան փաթիլները: Իր սիրած տղան, մայրը,
նատած են կողքին: Թվում է, թե աշխարհում ոչ
պնահեղ պատերազմ կա, ոչ հրանոթներ են որո-
տում, ոչ թշնամու սավառնակները հոնդում և
ռումբեր են թափում և ոչ էլ ֆաշիստական խոյա-
կան տանկերն են ահ հեղեղի նման շարժվում դեպի
Մոսկվա:

Շուռտվ նրա սիրուհյունը նկատեցին և՛ Լևո-
նը, և՛ Աննան, և՛ մայրը:

— Ինչ է պատահել քեզ, Լյուդմիլա,—հարց-
րեց Լևոնը, երբ ճաշից հետո նրանք առանձնացան
մյուս սենյակը:

— Լյովա...— չընջաց Լյուդմիլան և մի պահ
լանջ առավ,— Դու ինչպե՞ս ես քեզ հանգիստ
զգում այստեղ: Ճշմարիտ է, թիկունքում աշ-
խատելը նույնքան անհրաժեշտ է, որքան կռվելն
այս օրերին, բայց ես չեմ կարող հաշտվել այն
մտքի հետ, որ հիմա ես գտնվում եմ թիկունքում,
այն ժամանակ, երբ...

— Լյուդմիլա՛, — հառաչեց Լևոնը, — գուր ես

կարծում, որ իմ այստեղ մնալը ինձ համար հանգիստ է և ուրախալի: Դու ճշմարիտ ես: Ես ինչքա՛ն եմ դիմել, թախանձել, որ ուղարկեն ռազմաճակատ, բայց ի՞նչ արած: Ես չեմ կարող չենթարկվել պարտիային: Մենք պետք է գործենք այնպես, ինչպես պարտիան է պահանջում:

— Իսկ ես կդիմեմ պարտիային: Զնայած բժշկական հանձնաժողովը վեց ամիս արձակուրդ է տվել, կխնդրեմ ուղարկել այնտեղ, որտեղ ինքս եմ ցանկանում: Ես վաղն և եթ կմեկնեմ:

— Ես վաղուց զնացած կլինեի, եթե ընկեր Մանթաշյանը թույլ տար:

— Ջղիտեմ, ընկեր Մանթաշյանը թույլ կտա՞ քեզ, թե ոչ, ինձ ոչ ոք չի կարող արգելել: Ես կգնամ իմ ընկերներին կհասնեմ, — վճռական ասաց Լյուդմիլան և լռեց:

Լևոնը Լյուդմիլայի հետ զրուցելուց հետո երեն պրսում էր մի տեսակ անհարմար վիճակում: Ուրքա՛ն ճիշտ էր Լյուդմիլան, որքա՛ն ապնիվ էին նրա պատճառաբանները: Արդարև մի վիրաւոր աղջիկ, որի վերքերը հազիվ էին սպիանալ, ուզում է նորից մեկնել ռազմաճակատ, նորից մտնել մարտի մեջ: Եվ ինքը այս բոլորի մասին դեռ այդ վճռականությամբ չի խոսել: Այո՛, այո՛, պետք է գնալ Մանթաշյանի մոտ և անկեղծորեն պատմել Լյուդմիլայի ասածները, իր պատճառաբանները և ասել. «Ընկեր Մանթաշյան, ես չեմ կարող, ես չեմ կարող այլևս այստեղ մնալ, հասկանո՞ւմ եք: Ինդրում եմ, ընկեր Մանթաշյան, թախանձում եմ, որ ինձ այս վիճակից դուրս բերեք»: Նա գնաց և ուշ գիշերին, երբ Ման-

Թաչյանը նստած դյուղերից ստացված նամակները, դիմումներն էր կարդում, Լևոնը նրան պատմեց ամենը: Մանթաչյանը միայն այսքանն ասաց.— Հանդստացիր և վաղը Լյուդմիլայի հետ արի այստեղ:

Եվ Լևոնը վերադարձավ այն հույսով, որ Մանթաչյանն արդեն իր թախանձանքը լսեց և ընդառաջեց: Լևոնն այդ գիշեր չքնեց: Դեռ պրսում թանձր մառախուղ էր և ժամը 7–ը չկար, որ նա Լյուդմիլայի հետ դուս եկավ տանից ու մեկնեց շրջկոմ: Նրանք գրեթե ասելիք չունեին միմյանց և անհամբեր սպասում էին Մանթաչյանին: Լևոնը անհամբեր նայում էր ժամացույցին և ամեն մի ոտնաձայն լսելիս կարծում էր, թե հիմա ուր որ է ներս կմտնի Մանթաչյանը: Նա ցանկացավ տան հետևախոսով կապվել Մանթաչյանի հետ, բայց անհարմար դգաց:

Եկավ քարտուղարուհին, որի վերաբերմունքը մորթյա օձիքին շողում էին եղյամի աստղերը: Վերջապես եկավ և Մանթաչյանը: Նրանք երկար, շատ երկար զրույց ունեցան և երբ Լյուդմիլան գարձյալ համառում էր, Մանթաչյանը նրան ասաց.

— Սիրելի Լյուդմիլա, թողեք ձեր երիտասարդական տաքարյունությունը և խոսեք լուրջ: Կարծեմ ձեզ համար պարզ պետք է լինի, որ հիմա թիկունքն էլ պատերազմի մեջ է: Ի՞նչ է, դուք մոռացե՞լ եք ընկեր Ստալինի այն դրույթը, թե հիմա թիկունքը և ռազմաճակատը կազմում են մի միասնական լագեր: Ես հարգում եմ ձեր հայրենասիրությունը և ընկերասիրությունը: Ուղղակի հիանում եմ, թե ինչպես դուք ազնվորեն և սրտի անհուն ցավով հիշում եք ձեր ընկերներին: Բայց, ի՞նչ եք կարծում, եթե բոլորը ձեզ նման մտածեն, մեկնեն

ռազմաճակատ, էլ ո՞վ կմնա թիկունքում և հենց այդ քո ընկերներին ո՞վ կհասցնի հաղուստ, ուտելիք, վիրակապեր և դեղորայք: Մի րոպե այդ մասին խորհե՞լ եք: Հիմա մեր առաջ հարց է դրված՝ ով ինչպես է ծառայում հայրենիքին, լինի թիկունքում թե ռազմաճակատում, այդ միևնույն է:

Այս հանդիպումից հետո մի շաբաթ չանցած՝ նրանք մեկնեցին Բլրապյուղ: Մանթաշյանը, Լեվոնն ու Էյուդամիլան գյուղ հասան կեսօրին: Կոլխոզի գրասենյակում նստած էին մի քանի երիտասարդ ու հասակավոր մարդ, որոնք Մանթաշյանին տեսանելուն պես ոտի կանգնեցին և հարցալի բարևեցին: Մանթաշյանը հերթով նեղկանների ձեռքը սեղմելով ասաց.

— Այս ի՞նչ է, ժողո՞վ է:

— Ի՞նչ ժողով, հենց այնպես, զրուցում ենք, — քաշվելով պատասխանեց մեկը:

— Ինչի՞ մասին:

— Դե պարզ է, ինչի մասին կզրուցեն հիմա, պատերազմի՛, — պատասխանեց մի երիտասարդ:

— Իսկ ո՞ւր է կոլխոզի նախագահը:

— Ո՞վ իմանա նրա բաները, գուցե գնաց զրույցը մի քիչ տաքացնելու, — չատ ատեն ու հանդիման պատասխանեց մի ալեհեր ծերունի:

— Վաղո՞ւց:

— Ո՛չ, մեկ-երկու ժամ առաջ:

Մանթաշյանը կատարածուին ուղարկեց նախագահին կանչելու և սկսեց զրուցել գյուղացիների հետ:

— Այդ ինչպե՞ս է, որ աշխատանքները թողած հանդիման նստել եք:

— Ընկեր Մանթաշյան, ի՞նչ անի էն գործը,

որ խելքը գլխին հրամանատար չունի: Էդ ո՞ր գինվորն է ինքնագլուխ կռվում,—պատասխանեց Իվան Գավրիլովիչը,—մենք մեր գլխին տեր չունենք:

Մանթաշյանը ուշադիր նայեց նրան:

Վերջապես երերալով ներս մոտավ նախագահը և Մանթաշյանին տեսնելով ուզեց զղաստանալ, գլխարկը հանելով և պղտոր, փոքրիկ աչքերը կկոցելով՝ բարևեց և նստեց իր աթոռին:

— Հետաքրքիր է, ընկեր նախագահ, որտե՞ղ էիք և ի՞նչ էիք անում,—հարցրեց Մանթաշյանը:

Նախագահը սթափվեց, աղերսական հայացք նայեց հարց տվողին ու թոթովեց.

— Որտեղ էի՛, որտեղ էի՛...բրիգադիրներից մեկի տանը:

— Իսկ ի՞նչ էիք անում բրիգադիրներից մեկի տանը:

— Ինչ էի անո՞ւմ, ինչ էի անո՛ւմ,—կակազեց նա,—հենց էնպես:

— Երևի հենց ենպես խմում էիր էլի՞:

Լեռնը նրանց աաածները թարգմանում էր Էյուդմիլային, որը զգվանքով էր նայում նախագահին:

— Է՛, ուզածին ասին՝ վիրդ ծուռն է. պատասխանեց—«Ի՞նչա է ղուզ, որ վիրս ղուզ լինի»: Գիտե՞ք ինչ կա, անբիտակից մարդիկ են...Հազար անգամ եմ ասել, բան չի ղուրս գալիս,—մատները ճթճթացնելով և հորանջելով արդարացավ կոլխոզի նախագահ Ղարադյոզյանը: — Համ էլ, ղե, պատերազմ է...

— Իսկ կոմերիտական կազմակերպությունը ի՞նչ եղ...

— Կոմերիտական՞ն, — ուսերը վեր քաշելով ընդհատեց Ղարադյոզյանը,— մեզ մոտ այդպիսի կազմակերպություն չկա:

— Ինչպե՞ս չկա,— միջամտեց հաշվետար Նաստաշան,— երկու օր առաջ էր կարծեմ, որ ձեր զեկուցումը լսեցինք, մոռացե՞լ եք, ինչ է:

Ղարադյոզյանը կատարության բռունցքները սեղմեց: Քանի՞ պլհանի է Նաստաշան, որ ընդդիմախոսում է իրեն, այն էլ հյուրերի ներկայությամբ: Ջննադատությունը լավ բան է, այդ մասին նա շատ է խոսել, բայց այդ չի նշանակում, թե իրեն՝ կոլխոզի վարչության նախագահին կարելի է քննադատել,— անցավ նրա մտքով և նա կատաղությամբ նայեց Նաստաշային:

— Դու ձայնդ կտրի՛ր, երբ մեծերը խոսում են. կոտրած ղդալի նման մեջ մի՛ ընկնի, քո գործն արա,— ու թունավորված նման մռնչաց:

— Թող նա խոսի,— դեմքի խիստ արտահայտությամբ միջամտեց Լյուդմիլան,— երևում է, որ կոմերիտական կազմակերպություն կա, բայց դուք չեք ուզում զգալ նրա գոյությունը:

— Այո՛, այդպես է,— Լյուդմիլայի խոսքերից ավելի սիրտ առավ Նաստաշան,— կոմերիտական կազմակերպությունը կոչված է դրել ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, արմատավորել գործակալությունը, պատասխանատվության կանչել լոչերին: Կոլխոզի վարչությունը հաշվի չի առնում մեզ, մեր որոշումը մնացել է անկատար:

— Ամեն խաղ խաղացինք, մնաց «Սարի սըմբուլը»: Այդ էր պակաս, որ կոմերիտմիությունն ինձ զեկավարի, գուցումներ տա,— բռունցքները սեղմելով և ատամները կրճտացնելով ջղայնացավ

Ղարագյոզյանը,—դուք ունեք ձեր խնդիրները, ես՝ իմը... Պատերազմի տարի է...

Ղարագյոզյանը ավելի մոայլվեց, գայրույթից աչքերն ավելի արյունակարեցին, բայց խելքն նրա դլխում մի միտք հղացավ և նա ցանկացավ իրագործել այն:

— Լա՛վ,— խորամանկորեն ժպտալով ասաց նա և մատները ճթճթացնելով շարունակեց,—լանենք այնպես, ինչպես հարմար է: Այժմ բարեհաճեցեք մեր տուն գնալ, քաղաքից եք գալիս, մի բան կուտենք... Ո՛չ, ո՛չ, մի՛ հրաժարվեք, խընդրում եմ: Գործը՝ գործ, բայց ատամոքսն լրենն է պահանջում:

— Բայց ձեր ատամոքսն լրենը պահանջել ու ստացել է և այլևս ոչ մի բանի կարիք չի զգում,— խիստ տոնով ասաց Մանթաշյանը:

Գրասենյակի այս ու այն կողմից լսվեցին զսպված ծիծաղի հնչյուններ:

27.

Մի քանի օր էր, որ Լևոնը զոնվում էր Ինձաբաշատում: Սկսվել էին զարնանացանի աշխատանքները: Կոլխոզը մեծ է, մշակելու հողերը շատ, իսկ աշխատող ուժը քիչ: Կոլխոզի վարչության նախագահ Սրապը կատարեց ուժերի զատավորում: Լևոնն ու Սրապը գիշերը եղան տրակտորիստների մոտ: Գարնանային լուսնյակ գիշեր էր: Տրակտորիստներն իսկույն ճանաչեցին նրանց:

— Հիշում եք, չէ՞,—ասաց տրակտորիստներից մեկը,—մեր «Կոմերիտական չելյուսնեցները»... Նրանք հիմա ֆրից են ոչնչացնում այնտեղ, ճակատում:

Լևոնը ժպտալով գլուխը դրականորեն շարժեց, ապա կռանալով առաջեց վարի որակը:

— Տրակտորիստն ու տանկիստը մի մորից են ծնվել,— կատակով ասաց մեկ ուրիշը,— տանկիստներն այնտեղ են իրենց պարտքը կատարում, մենք՝ այստեղ:

— Այդ լավ ես ասում,— միջամտեց Սրապը,— վարը ոչինչ, բայց դու վառելանյութի դերածախս ես անում: Իսկ դու գիտե՞ս, որ յուրաքանչյուր կաթիլ բենզինը, նավթը, յուղը...

— Ներողություն, ընկեր նախագահ,— վիրավորված ընդհատեց տրակտորիստը,— ես դերածախս չունեմ: Պարզեցինք, հաշվեատարն է սխալվել: Ընդհակառակը, վառելիքի ոնտեսում ունեմ...

— Շատ համարձակ բաներ ես ասում, կատուպենք,— ասաց Սրապը և Լևոնին թևանցուկ անելով ավելացրեց.

— Դու հիմա տես մեր վարպետներին, թե ինչպես է նա մյուս կոմերիտուհիների հետ սովորել տրակտորի դործը և ինչպես է վար անում:

Լևոնի դեմքը փայլեց ուրախությունից, երբ լսեց, որ կոլխոզի նախագահը գոհ է կոմերիտականի կազմակերպության նախաձեռնությունից: Սրապը շարունակեց.

— Տղաներից ետ չի մնում... Աղասին էլ էր այդպես աշխատում, ոսկի տղա էր, մի աշխարհ արժեր, աշխարհ...

Այդ մի րոպեն վարպետի տրակտորը հրընդարձակ մտեցավ նրանց՝ սև, խոր ակոսներ շարելով: Մի արտասովոր դեղեցկություն էր ստացել այդ պահին տրակտորի վրա նստած այդ կոմերիտուհին: Տրակտորն արագ անցավ Լևոնի ու

Սրապը մոտով: Վարդիթերը ժպտալով աչ ձեռքը բարձրացնելով ողջունեց նրանց: Ապա ինչ որ բան ասաց, որը խլացավ հունդյունի մեջ. նրանք ոչինչ չհասկացան: Կոլխոզի նախագահը խնդուն ծնկեց, չափեց վարի խորությունը և Լևոնին ցույց տալով չափը, հիացմունքով բացատրեց.

— Ա՛յ, հարյա լինի մորդ ասած կաթը... հա-լալ լինի քեզ նրան Սղաման...Թող վերադառնա, մի այնպիսի հարսանիք անենք, այնպիսի՛, որ յոթ օր, յոթ գիշեր տևի...

Սրապը դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ հե-վից նրանց մոտեցավ տարեց մի կոլխոզնիկ և պլխարկը հանելով ու ճակատի քրտինքը սրբելով՝ մոտը տաց.

— Ընկեր Սրապ, լսեցի՞ք ինչ վատ բան է եղել, Գրիգորը խփվել է, մեր Գրիգորը...

— Ո՞ր Գրիգորը, միչուրինակա՞նը...

– Գրիգոր Սարգսյանը...

Լևոնն ու Սրապը իրար նայեցին ու նրանց սիր-տը ճմլվեց: Տրակտորիստներից մեկը, որ մոտեցել էր նրանց, լռկնելով ցած՝ վշտացած հառաչեց.

— Վա՛յ, Գրիգոր ջա՛ն, ախպե՛ր ջան, ես քո հոգուն մեռնեմ..Վայ, Գրիգոր ջան...

Լևոնն ու Սրապը լուռ հեռացան տրակտորիստ-ների բրիգադայից և քայլերն ուղղեցին Սարգսյան-ների տուն, իսկ տրակտորիստները այդ գիշեր այլևս չերգեցին: Նրանցից ամեն մեկը լուռ կրում էր խոր վիշտը:

28.

Լևոնն ու Լյուդմիլան ավելի շատ հանդիպում էին հրճվանքով, քան թե տանը և երկար խոսում էին առաջիկա անելիքների մասին:

— Երբ պատերազմը վերջանա, կոնաբլատուրիան նորից լայն կբացի դռները,—ասում էր Լյուդմիլան:—Ես կվերադառնամ: Դու էլ կգաս, Լևոն,—նա վայրկյան ոսկեդուն խոպոպները չփեղկել ղպաց, որ չվոխվում է: Իսկ Լևոնը բարեմխիթ ժպիտը դեմքին, մեղմ երգում էր մի երգ: Նա պիտանէչ նայվածքով մոտեցավ Լյուդմիլային, բայց խոսքն կանգ առավ...Ո՞ւր կորան այն խոսքերը, որ նա պատրաստվել էր ասելու:

Լուսթոնը խզեց մոտեցող ոտնաձայնը:

— Ընկեր Մանթաշյանը,—շտապ դեպի դուռը դնալով ասաց Լևոնը: Լյուդմիլան փոքր ինչ զըրտմեց, բայց Մանթաշյանի ներս մտնելուն պես ինքնաբերաբար ոտքի կանգնեց:

— Այդ լավ է, որ երկուսդ միասին եք,— սև ու խոշոր աչքերը Լյուդմիլայի սրտնաոես դեմքին, լուրջ ասաց Մանթաշյանը: Ապա դառնալով Լևոնին, հարցրեց,—Արքունհոն հեռացրի՞ք և՛ աշխատանքից, և՛ կոմերիտմիութենից:

Լևոնը նրա ձայնի մեջ զգաց հանդիմանություն, նախատինք և հարցական նայեց շրջկոմի քարտուղարին, որը յայնեգր դլխարկը հանելով, հանդիստ նստեց բազկաթոռին և ոտը վոտի մեղմաբար ասաց.

— Շտապե՛լ եք: Պատերազմն անսովոր բան է, երիտասարդությունը չի սեսել...Կան տղաներ ու աղջիկներ, որ չվոխվում են, չեն կոդմնորշվում, բայց նրանք թշնամիներ չեն: Հեռանալես նրանց պետք է օդնել, ոչ թե հեռու մղել: Կոմերիտմիության շրջկոմը սխալվել է Արքունհոն նկատմամբ:

Այս ասելով Մանթաշյանը ծոցատրպանից հա-

նելով մի թուղթ, մեկնեց Լևոնին: Այդ Սրբուհու դիմումն էր: Լևոնն այն բարձրաձայն կարդաց.

«Այն օրից, ինչ ես հեռացա շրջկոմից, շատ բան վերապրեցի: Ինձ համար մահու չափ ծանր է, որ վախկոտություն եմ հանդես բերել այն ժամանակ, երբ որոշվում է երկրի բախտը:

Չեղ եմ դիմում և հույս ունեմ, որ ինձ կհասկանաք: Ես չեմ ուզում, որ դուք ինձ խղճաք: Թող կոմերիտմիությունն ինձ ների: Ես պատրաստ եմ հենց այսօր մեկնել ռազմաճակատ և արյամբ քավել մեղքերս...

Չեմ կարող փողոց դուրս գալ: Ամաչում եմ ուղիղ նայել իմ ընկերներին: Ինձ թվում է, թե բոլորը նայում են ինձ, մատնացույց անում. «Ահա նա՛, վախկո՛տը, մորթապաշտը»:

Բայց դուք, ընկեր Մանթաշյան, օգնեցեք ինձ, մի՛ թողեք ինձ մենակ»:

Մինչ Լևոնը կարդում էր, Մանթաշյանը Լյուդմիլային ուշադրեն պատմում էր դիմումի բովանդակությունը:

— Պատերազմը քննություն է բոլորիս համար,— կանդնելով տեղից ասաց Մանթաշյանը,— երիտասարդների համար:

Նա մի պահ կանգ առավ, չվեց ալեխառն մազերը, ապա նայելով մերթ՝ Լևոնին, մերթ՝ Լյուդմիլային շարունակեց.

— Բայց քննությունից կտրվողներ կան: Նրանց պետք է օգնել, որ վերաքննությունը հաջող տան:

— Սխալվել եմ, ընկեր Մանթաշյան,— կարմրելով պատասխանեց Լևոնը և գլուխը կախեց:

— Անհրաժեշտ է Սրբուհուն ներգրավել աշխատանքում, վերականգնել կոմերիտմիության

ՙմեջ,—վճռականապես առաջարկեց Լյուդմիլան, հարցական նայելով Մանթաշյանին:

— Այո՛: Չէ՞. որ կոմերիտմիությունը պետք է դաստիարակի երիտասարդներին, ոչ թե վանի նրանց,—պատասխանեց որ Լևոնը խիստ ոգեվեց, ձայնը մեղմացնելով և համոզիչ տոնով շարունակեց Մանթաշյանը,—ուղարկենք նրան դործարան: Բանվորական միջավայրը կդաստիարակի նրան: Դուք ձեր հերթին հատուկ ուշադրություն դարձրեք... օգնել է պետք: Հեռացնելը թույլ միջոց է:

Գիշերվա ժամը մեկին Մանթաշյանը դուրս եկավ իր առանձնասենյակից, մոտեցավ կոմերիտմիության շրջկոմի դռանը և արագ քաց անելով՝ ձայնեց Լևոնին, որը նստած կարդում էր ռազմաճակատից ստացած նամակները: Լևոնն սթափվեց և խիստ ոտի կանդնելով՝ նայեց իր դիմաց կանդնած Մանթաշյանին:

— Հը՛, ի՞նչ ես անում, չե՞ս ուզում գնանք դործարան:

— Գնա՛նք, ինչո՞ւ չէ,—ուրախացած ասաց Լևոնը և հավաքեց դրասեղանի վրայի նամակները:

— Շա՛տ նամակներ ես ստացել,—նայելով Լևոնի ձեռքի ծրարներին ասաց Մանթաշյանը,—ի՞նչ են դրում:

Լևոնը ցանկացավ նամակներից մեկը կարդալ, բայց Մանթաշյանը հասկացրեց, որ արդեն ուշ է, գործարանի դիրեկտորը և պարտբյուրոյի քարտուղարն սպասում են: Նա նամակները դրեց գրպրոցի մեջ, փակեց և արագ դուրս եկավ շրջկոմի

քարտուղարի հետ: Երկու րոպեից հետո խավարն փո-
ղոցով սլանում էր սիտոն: Մելքեման կանգնեց դար-
ծարանի մուտքի առաջ: Լևոնը խնդուն դուրս
եկավ և սկսեց բախել դարպասը: Պահակը բաց
արեց դուռը և ամուր ճռինչով այն վերստին փա-
կելով, նրանց տարավ պահականոց: Նիհար ու չո-
րուկ ծերունին ուղղելով մեծ քթի ակնոցը, առա-
ջին հերթին վերցրեց Մանթաչյանի մշտական ան-
ցագիրը և նրանից պահանջեց անձնագիրը: Ման-
թաչյանը կատարեց նրա ցանկությունը: Լևոնն
անմիջապես ձեռքը տարավ դրպանը և այնտեղից
հանեց իր թղթապանակը: Ինչ հետո, երբ դեռ չէր
վերջացել պահակի ստուգումը, հայտնվեցին Մազ-
մանյանը և պարտքյուրորի քարտուղար Ռևեկյա-
նը: Տեսնելով պահակի արտոդուքյունը, գործա-
րանի դիրեկտորն ասաց պահակին.

— Ինչի անգամ եմ ասել, որ ընկեր Մանթա-
չյանին չկանգնեցնես:

— Ինձ համար օրենքը ամենից բանցր ա,—սա-
ռը պատասխանեց պահակը, սեղանի վրայից վեր-
ցնելով օրմա յրատիրը: Կարծես դրանով ուզում էր
ասել, թե վեճը վերջացած է:

Նրանք մտան գործարանի բակը և նրանց ա-
կանջին հասավ աստիճացող աղմուկը: Լևոնին դուր
էին գալիս այդ հունդյունները: Նրանք ալանների
կատարման մասին զրուցելով մտան հիմնական ցե-
խը, որը մի անսովոր ջերմուքյամբ չոյեց դրսից
եկած մարդկանց սառը դեմքերը: Նրանք ներս
մտան այն ժամանակ, երբ բանվորները էլեկտրա-
կան հասանքով աշխատող գործիքներով ծակում
էին վառարանների դռնակների վրա ատած գան-
դրվածը: Եվ ահա, չատ չանցած, մխյանց եռե-
վից վագոնիկների վրա դրած հրակայուն տաշտակ-
ների մեջ հոսեց բոստրագույն հեղուկը: Գործարա-

նկ թե՛ դիրեկտորը, թե՛ պարտքյուրոյի քարտուղարը մի տեսակ հպարտությամբ էին նայում բանվորների հերոսական աշխատանքին: Մանթաշյանը, որ դիտեր բոլոր առաջավոր բանվորներին, վարպետներին, մոռեցավ Ղամբարյանին, որն իր աշխատանքն արդեն ավարտել և կանգնել էր, սեղմեց նրա ձեռքը և ասաց.

— Հը՛, տրամադրությունդ ինչպե՞ս է:

— Շատ լավ է, ընկեր Մանթաշյան,—ժպտալով պատասխանեց Ղամբարյանը,—բայց որ բանակ չեն վերցնում, դրանից սիրտս տխուր է:

— Կարծում ես քո դրծը ռազմաճակատում կռվելուց պակա՞ս է: Դու այն աստ, պլանները ինչպե՞ս ես կատարում:

— Պլանները... Ինչ ասեմ, թող ընկեր Ոնանյանն ասի:

— Կոմերկատականները մեզ մոտ միշտ էլ առաջավոր են եղել: Ղամբարյանը ռազմական ուսուցման դերապանցիկ է, շատ լավ է աշխատում,— ասաց Ոնանյանը:—Երեկ մեր կոմերկատական ժողովում մեկն ասաց. «Ինչպես ռազմաճակատի պինդվորները չունեն հանգիստ ու դադար, այնպես էլ այստեղ մենք պետք է անդկացնենք այնքան անքուն գիշերներ, մինչև որ հաղթանակի մեր հայրենիքը»:

Ուրիշ բանվորների հետ էլ զրուցելով ու նրանց խրախուսելով, նրանք անցան հավաքման ցեխը: Լևոնը ներս մոնելուն պես տեսավ Սեդային:

— Սեդա՛, այս ժամին այստե՞ղ:

— Այո՛, ընկեր Վահանյան,—շփոթվելով պատասխանեց Սեդան,—ընդմիջման ժամանակ մխինդ է լինելու:

— Սեդան մեր չեֆությունը լավ է վերցրել, ջուռ-չուռ է լինում ցեխերում,— խոսքն ինքն իրեն ասաց Մարմանյանը:

Նրանց մոտեցավ Կոմիտասը: Նրան տեսնելուն պես Մարմանյանը հիշեց.

— Գիտե՞ք, այսօր Կոմիտասը ծանուցագիրը էր տարել: Ես կապվեցի պննկոմի հետ և հայտնեցի, որ Կոմիտասը կարևոր ուժ է գործարանի համար, որի պատճառով էլ նա մինչև այժմ չի զորակոչվել...Եթե հնարավոր է այս անգամ էլ նա պահել:

«Ես նույնպես գտնում եմ, որ Կոմիտասը գործարանի համար կարևոր է,— պատասխանեց պննկոմը,— բայց պարտադիր ռազմական ուսուցման հատուկ սորտաժանման պարապմունքներին նա ձեռք է բերել այնպիսի մասնագիտություն, որը խիստ կարևոր է ռազմաճակատին»:

Ել չուռ գալով Մանթաշյանի կողմը՝ հարցրեց.

— Հիմա ինչպե՞ս անենք, ընկեր Մանթաշյան:

— Ինչպե՛ս պետք է անել,— պատասխանեց ընկերոջ քարտուղարը,— ով որտեղ անհրաժեշտ է հիմա, այնտեղ էլ պետք է լինի:

Մանթաշյանը և Լևոնը գործարանից դուրս եկան:

Նրանք անցան ծառուղով, որտեղից քիչ առաջ անցել էին Կոմիտասն ու Սեդան, գուցե սիրտ խոսքեր ջնջելով, գուցե երազ հույս տալով...

30.

Լևոնը մի քանի րոպե կարդալուց հետո վեր կացավ, սկսեց անկյակում ետ ու առաջ քայլել,

ապա կրոնդնեց կողք-կողքի դրված դրքերի երեք պահարանների առջև: Ինքնաբերաբար նրա աչքերը սահեցին դրքերի վրայով: Առաջին պահարանում կանոնավոր դարսված էին Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները, երկրորդը ծանրաբեռնված էր դեղարվեստական գրականությամբ: Նա բացեց պահարանը և վերցրեց, «Պարոսիզանի ուղեգիրը», որ նրան նվիրել էր Համլկեմ Կենտրոնական Կոմիտեի այտառել գործուղված ներկայացուցիչը: Նա սկսեց գիրքը թերթել և ցածրաձայն երգել: Դուռն առանց բախելու բացեց և ներս մտավ Լյուդմիլան: Լևոնի դեմքին ուրախություն ժպիտ փայլեց:

— Ահա, ասա հայերով նամակ ես ստացել,— ծրարը մեկնելով ասաց Լյուդմիլան:

Լևոնը խնդուն բացեց ծրարը և երկու ընկերների ծիրանագույն լուսամփոփի մեջ լույսի տակ, չնչները պահած կարդացին.

«Թանկագին ընկերներ.

Այս նամակով համառոտակի ուզում եմ պատմել մարտիկ Սուրեն Ալեխսյանի փառավոր գործերի մասին: Նա խիզախ կոմերիտական էր, որի կուրծքը զարդարում էին երեք շքանշան և երկու մեդալ: Մի բարձունքի պաշտպանության ժամանակ ընպանվեցին նրա ընկերները: Սուրենը մենակ շարունակեց մարտնչել և պաշտպանել բարձունքը: Նա վեց վերք էր ստացել, բայց դեռ շարունակում էր կռվել: Երբ մեր զորամասերն օգնության հասան, բարձունքին, հրացանը կրծքին սեղմած ընկած էր Սուրենը: Ֆաշիստի գնդակը վերջին անգամ խոցել էր նրա սիրտը, որի հետ և նրա ձախ ծոցագրպանում դրված՝ կոմերիտական տոմսը... Այսպես են կռվում կոմերիտականները, այսպես են պաշտպանում նրանք իրենց

կոմերիտական պատիվը: Մեր գնդի պարտիական կազմակերպության կոմից շնորհակալություն եմ հայտնում ձեր կոմերիտական կազմակերպությանը, որի շարքերում դաստիարակվել են այդպիսի խիզախ երիտասարդներ: Այս նամակը կարդացեք բոլոր երիտասարդների մոտ: Թող նրանք իմանան մարտիկ Սուրեն Ալեխսյանի մասին, թե ինչպես են ռազմաճակատի կոմերիտականները սիրում իրենց հայրենիքը: Սրտվեցեք, երիտասարդ ընկերներ, որ դուք էլ թիկունքում կլինեք Ալեխսյանի պես ազնիվ, կսիրեք մեր հարազատ հայրենիքը:

№ Գնդի պարտբյուրոյի քարտուղար՝
ՄԱՐԻՆՈՎ»:

Նամակից Լևոնի սիրտը ճմլվեց:

Լյուդմիլան ձեռքերը կրծքին խաչած նայում էր Լևոնին և նրա դեմքին կարդում հարազատ ընկերոջը կորցրած մարդու խոր վիշտը:

Լևոնը ոտքի կանգնեց, ղլուխը կախ մոտենալով Լյուդմիլային, ասաց.

— Հիանալի տղա էր...իմ մանկության ընկերներից: Նա երազում էր բանաստեղծ դառնալ: Պատերազմի հենց սկզբին կամավոր մեկնեց բանակ: Կամավոր, Լյուդմիլա, և նրան հետևեցին մեր քաղաքի շատ երիտասարդներ:

Նա խոր հոգոց քաշեց և Լյուդմիլայի թևից բռնելով շարունակեց.

— Ինչպիսի երիտասարդներ էին...Հայկին էլ քանդակագործ էր, կատարելագործվեց Լենինգրադում...Ինչ տալանդավոր երիտասարդներ...Եվ ահա պատերազմը...Սմեն ինչ վոխեց...Նրանք երկուսն էլ մեկնեցին ռազմաճակատ...Այժմ Սուրենը չկա...

Լյուդմիլան աւագին անգամ տեսավ Լևոնի աչքերի մեջ արտասուքի կաթիլներ և երկու ձեռքով պրկելով նրա գլուխը չննջաց.

— Լյովա՛, դո՞ւ...

— Ս.յո՛, Լյուդմիլա, ծա՛նր է... ասա ոտքի կանգնելով և ձեռքը նրա ուսին դնելով չարունակեց,—բայց պատասխան կուան Փաշխաններն այդ բոլորի համար: Մահվան դիմաց՝ մահ, արյան դիմաց՝ արյուն:

— Իսկ Նալբանդյա՞նը. նրանից լինչ տեղեկություն կա,—կարծես Լևոնին հանդստացնելու համար հարցրեց Լյուդմիլան:

Լևոնի դեմքը պայծառացավ և նա հպարտորեն պատասխանեց.

— Հայկը օդաչու է... Նրա հաշվում արդեն կա ութ խփված ֆաշիստական սավառնակ... Քաջ տղա է...

Լևոնը նորից կարդաց նամակը և Լյուդմիլային խնդրեց տուն դնալ, հանգստանալ:

— Ես աշխատանք ունեմ, սիրելի Լյուդմիլա, դու գնա տուն: Ջէ՛, չէ՛, մի՛ հրաժարվիր: Ես գիտեմ, ինքդ էլ ցանկություն ունես գործադրան դալու: Բայց հոգնած ես: Մի ուրիշ անգամ... Գնա մեր մայրերին էլ հանգստացրու:

Որքան էլ համառեր Լյուդմիլան, չկարողացավ Լևոնին համոզել և բարի դիշեր մաղթելով՝ քայլերն ուղղեց դեպի տուն:

Մնալով մենակ, Լևոնը ծանր մտքերով տարված չիմացավ, թե ինչպես քունն սկսեց տիրապետել իրեն և գլուխը դրեց ծալած ձեռքերին:

Սավոտյան նրան արթնացրեց Սեդան: Լևոնը տեսնելով նրան, սկզբում չհասկանալով, որ արդեն լուսացել է, զարմանքով հարցրեց.

— Դու ինչո՞ւ ես եկել այս կես գիշերին...

— Ընկեր Վահանյան, դուք արդեն գիշերն ու ցերեկը չփոթում եք,— կատակով պատասխանեց Սեդան:

Լևոնը պարզաբրտ ժպտաց և ապա մոտենալով պատուհանին, բացեց վարագույրը: Լույսն առատորեն տարածվեց սենյակում:

— Ի՞նչ նորություն կա,—հարցրեց Լևոնը:

— Բլրապյուղից երեք նոր ընդունված կոմերիտականներ եկել են իրենց տոմսերն ստանալու:

— Թող ներս գան, ինչո՞ւ են սպասում:

Սեդան մեզմ ժպիտը դեմքին փայլեցնելով ասաց, որ նրանք վազ առավոտյան դալով գյուղից, մտել են չրջկոմ և երկար ժամանակ նրստած սպասել, չեն ուզեցել Լևոնի քունը խանգարել: Այդ մինչդեն ներս մտան կարմրադեմ, առույգ ու ժիր երկու աղջիկ և մի տղա:

— Ահավասիկ նրանք, բլրադյուղի նոր ընդունված կոմերիտականները,—ներկայացրեց Սեդան: Նրանք ողջունելով մոտեցան չրջկոմի քարտուղարին: Լևոնը սիրալիր պատասխանեց նրանց բարևին և հարցրեց.

— Ե՞րբ եք ընդունվել:

— Ամսի չորսին,—միաբան պատասխանեցին նրանք:

— Չորսի՞ն,— ուրախ նայելով նրանց, ասաց Լևոնը:— Իսկ քանի՞ աշխօր եք վաստակել այս տարի:

Երեքն իրար երեսի նայեցին: Ըստ երևույթին նրանք չգիտեին, թե ով պետք է առաջինը պատասխանի:

— Ա՛յ, դո՛ւք ասեք,—այդ տեսնելով դիմեց

Լևոնն աղջիկներից մեկին, որ երեքից ամենաբարձրահասակն էր ու գերը:

— Երեք հարյուր:

— Ես երկու հարյուր հիսուն,—վրա բերից մյուս աղջիկը:

— Իսկ ես՝ հինգ հարյուր,—վոքր ինչ առաջ գալով պատասխանից երիտասարդը:

— Սպրե՛ք: Լա՛վ եք աշխատել,—ասաց նրանց Լևոնը և սկսեց ինամքով գրել կոմերիտական տոմսերից մեկը:

— Դուք նստեք,—դիմեց նա կոմերիտականներին:

Նրանք լուռ նստեցին և հայացքները չէին հեռացնում ջրկիռի քարտուղարից: Նրանցից ամեն մեկը արտասովոր ոգևորված էր, թե արդյոք ո՞ւմ տոմսն առաջինը սկսեց գրել Լևոնը: Լևոնը և՛ գրում էր, և՛ չեզոքի նայում կոմերիտականների դեմքերին, կարծես կռահելով նրանց մտքերը: Նա երեք տոմս գրելուց հետո, միայն ոտի կանգնեց և ամուր սեղմելով նրանց ձեռքերը հանձնեց յուրաքանչյուրին կոմերիտական տոմսը, ապա գրասեղանի դիմացից հանելով Սուրեն Ալեքսյանի մասին գրած նամակը՝ - բարձրաձայն կարդաց այն: Շնչները պահած լսեցին նոր կոմերիտականները Ալեքսյանի մասին և երեքից կոմերիտական տոմսերն ամուր սեղմեցին կրծքներին:

— Աշխատեցեք նմանվել Սուրեն Ալեքսյանին,— եզրափակեց Լևոնի վերջին խոսքը:

— Աոտատնում ենք,—երդումի նման ասացին նոր կոմերիտականները:

Իրիկնադեմին Բլրատյուղից Լյուդմիլան մի ձիանի կառքով ճամփա ընկավ դեպի Հրջկոմ: Ճանապարհն անցնում էր ծառախիտ անտառի միջով: Մթնեց: Գյուղր մնաց եռևում: Ձիու քոժոժների ուրախ զնգզնգոցով կառքն անցնում էր անտառով: Նրա պայտած ամբակները զարնվելով քարերին, երբեմն-երբեմն կայծեր էին արձակում: Իսկ Լյուդմիլան մազերը քամուն տված երգում էր ու երգում: Նրան արձագանքում էր անտառը և ձայնը տարածվում էր հեռո՛ւ, հեռո՛ւ...

Հանկարծ լինչ որ տեղից տուբոցներ լսվեցին, ապա սովերներ երևացին և ձին խրտնելով թեքվեց դեպի ձորը: Լյուդմիլան ուժգնորեն քաշելով երասանը, գոռաց.

— Ո՞վ եք:

— Ո՞վ ես, դո՛ւ ասա,—հարցրեց մի խռպոտ ձայն:

Լյուդմիլան ձեռքը տարավ դեպի սարճանակը: Այդ միջոցին դրսանի լապտերից արձակած ուժեղ լույսն ընկավ նրա երեսին:

— Օ՛հ, ընկեր Լյուդմի՛լա,— չարունակեց նույն ձայնը, ձիու երասանը բռնելով:

Լյուդմիլան չկարողացավ սկզբում դլխի ընկնել, թե ովքեր են ճանապարհը կտրողները: Լապտերի լույսը Լյուդմիլայի երեսին դցելով, նույն ձայնը հարցրեց.

— Ջե՞ս ճանաչում, վախեցա՞ր:

Այդ Գարեգինն էր: Լյուդմիլան վայրկենապես ինքնակառքից և ճանաչելով Գարեգինին, քա՛հ-քա՛հ ծիծաղելով ասաց.

— Ես էլ կարծեցի բանս պրծած է:

Գարեգինը ներկայացրեց իր ընկերներին:

— Այս մեկը «ակադեմիկոս» Սաաքեն է, սո՞ նրա աշակերտ Կոնստանդինը:

— Աշակե՞րտ,—բորբոքվեց վերջինը,—ես նրան ի՞նչ աշակերտ, ես նրան կարող եմ դասեր տալ...

— Այ քեզ պիշերայնի հերթապահները, ղեսանոտային բռնեցին,—չարունակեց Լյուդմիլան կատաքից մի խուրձ խոտ ձիու առաջ դնելով:

Ծառերի միջից լսվեց շշյուն: Գարեգինը խոկուն ոտքի կանգնեց և հրացանն ուղղելով այն կողմը, իր խստոտ ձայնով հարցրեց.

— Ո՞վ ես:

— Փայլո՛ւմ են կրեմլի աստղերը,—լսվեց պատասխանը:

Այդ Լևոնն էր, որ մոտակա պլյուշում պիշերայնի հերթապահներին աստղերից հետո, վերապառնում էր տղաների մոտ:

— Փայլո՛ւմ են, վայլո՛ւմ են,—ուրախ արձաղանքեց Լյուդմիլան և դնաց Լևոնին ընդառաջ:

Գարեգինը դինվորական չինելը հանելով, մի ծառի տակ վռնց և առաջարկեց բոլորին նստել: Գիշերն անտառում դով ու խորհրդավոր է: Սարերի սովոր տղաներն իրենց ապատ էին զգում: Նրանցից ետ չէր մնում նաև Լյուդմիլան:

— Մերոնք այսօր մի քանի քաղաք էլ են գրավել,—ասաց Գարեգինը:

— Այսպես որ չարունակվի, պատերազմը շուտ կվերջանա,—վրա բերեց Լևոնը:

Տիրեց լուռթյուն: Երևոսարդ մարդիկ, ինչ իմանաս, ով ինչ էր մտածում:

— Այս անտառը կապված է մեր մանկության հետ,—զրույցը վերսկսեց Գարեգինը,—այստեղ էր մեր պիոներական ճամբարը: Հիշում եմ, քաղաքից հայտնեցին, որ հենց այս ճանապարհով պետք է անցնի Մաքսիմ Գորկին. դիտե՞ք, ինքը,

Սլեքսեյ Մաքսիմովիչը... Մենք պետք է ճանապարհ ելնենք երկու կողմերում կանգնելինք և դիմավորեինք մեծ դրոշին: Հայտնեցին, որ ավտոմեքենաները պետք է արագ անցնեն և չպետք է կանգնեն: Մենք պետք է ծաղիկներ դնեինք ավտոմեքենաների մեջ: Մեր ջոկատավար Շահյանի ղեկավարությամբ շարվեցինք ճանապարհի երկու կողմերում: Լևոնն այն ժամանակ օղակավար էր, բայց ամբողջ ջոկատի աչքը: Նա մեզ հասկացրեց, որ հենց ավտոմեքենաները մոտենան, մի ոգեղանշանով բոլորս պատվենք վոդոպի լայնությամբ և ասկվենք Մաքսիմ Գորկուն հարկադրական «վայրէջք» կատարելու: Սյդպես էլ արինք: Հենց որ ավտոմեքենաները մոտեցան մեզ, մենք պատվեցինք վոդոպի լայնությամբ: Սվտոնեքն ասկված կանգնեցին: Մաքսիմ Գորկին իր երկար հասակով կանգնեց ավտոմեքենայում, պիոներները ընդառաջեցին նրան, շատ ծաղիկներ նվիրեցին: Գորկին շատ ուրախացավ ու դուրեց մեր հնարտությունը և ժպիտը դեմքին ասաց.

— Ա՛յ, իսկապես որ ես Հայաստանումն եմ...

Սյսպես վերջացավ մեր հանդիպումը Մաքսիմ Գորկու հետ այս անտառում:

Հիշում եմ, նույն օրը երեկոյան, խորհրդի շուրջը յուրաքանչյուրս պատմեցինք Գորկուց մեր կարդացած գրքերի բովանդակությունը: Լևոնը հպարտ ու համարձակ արտասանեց «Մրրկահավի երգը», իսկ ես պատմեցի «Դանկոյի սիրտը»: Մեր ջոկատավարը հանձնարարեց մի քանի օրվա ընթացքում «Հատակում» պիեսից մի քանի տեսարան բեմադրել: Ծաղկոպներից մեկը ես էի...

Լյուդմիլան ամբողջ խոսակցության ընթացքում հայացքը չէր հեռացնում Լևոնից, իսկ երբ Գարեգինը ավարտեց իր պատմությունը, ասաց.

— Իսկ ես Գորկուն տեսել եմ Մոսկվայում,

Դարմեր Հրապարակում, ընկեր Ստալինի կոչը...

— Ընկեր Ստալի՛ն,—մթության մեջ կարծես առկայծեցին տղաների աչքերը:

— Դու անձա՞մբ, քո աչքերո՞վ,—նույն հետաքրքրությամբ հարցրեց Կոնստանդինը:

Լյուդմիլան պատմեց Կարմիր Հրապարակում մայիսյան և հոկտեմբերյան շքերթների, համաժողովրդական տոների մասին: Ժամանակն անցնում էր աննկատելի, և երեխաները չեմ որեն զրուցում էին Մոսկվայի ու պատերազմի մասին: Վերջապես Լևոնը տաքի կանոնների և իրեն ուղղված առաջ:

— Ես պետք է քաղաք գնամ և տուդեմ քաղաքի հերթապահներին:

Լյուդմիլան սկզբում համաձայնվեց: Բայց անց կատքը առաջ չարժվեց՝ Գարեգինին, Առաքելին ու Կոնստանդինին թողնելով անտառում: Երեսանը վերցնելով, Լևոնն ուժեղ մարակեց ձիուն:

— Ինչո՞ւ ես շտապում,—նրա ձեռքը բռնելով հարցրեց Լյուդմիլան,—չլինի՞ վախենում ես...

Լևոնը ոչինչ չպատասխանեց, բայց այլևս բաց չթողեց Լյուդմիլայի ձեռքը: Կատքը հետզհետե դանդաղեցրեց ընթացքը և ավելի քաղցր էր հնչում զոժոժների համերգը:

Լյուդմիլան ցրտից սեղմվելով՝ ավելի մոտեցավ Լևոնին: Վերջինս չնեղի՝ մի մասը գցելով Լյուդմիլայի վրա, ձեռքը թողեց նրա ուսին:

— Ե՞րբ կիմերկանա, ասում ես, պատերազմը,—թեքվելով դեպի Լևոնը հարցրեց Լյուդմիլան:

— Ե՛րբ... Բայց դու ինչո՞ւ ես շտապում: Չլինի՞ ուզում ես Հայաստանից շուտ գնալ:

— Ո՛չ... Անկեղծորեն ասած՝ ինձ համար Հա-

յատուկն էլ շատ հարուստ է, այսօրեղ էլ ամեն ինչ լավ է:

Ու նա սկսեց բարձր ու հպարտ երգել:

— Լյուդմի՛լա,—չշնջաց Լևոնը:

Լյուդմիլան երգն ընդհատելով դէմքը մոտեցրեց Լևոնին: Նրանց աչքերը իրար հանդիպեցին և նրից լճյան ցած, նրից իրար նայեցին... Եվ ասես նրանք զրկախառնվեցին: Կատքը կանգ առավ, ձին թեքվեց դեպի թավուտը:

Բանակում և ռազմաճակատում գտնվող կոմերիտականների մայրերը զրեթե ամեն օր գալիս էին շրջկոմ՝ մի տեղեկություն առնելու:

— Գիտեմ, որ անհանգիստ ես,—ասում էր Սեդան,—ա՛յ, կոմիտասից էլ տեղեկություն չկա: Հենց որ նոր լուր առացվի, ինքս կգամ ձեզ մոտ:

— Չէ՛, աղջիկ ջան,—մի անգամ շատ ծանր պատվեց Հայկի մայրը,—մեզ համար շրջկոմ գալը ամոթանք է: Այնտեղ, ուր մեր զավակներն են եղել, մեզ համար շատ թանկ է...

Այդ օրվանից անցավ մեկ շաբաթ: Հայկի մայրը շրջկոմ չէր գալիս:

— Գնա՛ք ես վերավերեք նրան,—մտածեց Սեդան և դնաց նրանց տուն:

Նրա առաջ բացվեց հետևյալ տխուր տեսարանը. Հայկի մայրը՝ թաղուհին հյուծված, գալկադեմ պառկել էր մահճակալին: Նրան շրջապատել էին հարազատներն ու հարևանները: Սուրենի մայրը լալում էր ծնկներին ու խորը հոգոց քաշելով ասում.

— Դիմացը, թաղուհի ջան...

Եկավ թժիշկը: Սրսկումներ կատարեց: Պատվիրեց, որ հիվանդի մոտ շատ չհավաքվեն, շատ չխոսեն, որ չհուզվի: Սիրտը շատ վատ է, նյարդերը նուլնսես... Թաղուհին անդրդա դրության մեջ պառկած, երբեմն ծանր անքուն էր, երբեմն սառած աչքերը առաստաղին հառում:

— Գոնե ամուսնուց մի տեղեկություն առներ: Ախր երկուսը միասին դնացին՝ հայր և որդի,—խոսում էին հավաքվածները:

Սեդան մոռացավ հիվանդին, բռնեց նրա ձեռքը, մատը դրեց պարկերակին...Այդ միջոցին հիվանդն էր սառած աչքերը հառել Սեդայի վրա՝ ջուրը հազիվ չժժելով հասկացրեց, որ չկա, այնինքն Հայկից նամակ չկա, ու երկու կաթիլ արցունք սահեցին նրա ոլորված դեմքի վրայով:

Ծանր տագնապությամբ Սեդան թողեց հիվանդին և վերադարձավ շրջկոմ: Նրա սիրտը ճմլվում էր: Նա դրսանից հանեց Կոմխոսի նկարը, երկար նայեց և շշնջաց.

— Դու՛ր ինչո՞ւ չես դուս, սիրելիս...

Ընկերները սիրտ էին տալիս, որ Սեդան չհուսահատվի, պատերազմ է, ո՞վ լմանա, զուցե նամականիները տեղ չեն հասնում, զուցե նա պառկում է գեսանոտային զրամասերում և հնարավորություն չունի նամակ ուղարկելու: Սեդան մտրտումների մեջ էր, երկար նայում էր Կոմխոսի նվիրած նկարին, կարծես խոսում էր նրա հետ, ապա վերցնում գրիչը, նամակ գրում:

Վերջին անգամ Սեդան վերհիշեց «Կոմերիտականի հերոսնանցները»: Այսպես գրեթե ամեն շաբաթ Սեդան գրում էր նամակները, համարակալում, գրում վատատրիլը և մի տեսակ թեթևություն

պետք, մինչ հույս ունենալով, թե այս անգամ պատասխան կստանա: Բայց պատասխան չկար ու չկար: Այսպես անցավ ևս մի քանի ամիս: Մի անգամ Լևոնը սովորականի պես օրվա վոստը նայեվ, բացեց բոլորովին անծանոթ ձեռագրով մի ծրար: Հեղինակը մի ուս աղջիկ էր, որ պրոմ էր Կոմիտասի մասին:

«Ձեր կոմերիտական Կոմիտասն այժմ պառկած է դոսպիտալում: Նրա աջ ձեռքը վիրավորվել է, իսկ ձախ ոտքը չկա: Նա շատ է խնդրում, որ այդ մասին չհայտնենք մորը և Սեդային: Ձեռքը շուտ կբուժվի:

Կոմիտասը հիանալի տղա է, իսկական կովկասցի: Նույնիսկ այդ դրության մեջ նա շարունակ կատակներ է անում, հիվանդներին զվարճացնում:

... Կուզից հետո,—ասում է նա,—խնդրեմ համեցեք մեզ մոտ, Հայաստան և դուք այնտեղ շատ բան կըտեսնեք:

Կոմիտասը խնդրում է, որ դուք գրեք, թե ո՞վ է մնացել իր ընկերներից: Ի՞նչ են անում Գարեգինը, Նատաշան, Էմման... Ինչպես է աշխատում գործարանը»:

Լևոնը մռայլվեց: Նրա ձեռքում նամակը դողդողում էր: Վշտացած նա նստեց բազկաթոռին: Նորից կարդաց: Քիչ հետո նա դանդաղ վեր կացավ և ծանր քայլերով մոտեցավ լուսամուտին, հայացքը հառած հեռուները խորհում էր Կոմիտասի մասին: Ա՛յ հերոս, ա՛յ ուժեղ բնավորություն: Նույնիսկ այդ վիճակում հուսահատության ոչ մի նշույլ... Բայց կատարե՞լ արդյոք նրա ցանկությունը, հայտնե՞լ եղելության մասին ծնողներին ու Սեդային: Այդ երկմտության մեջ էր նա երկար ժամանակ: Եվ նա չէր նկատում, որ փոխվել է իր

վերաբերմունքը Սեդայի նկատմամբ, որ խառնվում է Կոմխառնի մասին տրված նրա հարցերին ուղիղ պատասխանելուց: Բայց հարցասեր և զրուցասեր Սեդայից ոչինչ չէր կարելի թաքցնել:

— Ասենք թե Կոմխառնը վերանորոգել է և կարող է պատահել որևէ հետք թողնի այդ վերքը, ինչ կանես:

— Դա ինչ հարց է, ընկեր Վահանյան... Ոչ թե վերանորոգի, այլ սնուցամ երկու ձեռքը, երկու ոտքը կոցցնի, նա ինձ համար դարձյալ կմնա նույն Կոմխառնը: Ավելին կարող եմ ասել, նման դեպքում սերն ու հարգանքն իմ մեջ կկրկնապատկվեն...

Լևոնը լավ գիտեր Սեդային, բայց վորձում էր նրան և սրտի վրա թեթևություն պզտոց: Զղջաց, թե ինչու համար մինչ այդ ինքը այդպիսի ապնիլ և հայրենասեր աղջկանից թաքցրել է Կոմխառնի մասին գոսպիտալից ստացված նամակը:

— Ուրեմն եթե դու նամակ առանաս, որ Կոմխառնը ծանր վերանորոգել է, կոցցրել, ասենք, մի ձեռքը, կամ ոտքը, չե՞ս տխրի:

Սեդայի դեմքին սահեց մի ցավագին ժպիտ և վերանորված ձայնով ասաց.

— Ինչպես կարող եմ չտխրել, հիշատանալ:

Լևոնի համար ամեն ինչ պարզ էր: Նա այլևս չցանկացավ խոսել, ուղղակի գրպանից հանեց նամակը և մեկնեց Սեդային.

— Մի ուրիշ աղջիկ Կոմխառնի մասին գրում է...

Սեդան վայրկենապես վերցրեց նամակը, կարդաց... ու սկսեց հեկեկալ...

Լևոնն ամեն կերպ աշխատում էր հանդարտացնել նրան:

— Ես պիտի էի,—լացակումած ասաց Սեդան,—չէ՞ որ ես պետք է իմանայի վաղ թե ուշ: Ես կգնամ, կպատնեմ նրան, դասախոսից կոեղափոխեմ այսօր...

Լևոնն ամեն կերպ համոզում էր նրան, որ դնալու մտքից հրաժարվի: Ինչ իմանա, որտե՞ղ է պանվում դասախոսը: Բայց անկարում էր Սեդան: Նա տենդային պատրաստվում էր մեկնելու, վիրավորական կոմխարհխոսից հատուցումն ինքն իրեն պահանջելու համար և այն է, պետք է գնար, Կոմիտասից նամակ ստացվեց. նա դասախոսից դուրս էր գրվել և գալիս էր: Այդ օրվանից Սեդան գրեթե ամեն օր առնօրյա մանիշակագույն գիհատոմ (որը շատ էր դուր գալիս Կոմիտասին) ընկերների հետ գնում էր կայարան՝ Կոմիտասին դիմավորելու հույսով: Վերջապես մի անգամ սանիտարական գնացքը կանգ առավ կայարանում և ուրիշ վիրավորների հետ վագոնից դուրս եկավ նաև Կոմիտասը: Սեդան չնչակոտոր վազեց դեպի Կոմիտասը, գրկեց նրան, համբուրեց: Կոմիտասը հենակների օգնությամբ էր քայլում:

— Ավելի լավ է ոտքով գնանք,—նկատելով Կոմիտասի հուզմունքը, հանդստացրեց Սեդան, և նրան առաջվա նման թևանցուկ արավ:

Նա քայլում էր գլուխը բարձր, հպարտորեն, չէր ուզում զգացնել տալ Կոմիտասին, որ առանձին նշանակություն է տալիս պատահածին: Չէ՞ որ սկզբում, Կոմիտասը զննողաբար նայում էր մերթ Սեդային, մերթ՝ ընկերներին, կարծես առաջելու համար, թե ով ինչպես է նայում իրեն:

Բայց ինչ լավ է, Սեդային, ընկերներին տեսնելուն պես նա մոռացավ իր վիշտը, նույնիսկ ներքուստ իրեն նախատեց, որ վատ է մտածել նրանց մասին...Սպա սկսեց կատակներ անել, պատմել

ռամկաճախաւոյ: Կառամատուց դուռս դալուն պես մտանեցաւ ալտոմեքենան: Սիրելի ընկերներով և ծոպկեվինչներով շրջապատուած՝ Կոմխտասը նստեց մեքենա: Տանր սպասում էին Կոմխտասին: Սեդան վաղուց նախապատրաստել էր, որ չհշտացնեն նրան, զուսպ լինեն: Բայց ո՞ր ծնողը կարող է զուսպ լինել հերթ որդու վերադարձին, վիրավոր որդու...Ել ձեռքերը ճոճելով վեր, առաջինը մայրը վաթսաթվեց, իսկ իր կրտսած մեջքով հայրը մանկան պես հեկեկալով դրկեց որդուն.

— Բալա՛ Ջան, բալա՛ Ջան...

Աղջիկները չդիմացան և արտասվեցին: Սեդայի աչքերից արցունքներ հոսեցին այն ժամանակ, երբ նա անկողին պատրաստելիս դեմքը թաքցրեց Կոմխտասից: Բայց հենց որ վերջացրեց և Կոմխտասին անկողին դրեց, դպատուցալ, աշխուժացալ և դիմեց հավաքվածներին.

— Նստեցեք, խնդրեմ:

Այդ միջոցին ներս մտան նաև Լևոնը և դոբծարանի դերեկտոր Մազմանյանը: Կոմխտասը ծնողներին հանդստացնելուց և Սեդայի ձեռքով պատրաստած անկողնում նստելուց հետո, հուզված ասաց.

— Ամեն ցավ մոռացա, սիրելիներս: Ուրեմն, ես պետ չարքից դուրս չեմ եկել, ուրեմն կարող եմ ապրել ու աշխատել ձեզ հետ միասին...

Հանկարծ ռադիո բարձրախոսներն ակսեցին.

—Ուշադրությո՛ւն... Ուշադրությո՛ւն... Ուշադրությո՛ւն...

— Խոսում է Մոսկվան... Խոսում է Մոսկվան...

— Ընկերներ, այսօր Մոսկվայի ժամանակով ժամը 19-ին լսեցեք կարևոր հաղորդագրություն...

Բոլորը ընչհներն պահած լսում են Մոսկվայի

ձայնը: Ինֆորմբյուրոն հաղորդում է, որ համառ մարտերից հետո մեր զորքերը դուրս եկան երկրի կարևորագույն կենտրոն Կիև քաղաքը:

Հրճվում է քաղաքը: Ժողովրդի ուրախությանը չափ չկա: Փողոցներում մարդիկ իրար հանդիպելիս բացատրություն են.

— Լսեցի՞ր:

— Կիևը մե՛րն է:

— Կիևն ազատագրվա՛ծ է:

— Կի՛ևը...

Լսվում են հրետանային համազարկերը, քաջարի մարտիկներին մեծարող ոչխունները...

— Կոմկուսի վերադարձի օրը նշանավորվեց Կիևի ազատագրումով, իսկ վաղը տոն է... Մոտ է հաղթանակը,—ձեռքը դնելով Կոմկուսի ուսին ասաց Լևոնը,—շուտով տուն կվերադառնան բոլոր ռազմիկները, շուտով, շատ շուտով կսկսվի խաղաղ կյանքը:

— Այո՛,—հուզված ասաց Մազմանյանը,—այսօր բոլորն են ուրախանում:

Երբ բոլորը հրաժեշտ տալով հեռացան, Սեդան մնաց Կոմկուսի մոտ, բայց ոչինչ չհարցրեց նրա վերքի մասին: Աշխատում էր ուրախ պահել իրեն, ոչնչով զգացնել չտալ այն վիշտը, որ ապրում էր ինքը: Ընդհակառակը, հենց որ Կոմկուսը խոսք էր գցում ռազմի մասին, Սեդան շտապում էր փոխել խոսակցության նյութը, զվարճալի պատմություններ անել, ցրել տխրությունը: Այդ բոլորն, իհարկե, զգում էր Կոմկուսը: Այսպես ամեն օր Սեդան գալիս էր Կոմկուսի մոտ, խնամում, զբաղեցնում նրան, գոսպիտալից բժիշկներ բերում և հետևում, որ վերքը շուտ բուժվի:

Պատերազմական մեկ ամեն ևս անցավ: Գարունն էլ անցավ: Մոսկվայի երկինքը շատ անգամ

հրավառված դույնդուկն հրթիռներով: Մոսկվան շատ անգամ հրետանային համազարկերով ողջունեց սովետական դյուցազուններին՝ խոշորագույն հաղթանակների առթիվ:

33.

Բլրագյուղի կոլխոզի ընդհանուր ժողովը Ղարագյոզյանին հեռացրել էր նախագահությունից և նրա տեղն ընտրել կոմերևութական կազմակերպության քարտուղար Նատաչային: Բայց որքա՛ն դժվարություններ կային հաղթահարելու, դրծերը կանոնավորելու համար: Ղարագյոզյանի համախոհները սկզբում փորձել էին ծաղրել նոր նախագահին:

— Է՛յ, աղջիկ, կոլխոզի նախագահ, ջրլին տարեկան քանի՞ անգամ է ծնում,—երբեմն հեգնում էր նրանցից մեկը:

— Նայած ջրուն,—խիստ պատասխանում էր Նատաչան և քրքիջի մինչև լաելի էին լինում նրա վրեժխնդրության լցված խոսքերը.—Դեռ դուք կտեսնե՛ք, թե ջրլին ինչպես է ծնում:

Ամենից շատ ըմբոստացել էր նախկին բրիգադիր Միքայելը: Նա ափսոսանքով էր հիշում նախագահին ու միշտ կրկնում էր.

— Ղարագյոզյա՞նը...շատ ուժեղ մարդ էր, բայց կոլխոզնիկները նախանձից խեղճին դրախ վռնտեցին:

Նատաչան ձևացնում էր, թե չի լսում այս խոսքերը և գլուխը բարձրացնելով՝ խստաբար ասում էր.

— Այսօրվա աշխատանքի հաշվառումը կատարե՞լ եք, քանի՞ ցենտներ է հանձնված պահեստին:

— Թող մի չունչ քաշեմ, նոր եմ ներս մտել... պահեստը, պահեստը,—սրտնեղվում էր նա և թողը կուլ տալով աշխօրերի հաշվառման մատյանը դնում Նատաշայի առաջ:

— Իսկ պահեստի ձեւակերպումը՞:

— Այս շաբաթվա վերջին... Ջի՛ կարելի ամեն օր, հնարավոր չէ, մա՛րդ ենք, հո՛ մեքենա չե՞նք...

— Առանց պահեստի ձեւակերպման այլևս ոչ մի հաշիվ չեմ ընդունի,—պայրացած նկատեց Նատաշան,—իսկ եթե գործը չեք հասցնում, կարող եք աղջիկներից մեկին օգնության կանչել:

— Աղջիկնե՞րից,—ու նա մի սաստիկ քրքջոց բարձրացրեց: Բայց Նատաշան չուրթին անգամ չշարժեց և համառորեն պահանջում էր բոլոր փաստաթղթերը ձեւակերպել օրինական կարգով: Ստեպստեպ նա ձեռքը խփում էր սեղանին, հոնքերը կիտում և կրկնում. «Լռե՞ս եք, թե ոչ»: Այդ ժամանակ Միքայելը բեխերն ոլորելով և աչքերը կկոցելով նստում էր պատի տակի աթոռներից մեկի վրա և լռում: Ղարադյոզյանի համախոհները Միքայելին էին հանձնարարել փորձելու Նատաշայի թույլ կողմերը, նրան խայտառակելու, վարկաբեկելու և դրանով համոզելու կոլխոզնիկներին, որ Ղարադյոզյանի պես ուժեղ մարդուց հետո, նախապահ կարող է լինել միայն ինքը, Միքայելը, և ոչ թե մի ինչ-որ աղջիկ: Իսկ Նատաշան օր ավուր մերսեստում էր իր գործին, իր չուրջը համախմբում աղնիվ կոլխոզնիկներին: Հետզհետե սկսեցին գրասենյակ հաճախել կոլխոզնիկները և Միքայելի կողմնակիցները քաշվեցին մի կողմ:

Իլան Գավրիլիչը նշանակվեց պահեստապետ և վարձ ու կանոն մտցրեց այնտեղ: Աշխատանքից ա-

պատվեց Մխքայելը: Գյուղում այդպես վարվեցին նաև Ղարադյոզյանի մյուս «պոչերի» հետ:

— Դու ամուր կաց, Նատա՛շա,—սրտանդեց Հյուդմիլան, որը կոմերիամիության շրջկոմի կողմից էլված էր այդ գյուղի կոլխոզին,—ամեն ինչ կկարգավորվի և կոլխոզն էլ կդառնա օրինակելի:

— Ամեն ինչ լավ է գնում,—երկար մորուքը շոյելով ասաց Իլան Գավրիլիչը,—գործերը կանոնավոր են կոլխոզում, բայց վատն այն է, որ ակումբ չունենք: Երեք տարի է, որ հիմքերը փորված են, քարն էլ բերված: Ակումբի կառուցման համար նախատեսված գումարը յուրացրին կոլխոզի նախկին ղեկավարները և հինարարությունն ընդհատեցին, արդարանալով, թե պատերազմ է...Բայց պատերազմը կավարտվի, խնչո՞ւ չպետք է ակումբ կառուցենք...Կասեն աշխատող ձեռքը քիչ է: Համաձայն եմ, բայց լինում են անձրևային եղանակներ, որ դաշտում աշխատել չի լինի, բայց ակումբը կարելի է կառուցել... Չէ՛, Նատաշա, դու այդ փոքը խնդիր չկարծես...Ո՞ւր են գնում մեր երիտասարդները աշխատանքից հետո, ինչո՞վ են զբաղվում...

— Դրանք հարցեր են, որոնց մասին պետք է լրջորեն մտածել,—ասաց Հյուդմիլան,—թվում է, թե Նատաշան դեմ չի լինի... Գյուղական Սովետի հետ պետք է դործն անցնել... Հետո շատ վատ է ձեզ մոտ դպրոցի ճանապարհը. անձրևից հետո քայլել չի լինում:

Այդ հարցերը օր ու գիշեր չէին հետաքրքրում Նատաշային, և նա վճռեց դրանք քննության առնել կոլխոզի վարչության նիստում, ապա ընդհանուր ժողովում:

— Իլան Գավրիլիչ,—ասաց նա, երբ ծերուն-

կըն ուզում էր դուրս դնալ,—խոկ ինչո՞ւ մեզ մոտ խոզաբուծության զարգացման հարցը չենք դնում: Դրանից կարելի է հսկայական օգուտ ստանալ: Ինձ թվում է, որ խոզաբուծության զարգացումը մեր կոլխոզին կտա և՛ մխա, և՛ յուղ: Մեզ մոտ վնթի մարդկանց վերաբերելու համար «խոզ» են անվանում, մինչդեռ խոզը պահանջում է ուշադիր խնամք: Նա մի փոքր կանդ առավ և ինչ որ մտաբերելով ավելացրեց.

— Իվան Գավրիլիչ, դուք ինքներդ պետք է գնաք մեր հարևան շրջաններից մեկը և ցեղական խոզեր ձեռք բերեք: Կոլխոզում կքննենք այդ հարցը: Մենք էլ անասունի կեր շատ ունենք, կարող ենք փոխարենը տալ, կամ մեկ ուրիշ պայմանով, նայած, թե ինչը նպատակահարմար կհամարեն շրջկենտրոնում:

— Սքանչելի՛ է, Նատաշա՛, սքանչելի՛ է,— ձեռքերն առաջ պարզելով ասպա երկար մորուքը դանդաղ չփելով պատասխանեց Իվան Գավրիլիչը,—անցյալ ժողովում տեսա՞ք, թե կոլխոզնիկներն ինչպես ընդունեցին Լյուդմիլայի առաջարկությունը միչուրինյան այգի տնկելու մասին: Սրդեն մեր պտղածուղած ընկերները վերադարձել են գիտա-հետազոտական ինստիտուտից...Մեր շրջանում էլ փորձերը լավ արդյունքներ են տվել: Կարելի է տնկիներ բերել միչուրինական Գրիգորի այգուց...

Այս ասելով, Իվան Գավրիլիչը մի ծանր հոգոց քաշեց: Մոայլվեցին նաև Նատաշան ու Լյուդմիլան:

— Ոակի՛ տղա էր,—մորուքը չփելով հատհատ շարունակեց ծերուկը,—ի պատիվ նրա, կոլխոզի միչուրինյան այգին կոչվում է Գրիգորի անունով...

Ծանր խոհերով էր տարված Լևոնը, երբ դուռը բացվեց և շրջկոմ մտավ էվակուացված ծերունի Իվան Իվանիչը:

— Ժամանակ ունե՞ք,—հանդարտ դիմեց նա Լևոնին,—կարծում եմ մի երկու րոպե ինձ կլաեք: Ես ձեզ երկար չեմ պրպեղնի: Ա՛յ, թե ինչ, ընկեր քարտուղար: Ես եղա մեր սիրելի Մանթաշյանի մոտ և ասացի. «Զեռքերումս այնքան ուժ կա, որ կարող եմ գործարանում աշխատել, նույնիսկ ռազմաճակատում կռվել... Մենք, հին բանվորներս հասուկ հաշիվներ ունենք: Մենք կրել ենք ցարական լուծը, տեսել ենք 1914 թվի պատերազմը: Գիտենք... Համ՛, այն էի ասում, ընկեր քարտուղար, ուղարկեցեք ինձ գործարան, հիմնական ցեխում աշխատելու: Հասկացեք, սիրելիս, ուս բանվոր Իվան Իվանիչը չի կարող այստեղ հանդիստ նստել, երբ այնտեղ, ռազմաճակատում որոշվում է հայրենիքի բախտը...»: Նա ինձ ասաց. «Ո՛չ, Իվան Իվանիչ, դուք առայժմ կպպուրվեք, դեռ թույլ եք»:

Ու սկսեցին Իվան Իվանիչի հագի նոպանները: Նա աջ ձեռքի ափով ամուր սեղմեց բերանը, կարծես հազը խլացնելու, խեղդելու համար:

Դրանից նրա աչքերը կրակվեցին և մշուշապատվեցին, դեմքի մկաններըը ձգվեցին: Հազը կտրվելուց հետո Իվան Իվանիչը ձեռքը թափահարելով շարունակեց.

— Միևնույն է, պետք է գնամ:

— Ճիշտ է ասել ընկեր Մանթաշյանը, առայժմ մտածեցեք ձեր առողջության մասին,—ասաց Լևոնը:

Իվան Իվանիչը անձայն շրջվեց և դուրս եկավ:

Այլևս նա կոմերիտմիության շրջկոմ չեկավ: Լեվոնը Իլան Իլանիչին հանդիպեց գործարանում, քանվորական արտահագուստով և դունավոր ակնոցներն աչքերին դրած: Լևոնը զարմանքով դիտում էր Իլան Իլանիչին, որը երկաթե ձողը ուժգնությունն վառարանը խոթելով՝ ետ քաշեց: Վառարանից հանած ձողի ծայրին սառել էր ծխրանագույն պանդվածը:

— Լաբորատորական փերլուծության համա՞ր է,— վառարանի դռռոցի մեջից հնչեց Լևոնի ձայնը: Իլան Իլանիչը ակնոցները մինչև ճակատը բարձրացնելով ժպտաց: Այդ նախ. նշանակում էր, որ Լևոնը ճիշտ կռահեց, երկրորդ, որ Իլան Իլանիչը շատ գոհ է իր վիճակից:

Ցեխի վարիչը, որ նախկինում որմնադիր էր եղել և հենց ինքն էր շարել վառարանի հրակայուն աղյուսները, Լևոնին պատմեց Իլան Իլանիչին աշխատանքի ընդունելու մանրամասնությունները:

— Գործարանի դիրեկտոր Մադմանյանը երկար ժամանակ համոզում էր Իլան Իլանիչին առայժմ չաշխատել: Բայց նա համառում էր: Գործն ավելի բարդացավ, երբ նա համառորեն պնդեց, թե ուզում է աշխատել հիմնական ցեխում, որը բարձրորակ արտադրանք է մատակարարում արդյունաբերությանը, հետևյալ Արևելք, Ատրախան, Մոսկվանակ, Ուրալ...

— Հետաքրքիր ծերունի է Իլան Իլանիչը,— վոքր ինչ խորհելով շարունակեց ցեխի վարիչը,— նա շատ կրակոտ ելույթներ է ունենում արտադրական խորհրդակցություններում, հետաքրքրական առաջարկություններ անում... «Ես,—ասում է,—գործարանում հատակավոր բանվորի չհետա և զարմացա. մի՞թե բոլորը կենսաթոշակ են ստանում, հանգստանում են: Հիմա ինձ համար պարզ

վում է, որ հասակավոր բանվոր այսուհետ չէր էլ կարող լինել, որովհետև բանվոր առածը այս երիտասարդ քաղաքում մուտք է գործել բոլորովին երիտասարդ գործարանի հետ»:

Մազմամյանը, որ շտապ մտավ ցեխը, Լևանին հանդիպելով շատ ուրախացավ, ջերմորեն բարեվեց և ասաց.

— Մեր կոմերիտականները որոշել են կիրակնօրյակ կազմակերպել Յարկովի սխոններներին օգնելու համար: Ամբողջ գործարանի բանվորները մի մարդու նման պաշտպանեցին այդ առաջարկը: Այդ մասին դիմեցի ընկեր Մանթաշյանին: Դե պարզ է, պարտշրջկոմի քարտուղարը հավանություն տվեց, բայց ավելացրեց էս մի բան, որ կիրակնօրյակը կազմակերպվի համաքաղաքային մասշտաբով, հետո էլ՝ համաշրջանային: Թող կոլխոզնիկներն էլ մասնակցեն:

Մազմանյանն այնքան էր հուզված, որ չլսեց ցեխի վարիչի հաղորդումը թմբուկների պակասի մասին:

— Թող լսանան, որ սովետական մարդիկ կարող են բուժել պատերազմի վերքերը,—չարունակեց Մազմանյանը ձեռներն առաջ տարածելով: Ցեխի վարիչն անհանգիստ շարժումով ավելի մոտեցավ դիրեկտորին և ձայնը բարձրացնելով հարցրեց.

— Իսկ թմբեղ ճարեցի՞ք:

Մազմանյանն այս հարցից մոայլվեց: Թմբուկների համար թմբեղը նորից ուշանում է: Ի՞նչ պետք է անել: Հավաքել բոլոր արտադրական ձեռնարկություններում եղած թմբեղը: Բայց չէ՞ որ նրանք էլ ռազմաճակատի համար են աշխատում: Իսկ ինչո՞ւ չարտադրել բրիգադիր Ղամբարյանի ռացիոնալիզատորական առաջարկության կենսագործումը:

Մադամանյանի առաջարկով գործարանում անհապաղ փորձեր կատարվեցին և թխվեղի մնացուկներից ստացվեցին առաջին թմբուկները: Ցեխը, որ թխվել չլիներու պատճառով աշխատում էր մեկ հերթի, այն էլ մեծ պարապուրդներով, սկսեց աշխատել երեք հերթի: Կարծես ավելի ուժգնորեն սկսեցին ծխել վառարանների ծխնելույզները, ասես թե հանդիսավոր տարածվեց վառարանների հունդյունը ամբողջ քաղաքում և մոտակա անտառում... Թվում էր թե այդ հունդյունից կոմերիտմխության անտառի եղևնիների պաղպաջները նաղանքով օրորվում էին և ալիք առ ալիք չարժվում: Գործարանի արտադրանքը լցվում էր նոր թմբուկների մեջ, բեռնվում ավտոմեքենաները, գնացքները և սպանում հատուկ պատվերների համար: Այդ թմբուկների վրա կավճով գրված էր. «Հանուն հաղթանակի»:

35.

— Հիշո՞ւմ եք Նիկոլայ Օստրովսկու խոսքերը. «Կոմերիտական տոմսի հետ մենք ստանում էինք հրացան ու 200 փամփուշտ»: Այդ քաղաքացիական պատերազմի տարիներն էին: Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար այժմ կոմերիտական տոմս, ավտոմատներ, հակատանկային հրացան են ստանում պարտադիր ռազմական ուսուցման հատուկ ստորաբաժանումների հայրենասեր երիտասարդները, — այս խոսքերով դիմեց Մանթաշյանը պարտխական շրջկոմի բյուրոյին, երբ քննարկվում էր պատերազմի ժամանակ կոմերիտականների քաղաքական ուսուցման հարցը: Լեվոնի զեկուցումից հետո, պարտշրջկոմի բյուրոյի

անդամները խոսեցին կոմերիտական կազմակերպությունների կատարած լավ աշխատանքի մասին և նշեցին, որ քաղաքական ուսուցումը դեռևս անբավարար է: Մանթաշյանը նիստի արդյունքների ամփոփումն սկսեց Օստրովսկու խոսքերով և ավելացրեց.

— Պատերազմի ժամանակ մեր շրջանի կոմերիտականների կեսից ավելին մեկնել է բանակ, ուր սկզբնական կազմակերպություն՝ ամբողջովին...

Բայց, այնուամենայնիվ, կոմերիտականների թիվը ոչ թե պակասել, այլ ավելացել է: Շուրջ 3000 տղա ու աղջիկ այս օրերին մտել են լենինյանստալինյան կոմերիտմիության շարքերը... Կոմունիստական հասարակարգ կառուցելու համար Լենինը և Ստալինը երիտասարդությանն առաջադրել են հիմնական խնդիր. սովորել կոմունիզմը: Որքան շատ սովորեն երիտասարդները Համկ(բ)Պ պատմությունը, այնքան շատ կսիրեն մեր պարտիան, մեր հայրենիքը, այնքան լավ հավատով կլցվեն դեպի մեր լուսաշող ապագան...

Մանթաշյանը պարտիական կազմակերպությունների և կոմերիտմիության շրջկոմից պահանջեց առանձնապես խնամքով զբաղվել կոմերիտմիության մեջ նոր ընդունված տղաների և աղջիկների դաստիարակությամբ:

— Ռազմաճակատից ստացվող նամակների մեջ մարմնավորված են մեր երիտասարդության սխրագործությունների նկարագրությունները: Երբեմն շտապ, խրամատից մատիտով գրված մի քանի տող նամակը շատ բան է ասում... Ռազմաճակատից ստանում ենք մեր կոմերիտական աշխատանքի մասին էլ: Ահա մի նամակ:

Այս ասելով Մանթաշյանը դպրոցից հանեց Եռանկյունի ծալված նամակը, բացեց և կարդաց.

«Շատ ուրախացա, որ իմ որդի Աշոտը մտել է կոմերիտմիության շարքերը։ Իմ բանակ մեկնելուց անցել է երեք տարի։ Այդ ժամանակամիջոցում ապրել եմ շատ ծանր և ուրախ· օրեր։

Աշոտիս կոմերիտմիության մեջ մտնելու մասին կարդալուց հետո մարտի գնալով մի տասնյակ ֆրից ոչնչացրի։

Ճակատային բարևներով՝ շարքային Մ. Ասատրյան»։

Մանթաշյանը նորից եռանկյունաձև ծալեց նամակը, դրեց դպրոցը, այնտեղից հանեց մեկ ուրիշը և կարդաց։

«Ես գտնվում եմ գործող բանակում։ Ես շատ երջանիկ, երբ կինս գրել էր, թե տղաս՝ ութերորդ դասարանի աշակերտ Խաչիկը, վատ է սովորում։ Նա նույնիսկ կանոնավոր չի հաճախում դասերին։ Դպրոցում չեն պատժում նրան, մտածելով, թե բանակայինի որդի է։

Խնդրում եմ այդպես չմտածել, այդ սխալ է։ Պատերազմի ժամանակ պետք է ավելի լավ սովորել. դրա համար մեր պարտիան և պետությունն ստեղծել են բոլոր պայմանները։

Բարևներով՝ Ա. Պետրոսյան»։

— Այս նամակը ցույց է տալիս, որ առանձին տեղերում անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում երիտասարդների դաստիարակությանը։ Անհրաժեշտ է բանակային Պետրոսյանի որդուն ներգրավել կոմերիտական կյանքի մեջ, դաստիարակել։

Մանթաշյանը իր խոսքը վերջացրեց խիզախ կոմերիտական Սուրեն Ավետյանի մասին գրված նամակի խոսքերով և պահանջեց երիտասարդությանը դաստիարակել Պավել Կորչագինի և Սուրեն Ավետյանի պայծառ օրինակով։

Շրջկոմի բյուրոյի նիստից հետո Լևոնը մտավ իր առանձնասենյակը: Նա խորհում էր այն խընդիրների մասին, որ դրին Մանթաշյանը և մյուսները: Այո՛, չի կարելի հանգստանալ կատարվածով: Պետք է շարունակել ավելի լարված աշխատել...

Դուռը դանդաղորեն բացվում ներս մտավ Էյուդմիլան, որը մի քանի օր էր չէր տեսել Լևոնին՝ գործուղման մեջ լինելու պատճառով: Լևոնը սիրալիր ընդունեց նրան:

— Էյուդմիլա, կոմերիտականներից մի քանիսը ցանկություն են հայտնել դնալ մեր բանակի կողմից ազատագրված շրջաններն աշխատանքի:

Էյուդմիլայի դեմքի վրա նկատվեց հուզմունքի և երջանկության ժպիտը:

— Այդ հոյակա՛պ է,—պատասխանեց նա,— ինչ ավերածություններ տես չեն արել ֆաշիստական հորդաները: Նրանք ավերել են մեր գործարանները, ֆաբրիկաները, տները...

Էյուդմիլայի պայծառ դեմքը մռայլվեց: Նա նստեց աթոռին և մի պահ երկուսն էլ լուռ մտորում էին ֆաշիստների գազանություններն մասին:

— Հատուցման ժամը հասել է,—լռությունը խզեց Լևոնը և բառնցքը խփելով սեղանին կրկնեց «Պրավդա»-ի հայտնի առաջնորդողի խոսքերը՝ «Մահվան դիմաց՝ մահ, արյան դիմաց՝ արյուն»:

Նորից սկսեց լռություն...Թաղիոն սկսեց հարցնել այն կատաղի մարտերի մասին, որ մղում էին մեր զորքերը ֆաշիստների դեմ:

— Այնուամենայնիվ ուզում եմ լինել առաջապահում, առաջավոր դծերում,—ասեց Էյուդմիլան: Ես չկարողացա մինչև վերջը մասնակցել Մոսկվայի հերոսական պաշտպանությանը: Ես նրից կգնամ, Լևոն: Մի՛ նայիր ինձ այդպես զար-

մայած: Եվ դա մի՞թե նշանակում է, որ ես քեզանից ուզում եմ հեռանալ: Ես քեզ սիրում եմ, Լևոն: Բայց ռազմաճակատ պետք է գնալ, որպեսզի կատարեմ իմ կոմերիտական սրբազան պարտքը, ճակատագրի պարտքը...

Լևոնը լուռ էր: Նա հասկանում էր Լյուդմիլային, նա ինքն էլ պատրաստ էր, ինչպես պատերազմի առաջին օրը, մեկնել ռազմաճակատ: Բայց նրա ականջին նորից հնչում էին Մանթաշյանի խոսքերը:

«Թիկունքը նույնպես պատերազմի մեջ է: Երբ ռազմաճակատը քեզ նմաններին կարիք ունենա, առանց քո ասելու էլ կուղարկենք»: Եվ ինքն էլ չզգաց, թե ինչպես սկսեց երգել իր սիրելի երգը.

„Утро красит нежным светом
Стены древнего Кремля.
Просыпается с рассветом
Вся Советская страна„.

Նրան ձայնակցեց Լյուդմիլան:

Քաղաքը ժամ չանցած՝ նրանք դուրս եկան փողոց և ցուրտ ու խոնավ լուսաբացին դանդաղ քայլեցին դեպի տուն:

Ռադիոարձրախոսները հաղորդում էին մեր զորքերի համառ մարտերի մասին արևմուտքում: Հեռվում փայլփլում էին զորձարանի վառարանների բոսորագույն լույսերը և վառարանների հունդյունը հանգարտ ոստրածվում էր քաղաքի վրա: Մի խումբ բանվորներ իրենց արտահագուստներով չտաք անցնում էին փողոցով: Նրանցից հետո երեք վաշխն չինարարական զործիքներն ուսերին, կրից սպիտակած շորերով մարդիկ: Դրանք կառուցողներն էին: Շատ չանցած այս ու այն փողոցից լսվեց

դպրոց չտապող աշակերտների աշխույժ, կենսուրախ խոսակցություն:

36.

Ճոճան ցուրտ դիշեր էր: Քաղաքը պայծառորեն լուսավորում էր լայուսինը: Մի տասնյակի չափ երիտասարդներ դահուկներն ուսերին մոտան կոմերիմոմիության շրջիկում: Լևոնն այնտեղ էր և դահուկներին յուղ էր քսում:

— Նշանակված ժամին հասարակականները կհայտնում են,—զինվորական պատվի բռնելով զեկուցեց Գարեգինը:

— Մարշրուտը կազմե՞լ եք,—հարցրեց Լևոնը առանց աչխատանքն ընդհատելու:

— Պատրաստ է, ահա՛,—պատասխանեց Գարեգինը, իր ձեռքով գծած դահուկային արշավի մարշրուտը բացելով և սեղանի վրա փռելով,—հաշվի են առնված արգելքները՝ զառիվայրեր, բլուրներ, կամուրջներ... Գարեգինը կարճ բացատրականից հետո կանգ առավ և լրջմիտ նայելով Լևոնին հարցրեց.

— Ну, а что думает комиссар?

— Իսկ աղջիկների և փոքրերի համար նշվե՞լ է մարշրուտը,—հանդիստ հարցրեց Լևոնը:

Գարեգինը մատիտի ծայրը ընկալ և սխալի մեջ բռնված երեխայի նման ծոծրակը քորելով ասաց.

— Իսկապես, հաշվի չէի առել:

— Մարշրուտի ճանապարհին դրոշակներ կա՞ն,—նորից հարցրեց Լևոնը:

— Դրոշակնե՞ր, մի՞թե նրանք չգիտեն, հարազատ, ծանոթ վայրեր են, ի՞նչ կարիք կա,—փորձեց արդարանալ Գարեգինը:

— Ինչ ամանք կարող են ճանապարհը կարճ կտրել,—միջամտեց դահուկավորներից մեկը:

— Թևանցել զառիվայրը,—հարեց մյուսը:

— Տեսնո՞ւմ եք, առավոտյան դահուկային արշալույն սկսվում է, իսկ չլուծված խնդիրներ կան,— ասաց Լևոնը և դահուկները ուսին դնելով՝ դուրս եկավ: Նրան հետևեցին մյուսները: Ճոռոմ լուսնյակ գիշերին դահուկավորները չարժվեցին դեպի դեսուդեն: Դրոշներ դրվեցին Գարեգինի դծած մարշրուտի համաձայն, նշվեցին աղջիկների և մոքրահասակների համար ֆինիշի տեղերը: Դահուկավորները չարունակեցին առաջ շարժվել: Զառիվայրն անցնելուց հետո մեկը բացատրեց.

— Տղե՛րք, դահուկս կոտրվեց:

Գարեգինը շտապ առաջ անցավ:

— Ինչ է, չե՞ս կարողանում: Ճիննական կռվի ժամանակ էլ այդպիսի բան պատահում էր: Ինչ պետք է անել, երբ դահուկի մեկը կոտրվում է...

Բարձր սարը թևանցելուց հետո, մարշրուտի համաձայն, դարսվանդով դահուկավորները պետք է վերադառնային: Սյաստեղ Լևոնը նշան արավ, որ բոլորը հավաքվեն և հանգստանան: Գարեգինը հետևում էր, որ կատարվեն շրջկոմի քարտուղարի բոլոր հանձնարարությունները և ինքն էլ իր հերթին խորհուրդներ էր տալիս:

Հենց որ դահուկավորները նստեցին, Լևոնը ձեռնոցները հանելով երեսը շփեց, ապա դառնալով Գարեգինին ասաց.

— Տեսնո՞ւմ ես, Գարեգին, ինչքան են լսրձր մեր սարերը...ու դանդաղ երգեց.

«Բարձր սարե՛ր, ա՛յ սարեր,
Ջեն եմ տալիս վա՛յ, սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձայն տվեք,
Իմ դարդերին թայ սարե՛ր...»

Երգի վերջին երկու տողը կրկնեց ամբողջ խումբը և ձայնն արձագանքից հետո՛ւ, հետո՛ւ, անցյալ սար ու ձոր...

— Ինչքան լավ են մեր երգերը,—ոգևորված ասաց Գաբրիելինը, Զապաևի նման գլխարկին ուզդելով:

— Առանձնապես ժողովրդական երգերը,— պատասխանեց Լևոնը,— և՛ մերը, և՛ ռուսականը, և՛ ուկրաինականը, և՛ վրացականը...

Եվ ոտքի ելնելով, դահուկների վրա կանգնեց, ամբացրեց ոտքերին և առաջ սահեց: Նրան հետևեցին մյուսները: Նրանք համեմատաբար ավելի շուտ ավարտեցին վերադարձի անցումը: Քանի մոտ վաղ առավոտյան, երբ բոլոր միջոցներից դահուկավարները չարժվում էին դեպի շրջկոմի հրապարակը: Ուղիղ նշանակված ժամին Մանթաշյանն ու Վահանյանը դուրս եկան՝ շարքերն առաջնորդելու: Ամենից կազմակերպված ներկայացել էին գործարանի դահուկավարները՝ Մատմանյանի և արտադպրոցի քարտուղար Ենանյանի գլխավորությամբ: Նրանցից հետո եկան մյուս գործարանների, հիմնարկ-ձեռնարկությունների, դպրոցների կոլեկտիվները: Ջննկոմը նախորդ օրը մեկնել էր մոտակա գյուղերից մեկը և մոտ հարյուրի չափ կոլխոզնիկ դահուկավարների բերել քաղաքացիների հետ մրցելու համար: Հրապարակում կանոնավոր շարք կանգնած հարյուրավոր մարդիկ «ուռա» բացականչելով պատրաստվում էին ընդունելու իրենց մրցակիցներին: Հենց որ «ուռաները» լռեցին, պատշգամբի երկհարկանի շենքի բաց պատուհանը բարձրացան Մանթաշյանը, Վահանյանը և գինկոմը: Բոլորը լռեցին:

— Այսօրվա դահուկային արշավը,— գիմեց Վահանյանը հավաքվածներին,— ունի ռազմական

կարևոր նշանակություն։ Մեկ անգամ ևս ստուգենք մեր պատրաստությունը, մեկ անգամ ևս վարժվենք ճիշտ պայմաններում արձակումներ հաղթահարելուն, որպեսզի, եթե հարկ լինի, մի մարդու նման դուրս գանք ամեն տեսակ առաջադրանք կատարելու։

Վահանյանի երեխից հետո Գարեգինը վազքով մոտեցավ պրչակի դեկավարին, զեկուցեց մարշրուտի և դիստանցիանների ճշտման մասին։ Այդ չարքերը կանոնավոր առաջ չարժվեցին։ Կոլխոզնիկների մեծ մասը կրտսին մասնակցելու էր եկել տեխնիկան ձեռքերով պատրաստած դահուկներով։

Ամբողջ կիրակի դահուկայորները գալիս ու գնում էին։ Երեկոյան արդեն տեղեկություններ ստացվեցին դյուղերում անցկացրված կրտսի արդյունքների մասին։ Ամբողջ գիշերը, ինչպես միշտ պատերազմի ժամանակ, շրջկոմի լույսը չմարեց։ Գարեգինը մի խումբ մարդկանցի հետ լրացնում էր կրտսի մասնակիցների մասին հարցաթերթիկները և տաք վիճաբանում, թե ո՞ր կազմակերպությանը տալ առաջնությունը։

Այդ ժամանակ սենյակի պատի վառարանի մոտ նստած երեք կոմերիտականներ զրուցում էին պատերազմի մասին։

— Տղերք,—բարձրաձայն գիմեց նրանցից մեկը,—հիմք երազենք։

— Ի՞նչ,—աչքերը սրտերով հարցրեց երիտասարդը, որ ասես նոր էր քնից արթնանում։

— Երազե՞նք,—հարցրեց երտրդը, վառարանը մի կուտ փայտ գցելով,—ինչի՞ մասին։

— Մեր ապագայի մասին, այն մասին, թե ինչ կուզենք լինել միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո,—չարունակեց առաջին կոմերիտականը, որ թեև տարիքով ամենափոքրն էր երեքից, բայց նրան-

Աշուն գիտեցիր—10

ցից գեր էր, հարթանդամ։—Ես օրինակ, տղերք ջան, կուզեի դառնալ Գաստելլո... Քանի կյանք էլ որ ունենայի, կուզում կտայի հայրենիքիս համար։

— Այդ լավ է,—աշխուժ միջամտեց երկրորդ կոմերիտականը,—իսկ ես կուզեի Կրասնոդոնյան ընդհատակյա կազմակերպության անդամ Օլեգ Կոշեվոյ դառնալ։

— Զոյա Կոսմոդեմյանսկայան.—սառնասիրտ նեց երրորդը։

— Իսկ Լիզա Չայկինա՞ն.

— Պոկրիշկի՞նը.

— Նելսոն Ստեպանյա՞նը...

Գարեգինն աննկատելիորեն մոտեցավ իրենց ապագայի մասին երազող երեք կոմերիտականներին, ունկնդրեց նրանց զրույցը, ապա կոկորդային բամբ ձայնով դիմեց նրանց.

— Զապաևը... Ա՛յ, թե չ՛լ ում պետք է նմանվել, սիրելիներս... Բայց վատարանի կողքին մի՛ նստեք։ Ավելի լավ է դուք այս րոպեին ինձ ասեք, կարո՞ղ եք օգնել թեմուրականներին։

— Կարող ենք, ինչո՞վ,— ոտքի կանգնելով հարցրին երեքը միասին։

— Ա՛յ թե ինչով, ընկերներ։ Թեմուրական ալիոնները շատ լավ օգնություն են կազմակերպել Սովետական բանակի մարտիկների ու հրամանատարների ընտանիքներին։ Ամեն ալիոներ թեմուրի օրինակով նրանք խումբ-խումբ լինում են նրանց տներում, փայտ են ջարդում, ջուր բերում, նույնիսկ չորերը լվանում...Դա շատ կարևոր գործ է, ընկերներ, չէ՞ որ ընտանիքներ կան, որտեղից 3—4 հոգի մեկնել են բանակ և տանը մնացել են մայրեր, երեխաներ, ծերուններ...

— Դե, նրանք ընտանեկան մանր գործերով են

զբաղվում: Մեր լինչ գործն է վայտ կտրելը... Ա՛յ ուրիշ բան է ռազմաճակատը, կամ ընդհատակում,—ձեռքը թափահարեց այն կոմերիտականը, որը երազում էր դառնալ Օլեգ Կոշեվոյ:

— Իսկ դու մինչև վերջը լսիր, հեռո,—խիստ նկատեց Գարեգինը,—ես ձեզ լուրջ բան եմ ասում: Դուք թեմուրականներից օրինակ վերցրեք: Իսկ պիտե՞ք, որ ձեր դասընկեր Աշխիկի հայրը բանակից նամակ է գրել ընկեր Մանթաշյանին, այո՛, անձամբ ընկեր Մանթաշյանին: Դժգոհել է, որ դուք չեք օգնում, որ նա լավ սովորի, կանոնավոր հաճախի դասերին... Գիտե՞ք ինչպիսի ամոթանք է ձեր դպրոցի համար:

Երեք կոմերիտականներն էլ ընկան մտածմունքի մեջ: Մի՞թե կարելի է դառնալ Գաառելլո, Կոշևոյ, Ոկրիչկին, առանց լավ սովորելու, առանց ընկերոջը օգնելու:

— Հենց այսօր, ընկերներ, կգնաք նրանց տուն: Կիմանաք ինչումն է բանը: Օգնեցեք, որ նա ձեզ հասնի: Անհրաժեշտ է պատասխանել Աշխիկի հորը և գրել, որ իր պահանջը կկատարվի:

— Կկատարվի՛,— հաստատեց բարձրահասակ կոմերիտականը և գլխարկը դնելով գլխին, դուրս եկավ: Նրան հետևեցին մյուս երկուսը: Մի չաբաթանց Աշխիկը անհամարձակ մտավ կոմերիտմիության շրջկոմ և բարևելով Վահանյանին, չգիտեր ինչից սկսել խոսակցությունը: Տեսնելով, որ նա նեղն է ընկնում, Վահանյանն ինքը օգնության հասավ:

— Եկել ես ասելու, որ այժմ կանոնավո՞ր ես հաճախում դպրոց, երկու ստարկայից արդեն գերազա՞նց ես ստացել... Որ այդ մասին գրենք հորը՞դ:

— Ա՛յո՛, ընկեր Վահանյան, ես մինչև տարվա

վեցը դեպատանցիկ կդառնամ, ապնիլ կոմերմուտական խոսք,—թոխմախց Նաշխիկը մինչև ականջները կարմրելով: Լևոնը մոռեցավ նրան, ձեռքը դրեց ուսին և ուղիղ աչքերի մեջ նայելով ասաց.

— Լավ: Կդրեմ: Բայց ասե՛ս, կոմերմուտականի խոսքը տուրջ խոսք է:

37.

«Պրավդա»-ի այն համարը, որտեղ տպագրված էր Կրասնոդարի «Երկոտասներդ վլաստիխա» ընդհատակյա կազմակերպության հերոսական սխրագործությունների մասին, ինքնուրույն ձեռքից-ձեռք էր անցնում: Երեկոյան դյուրի կոմերմուտական ժողովին այնքան մարդ հավաքվեց, որ կոլխոզի նախագահի գրասենյակում տեղ չկար:

— Էլ ո՞ր օրվա համար է մեր նորակառույց ակումբը,—ահագին հասակով ուժեղ կանգնելով ասաց բրիգադիր Մացակը,—այսօրվա մեր ժողովը հեռաքրքրում ու հուզում է ամբողջ մասային...

— Ակո՛մբ...

— Ժողովը վոխադրել ակո՛մբ...

Լավեցին այս ու այն կողմից: Նասոչան երջանկության ժպիտը դեմքին, ուժեղ կանգնելով ուժգ:

— Ճի՛շտ է, ընկերներ, մեր ակումբի հանդեսավոր բացումը հենց այսօր էլ կանենք:

Առաջինը Նասոչան դուրս եկավ և նրան հետևեցին բոլոր հավաքվածները: Հենց որ Նասոչան ուժը դրեց նորակառույցի շեմքին, բրիգադիր Մացակի ազդանշանով բարձրացավ հուժկու ուռան:

— Ահա և հանրահռչակ բացումը,—երկար ու գեղեցիկ նոտարականներից մեկի վրա տեղավորվելուց հետո բարձրաձայն ասաց Իվան Գավրիլիչը:

— Թուլյ ամեք,—նորից բարձրացավ Մացակի երկար հասակը,—մեր ակումբը կառուցեցին գլխավորապես երիտասարդները: Ես առաջարկում եմ այն կոչել Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիայի» անունով:

Նորից բարձրացավ հուժկու ուռան: Բոլորը տոքլ կանդնեցին: Հենց որ ուռանները ու ծափերը պատարեցին, Նատաշան դիմեց ժողովականներին.

— Հայրենական պատերազմի օրերին Լրենց հերոսամարտյան անդերգրաունդեցի օրինակով հուչակվեցին Զոյա Կոսմոդեմյանսկայայի, Լիզա Չայկինայի, Գաստելլոյի, Մատրոսովի անունները...

Նա մի րոպե լռեց, ապա բացելով «Պրավդա»-ն շարունակեց.

— Ահա երիտասարդության հայրենասիրության և ակտիվության մի նոր օրինակ ևս:

Թեև բոլորը կարդացել էին, «Պրավդա»-ն, բայց ժողովականները չնչները պահած լսում էին Նատաշային:

— Ի՞նչ կարող եմ ասել, ընկերներ,—ընթերցանությունը վերջացնելուց հետո դիմեց Նատաշան,—այսօր դուք առաջարկեցիք մեր նոտակառույց ակումբը կոչել Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի անունով: Այդ լավ է: Բայց ես մի ուրիշ առաջարկ էլ ունեմ...

Նատաշան չեզոքել նայեց հավաքվածներին, որոնց դեմքերն արտահայտում էին հետաքրքրություն և սեր:

— Ես առաջարկում եմ,—խրոխտ շարունակեց Նատաշան,—ի հավերժացումն կրասնոդոնյան էպոպեայի և հանուն մեր վերջնական հաղթանակի,

ստեղծել Կրասնոդոնի Երիտասարդ գվարդիայի անվան կործանիչների էսկադրիլիա:

Նատաշայի այս խոսքերը ծածկվեցին որոտընդոստ ուռաններով: Մի քանի օրից հետո ռեսպուբլիկական բոլոր թերթերում տպագրվեց Բլրապյուղի երիտասարդության դիմումը՝ ուղղված Հայաստանի կոմերիտականներին և երիտասարդներին.

«Անմահ է Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիայի» հերոս կոմերիտականների փառքը: Սովետական Միության հերոսներ Օլեգ Կոշևոյը, Սերգեյ Տյուլենինը, Իվան Զեմնուխովը, Ուլյանա Գրոմովան, Լյուբա Շևցովան իրենց կյանքը զոհաբերեցին ժողովրդի ազատության համար, իսկ նրանց պատանի զինակից ընկերները սովետական երիտասարդության հերոսության ու արիության նոր էջ գրեցին լենինյան-ստալինյան կոմերիմիության պատմության մեջ: Նրանց թափած արյան ամեն մի կաթիլը կոչ է անում սրբազան ու անողոք վրեժխնդրության:

Մեր գյուղի կոմերիտականները և երիտասարդները Կրասնոդոնի հերոսների անմահ սխրագործությունը հավերժացնելու համար որոշեցին միջոցներ հավաքել, կործանիչների էսկադրիլիա կառուցել և այն անվանել «Կրասնոդոնի երիտասարդ գվարդիա»:

Մենք դիմում ենք Սովետական Հայաստանի բոլոր կոմերիտականներին, կոմերիտուհիներին և երիտասարդությանը, կոչ անելով իրենց միջոցներով կառուցել Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի անվան կործանիչների էսկադրիլիա:

Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի անվան էսկադրիլիան կլինի Կրասնոդոնի հերոս կոմերիտականների անմահ փառքի հուշարձանը»:

Ամբողջ ռեսպուբլիկան արձագանքեց բլրապյուղցիների հայրենասիրական այս նախաձեռնությանը: Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի անվան էսկադրիլիայի կառուցման ֆոնդը մուծվեց երկու միլիոն վեց հարյուր հազար ռուբլի և Հայաստանի երիտասարդները ստացան Մեծ Սուալինի չնորհակալական հեռագիրը:

38.

— Լևո՛ն,—ժպտալով դիմեց Մանթաշյանը,—.զու պատվով կատարեցիր քեզ վրա դրված պարտականությունը թիկունքում: Կարծում եմ, քեզ կարդարացնես նաև ռազմաճակատում...

Եվ նա ձեռքը դնելով Լևոնի ուսին իր սովորության համաձայն հոնքերը կիտելով սև, խոշոր աչքերն արագորեն թարթելով ավելացրեց.

— Հաջողություն եմ ցանկանում քեզ, հույս ունեմ, որ պատերազմից հետո կհանդիպենք: Շուտով մեր վոդոցումն էլ տոն կլինի, պատերազմը կվերջանա հաղթանակով...

— Այո՛, մեր վոդոցումն էլ տոն կլինի,—ուրախ արձագանքեց Լևոնը և նա մտաբերեց պիոներական պալատի ընդարձակ դահլիճը, Շրջկոմի պլենումը, որտեղ ընտրվեց քարտուղար, Սուրեն Ավետիսյանի ռեպլիկան. «Միանգամայն արժանավոր թեկնածու», ծափերը, «Կոմերիտական չերվոնեցները», կրասնոդոնյան հերոսների անվան էսկադրիլիան: Սկսեց իրեն հաշիվ տալ, թե արդյոք արդարացրե՞ց Մանթաշյանի և իր ընկերների վստահությունը...

— Ես աշխատել եմ արդարացնել ինձ ցույց

ուված վատահությունը,—պատյված ասաց Լևոնը,—բայց ունեցել եմ նաև սխալներ: Պարտիան ինձ իմ սխալների համար միշտ պատժացրել է, պատիժ-րակել...

Հեռախոսն աղմկեց: Մայրաքաղաքից նոր առաջադրանք էր տալիս կենտկոմի քարտուղարը: Լևոնը շտապ դուրս եկավ Մանթաշյանի մոտից և մտավ կոմերիտմիության շրջկոմ, ուր բաղկամոռի վրա, ճերմակ ու դեղնցիկ ձեռքերով գլուխը բռնած նիրհել էր Հյուդմիլան: Ոտներովի վրայով պատյ-քայլելով Լևոնը մոտեցավ նրան և երկար ժամանակ լուռ էր նրա մեղմ շնչառությունը: Մի ավտոմեքենա հանդարտ անցավ լուսամուտի մոտով, որի ձայնից Հյուդմիլան արթնացավ. և սկսեց տրորել աչքերը:

— Հյուդմի՛լա, սիրելի՛ս,—շշնջաց Լևոնը,—հոգնե՞լ ես: Գնանք տուն:

Հյուդմիլան ուրախացած աչքերը բացելով բռնեց Լևոնի թևից և սկսեց մեղմ ժպտալ.—Այդ դո՞ւ ես, Հյուվա, ես քեզ եմ սպասում: Բլրատյուղից եկել է Իվան Գավրիլևիչը:

— Իվան Գավրիլևիչը՞,—ուրախացավ Լևոնը, բայց նկատեց հիշելով Մանթաշյանի խոսքերը, մի պննող հայացք գցելով Հյուդմիլայի դեմքին, ասաց.—Գնանք տուն... Բայց դիտե՞ս, որ ես մեկնում եմ ռազմաճակատ՝ հատուկ առաջադրանքով:

— Ռազմաճակա՞տ,—զարմացավ Հյուդմիլան և տոի կանգնեց:

— Այո՛... Հյուդմիլա: Բայց դու, կարծում եմ, ինձ կսպասես:

Հյուդմիլան հպարտորեն դլուխը բարձրացրեց և դեղնցիկ, կատուի աչքերը Լևոնի վրա սևեռելով ասաց.

— Նույնիսկ կասկածո՞ւմ ես, որ ես քեզ կսպասեմ: Այդ ինչե՞ր են դլխովդ անցնում:

Լևոնն ու Լյուդմիլան գնացին տուն:

— Այսօրվանից մեր երկու աննյակների միջև նախատի դուռն այլևս չի փակվելու,—Աննա մայրիկին հանդստացնելով ասաց Նատալիա Միխայլովնան,—մենք այժմ մի ընտանիք ենք և միասին կսպասենք Լևոնի վերադարձին:

— Թող այդպես լինի,—արտասուքները սրբելով՝ պատասխանեց Աննան,—ասված է՝ մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը... Մենք և՛ մոտիկ հարևան ենք եղել, և՛ բարեկամ... Միայն թե Լևոնս շուտ վերադառնա...

Առավոտյան ընկերները ժամերով չէին հեռանում Լևոնի մոտից: Սեղան մի քանի անգամ արտասուքից և հեկեկալով կրկնում էր.

— Ես չեմ կարող առանց ձեզ աշխատել...

Լևոնն ընդհատում էր և համոզում, որ կայուն մնա, թուլամորթություն չանի:

— Մենք կոմերիտականներ ենք,—ասաց նա,—նմանվիր այն հերոսներին, որոնք չնայած երկնից ժառաղ հասակին, արիաբար ծառայեցին մեր հայրենիքին:

Ամենից շատ անհանդստացած էր Զատան. Գարեգինը, որը Լևոնի կողքից չէր հեռանում:

— Երանի ձեզ, որ ռազմաճակատ եք գնում, բայց ի՞նչ կլինի, որ ինձ էլ տանեք, ա՛խ, մի պայի... Չէ՞ որ դուք տասի էիք, ես միասին պետք է ռազմաճակատ գնանք:

Անտասելի կերպով եկավ կենսուրախ զատուդարը: Մինչև ուշ գիշեր նա Մանվելյանի տանձանոցանոցում Լևոնի հետ զրույցում էր, հանձնարարություններ անում: Անհրաժեշտ էր ուսումնասիրել, թե կոմերիտականները ինչպես են կատա-

րում իրենց մարտական առաջադրանքները, անհրաժեշտ է լինել առաջավոր գծերում և պատմել թիկունքի մասին, այն մեծ ապահովիչների մասին, որ ունեն թիկունքի մարդիկ սովետական հզոր բանակից:

Բազմաթիվ մարդիկ, հատկապես մայրեր, գալիս էին տուն Լևոնի մոտ:

— Գուցե հանդիպես մերոնց, ես քո աչքերին մատաղ, նամակ չունեմ, գուցե մի բան իմանաս,— ասաց մի պառավ կին, որ ուզմաճակատ էր ուղարկել իր երեք թոռներին,—ախր գոնե մեկից մի տեղեկություն իմանայի, հետո մեռնեի... Գուլպաներ եմ գործել, արևի՛դ մատաղ, հետդ տար, գուցե հանդիպես մերոնց:

— Սաա քեզ չատ ենք կարոտել, թաուլան չան, —մղկտալով ասում էր մեկ ուրիշը,—գոնե մի նամակ գրի, աչքներս ջուր կտրեց ասպասելով: Համ էլ մի տես ինչպես է դրությունը, կռիվը երբ է վերջանալու:

— Զոր տեղ դնաս, կանաչի, որդիս, չուտ չարդնցեք էդ չներին ու վերադարձեք... աչքներս ճամփի է, ոսի թրփոց լսելիս, կարծում ենք թե լրենք են ներս մտնում, ադիզ չան, գոնե մի կատր թուղթ ուղարկիր, մի տեղեկություն...

Այսպես էին ասում նրանք, ինչպես հարազատ որդուն: Լևոնը հանգստացնում էր նրանց:

— Հա՛, քիչ էր մնում մոռանայի,—ասաց Լևոնը գոմխոսան նայելով,—իսկ ձեր հարսանեկան հանդեսը մենք դեռ կկատարենք, կկատարենք մեծ չուքով:

— Ինչ հարսանեկան հանդես. նրանք նորից ընդհարվել են, նորից ռազմական դրությունն է հայտարարվել,—մինչամտեց էմման, որ այն կարծիքի էր,

ֆե կոմիտասի և Սեդայի ամուսնությունը շուտ դլուխ գալու գործ չէ:

Սեդան կարծես վիրավորվելով էմմայի խոսքերից հանդիմանական տոնով առարկեց նրան.

—Ո՛չ մի ռազմական դրություն չի հայտարարված, ի՞նչ ես քեզանից բաներ հնարում:

— Այո՛,—ոգևորվեց կոմիտասը և ձեռքը էմմայի ուսին դնելով ժպտադեմ շարունակեց,— մինչև Լևոնը չվերադառնա... Լևոնի և Լյուդմիլայի ու մեր հարսանիքը մեկ օր կանենք:

— Բայց ո՞ւր է Լյուդմիլան,—անհանգստացան այս ու այն կողմից:

— Պարզ է, ճանապարհի պաշար է պատրաստում,—պատասխանեց Գարեգինը մի տեսակ այլայլվելով: Զգացվում էր, որ նա ինչ որ բան է ուզում թաքցնել և խոսակցության նյութը փոխեց.

— Ահա և Նատաշան,—կարծես դժվար կացությունից դուրս գալով ուրախ բացագանչեց Գարեգինը և վազեց պատշգամբ: Այդ միջոցին ներս մտավ Նատաշան. նա Լևոնի համար ճանապարհի պաշար էր բերել:

— Մեզ չմոռանաք,—ասաց նա ահագին խուրջինը պատշգամբից ներս քաշելով,—ինչ էլ որ պակասի, կգրեք Բլրագյուղ, կուղարկենք:

Եկան նաև էվակուացված աղջիկները Օլգան, Տատյանան, նրանցից հետո՝ Վեսելևսկին ու Գեորգը:

Գեղամը Օլգային ուրախ բարևելով ասաց.

— Գիտե՞ք, ես արդեն աշխատում եմ:

Օլգան հավանության նշան արավ և նրանք նստեցին կողք-կողքի:

Սրբուհին ամենից ուշ եկավ Վահանյաններից տուն և գրավեց բոլորի ուշադրությունը: Վեսելևսկին նախան ընդհատելով դիմեց նրան.

— Գնչուհու նման աղջիկ, խնդրում ենք պարենք գնչուական...

Սրբուհին լավ պարել գիտեր, բայց տրամադիր չէր: Մանթաշյանին դրած դիմումից հետո նա չէր տեսել Լևոնին և չգիտեր, թե ինչ տպավորություն է թողել... Իսկ այստեղ Վեսելևսկին առաջարկում է պարել...

Վրա էր հասնում հրաժեշտի ժամը, բայց Լյուդմիլան չկար: Աննան ու Նատալիա Միխայլովնան անհանգիստ նեղս ու դուրս էին անում, իսկ Լևոնը նկատելիորեն տխուր էր: Ո՞ւր է Լյուդմիլան:

— Ահա և նա,—նկատից դեպի պատշգամբ վազեց Գաբեգինը:

Լևոնի դեմքին մեղմ ժպիտ խաղաց: Նեղս եկան նաև Աննան ու Նատալիա Միխայլովնան:

— Սերեմնե՛ս,—հանդիսավոր դիմեց Լյուդմիլան հավաքվածներին,— ես և Լյովան միասին ենք մնալու բանակ:

— Ինչպե՛ս:

— Այդ ե՞ր:

Հարցրին այս ու այն կողմից:

— Ընկեր Մանթաշյանի միջնորդությամբ գնումն ընդառաջեց իմ ցանկությանը,—ուրախ պատասխանեց Լյուդմիլան:

Կայարանում Աննա մայրիկը դրկեց, համբուրեց Լևոնին ու Լյուդմիլային և ասաց.

— Տաք պահեք ձեզ, Լևոն և Լյուդմիլա ջան, ճանապարհին չմրսեք: Նամակներդ անպակաս կանեք, ձեզ մաղթ...

Զանգը հնչեց: Գնացքն սկսեց դանդաղ շարժվել: Լևոնը բարձրացավ վագոն: Զայրան Գաբեգինը պահանջով հավաքվածներին, վերհիշեցավ Լե-

վանի խոսքերը պատերազմի առաջին օրերին երևան-Թաղայի կայարանում, բացատրեց.

— Իմ դուք, կարծես երիտասարդներ չլինեք, այդպես լուռ ու մո՛ւնջ: Ամո՛թ է տղե՛րք, դե մի ե՛րգ, շո՛ւտ...

Առաջինը բարձր հնչեց Կոմիտասի բարեւոնը, ապա նրան արձագանքեցին բոլորը և խոմբերն սկսեց.

— Крутится, вертится шар голубой...

Գնացքը թափ առած հեռացավ: Շուտով նա անհետացավ անտառի խորքում:

Անանն սկզբում ցույց չտվեց որդուն իր վիշտը, չէր ուզում սխալ բաժանում, չէր ուզում երիտասարդների մոտ արտասվել: Մանթաշյանը և մյուսները Աննային ու Նատալիա Միխայլովնային չըջապատած տուն տարան, ասելով. «Մի մոտածեք, մենք բոլորս ձեր որդիներն ենք: Մենք ձեզ մենակ չենք թողնի»:

Ամբողջ ցերեկը վահանյաններն տունը լեփ-լեցուն էր: Գիշերն Աննան մոտավ անկողին, քունը չառավ: Եվ ո՞ր մայրը կքներ, երկու աչքի լույս՝ երկու որդուն մահու և կենաց կռիվ ուղարկելուց հետո:

— Նատալիա Միխայլովնա,—ձայնեց նա անկողնում նստելով: Միջնապատի դռան առաջ երեվաց Նատալիա Միխայլովնան:

— Ի՞նչ է, Աննա,—դու է՞լ չես քնել,—ասաց նա Աննայի մահճակալի վրա նստելով:

Երկու մայրերը նայեցին իրար: Այս Աննան աչքերը սրբելով հարցրեց.

— Նատալիա Միխայլովնա, ի՞նչ ես կարծում, մեզանք ռազմաճակատում կարո՞ղ են միասին լինել, նրանց չի՞ն բաժանի...

— Հնարավոր է,—մտազբաղ պատասխանեց

Նատալիա Միխայլովնան, ապա ուսերը թոթվեց,—ինչ լսանաս, պատերազմ է...

39.

Գործարանում անքուն դիշերները չարունակվում էին: Բազմաթիվ չարքային բանվորներ պատերազմի տարիներին աճեցին, դարձան վարպետներ ու բրիգադիրներ: Գործարանի դարպասի վրա դեռ մնում էր Սեդայի ձեռագրով գրված լոզունգը. «Այստեղ չարունակվում է ռազմաճակատի գիծը»: Ռազմաճակատի գիծն արդեն հեռացել էր, տեղափոխվել արևմուտք, դուրս էր եկել մեր հայրենիքի սահմաններից, բայց մնևնում էր, չէր կարելի հանդուրժանալ, մինչև ֆաշիզմը լուվին չջախջախվի:

— Մինչև վերջնական հաղթանակ:

Այսպես էին ասում երեկոյան աշխատանքային առօրյան գործարանի մարդիկ:

— Դու վոխարինում ես կոմերիտմիության չրջկոմի քարտուղարին,—դիմելով Կոմերտյանին՝ ժպտալեմ ասաց Մազմանյանը,— Ղամբարյանը՝ քեզ: Նա այժմ դնկավարում է ձեր գնդը և կարևոր արտադրանքի թողարկումը կատարելապարծելու նը, ամեն կարևոր առաջարկ էր արել, որ կենսագործման համար կառույցում է նոր կորպուս:

— Վիհի ասածը պետք է վանկել,—Կոմերտյանն բարեկեցուց հետո ասաց Ղամբարյանը,—առանց չուրը կարելու հնարավոր չէ չարունակել կառուցումը, սարքավորումը տեղադրել... Չուրը կանգարում է:

— Սիրո՞նքը,—մտադրող հարցրեց Մազմանյանը,—առանան դիտի, թե որքան է խոր, հետո ինչպե՞ս լինել այնտեղ, գործիքներ, ցեմենտ լցնել...

— Պարանով, ընկեր դիրեկտոր,—նրա հուզմունքը տեսնելով ասաց Ղամբարյանը:

— Պարանո՞վ,— ուշադիր նայելով նրան՝ հարցրեց Մադմանյանը, ապա մտախոհ շարունակեց,—այդ դժվար է. մանավանդ ակունքը լեռան լանջին է, ապառաժ քարերի մեջ, անանցանելի...

— Ես կխորհեմ,—վստահացրեց Ղամբարյանը,—իջեցրեք ինձ ակունքը: Առաջ կուսումնասիրեմ, հետո կիջեցնենք գործիքներն ու ցեմենտը... Մի՛ք տատանվի, ես կանեմ, ինչ որ հնարավոր է: Դիրեկտորը Ղամբարյանի վճռականության վրա ուրախացավ և նրա ձեռքը սեղմեց.

— Դե՛, վորձի՛ր...

Ու չտապեցին լեռնականը: Ղամբարյանը պատրաստվել լրեն ամուր կապելուց հետո, վերցնելով քլունգն ու լապտերը, կանդնեց խոր վիհի եզրին և ասաց.

— Իջեցրե՛ք, չմոռանաք ապրանշանը...

Երեք բանվորներ ամուր բռնած պարանից, Ղամբարյանին պղուլշ իջեցրին վիհը, ապա դանդաղ առաջ սլլին պարանը: Մի քանի րոպեից հետո պարանը բռնողները զգացին և այն թուլացավ: Դիրեկտորը չունչը պահած ականջ դրեց վիհին, կարծես անդունդից լսվում էին ինչ որ ձայներ.

— Հասա՞վ,—հարցրեց մեկը:

Այդ միջոցին պարանը ձգվեց... Մի քանի մետրը ևս... Նորից թուլացավ, բայց ոչ մի ձայն չէր լսվում:

Բոլորը նայեցին իրար երեսի, բայց ոչ ոք չխոսեց: Մադմանյանը ականջը վեհին դրած, չունչը պահած յարեր էր յողուբթյունը:

— Ֆաչի՛ր, ապրանշա՛նը,—բացատրեց պարան բռնող բանվորներից մեկը:

Պարանն ղժուշտյամբ քաշեցին վեր: Զամբարյանն ամբողջովին ցեխոտած դուրս եկավ:

— Գնա՛ր,—նրան դիմելով անհամբեր հարցրեց Մազմանյանը:

— Այո՛, ամե՛ն դրծիքները, երկաթ ու ցեմենտ... Առանց հոգնածության նշան անգամ ցույց տալու տաղ Զամբարյանը և նորից կախվեց վիհի մեջ: Նրա համար իջեցրին դրծիքները, ցեմենտ: Այս անգամ խորության հայտնի էր և բանվորներն ավելի վատահ էին թողնում պարանը: Երկու ժամ չարունակվեց աշխատանքը. հորում, խավարի մեջ: Երկու ժամ չարունակ վերևում կանգնած մարդիկ լուռ սպասում էին, առանց նույնիսկ չարժվելու: Կոմխտասը հոգնելով, Մազմանյանի օգնությամբ նստեց քարերից մեկի վրա և նույնպես սպասում էր: Երկու ժամից հետո պարանը բռնող նույն բանվորը ղոռց ազդանշանը և պարանն սկսեցին քաշել: Զամբարյանը դուրս գալով հորից և ցեխոտված դեմքը մաքրելով ասաց.

— Այժմ ջուրը չի կանդգրի մեզ, սարքավորումը կտեղադրվի հենց այսօր...

Բոլորը կանդգավորված չնորհավորեցին Զամբարյանին, իսկ Կոմխտասը դիմելով նրան ասաց.

— Ապե՛ս, մեր բրիգադայի երեսը պարզ արիր:

Լեռնականից լինելու Մազմանյանը ձեռքերը դրել էր եռևին և հպարտորեն մտում էր.

— Այո՛, այդպե՛ս են մեր տղաները,—ապա Կոմխտասին նայելով՝ ավելացրեց,—թիկունքում լինեն, թե ռազմաճակատում, նրանք կյանք չեն խնայում...

— Ի՞նչ է անում Գևղամը,—հետաքրքրությամբ հարցրեց Կոմխտասը, երբ Մազմանյանի հետ մտան ցեխը:

— Գեղա՛մ ր,—ձեռքերը հաճույքով իրար քսելով պատասխանեց Մազմանյանը,—նա օրինավոր տղա է դարձել:

— Օրինավոր դարձավ դործարանում,—նեղա մտնելով և բարևելով ասաց Լիման,—ո՞վ կասի, թե նա հին գերազրի տղա Գեղամն է, քաղքենի՛ն...

— Մեր գործարանը միայն այդպիսինների՞ն է դաստիարակել,—գոհունակությամբ լրակը չիներով ասաց Մազմանյանը,—ցեխի վարիչը նախկին անապատական չէ՞, մեքենայական ցեխի տեխնոլոգը...

— Կոմերիտմիության մեջ մտնելուց հետո Գեղամը ամբողջովին փոխվել է,—ասաց բարձրահասակ, նիհար մի երիտասարդ: Դա գործարանի կոմերիտական կազմակերպության կոմիտեի քարտուղարն էր:—Մի քանի անգամ դիմեց և խնդրեց առաջատար մասնագիտություն սովորելու համար: «Հաշվապահն ինչ է որ: Աղջիկերքն էլ կարող են այդ գործն անել»,—ասում էր նա: Որպեսզի կատարենք նրա ցանկությունը և փոխենք աղջիկների նկատմամբ նրա ունեցած թերահավատությունը, կոմիտեն որոշեց ուղարկել նրան Լիմայի մոտ: Թող գառնա Լիմայի նման ստախանովական ֆրեզերագործ, նրա նման լավ մասնագետ:

— Եվ Գեղամը սովորեց,—մեծ ու պեղեցիկ աչքերը թարթելով, ճակատի քրտինքը սրբելով ասաց Լիման: Սոխորի՛ր, Գեղամ, ասում էի նրան, որ պատերազմից հետո պարենք և՛ տանդո, և՛ ֆոկստրոտ, և՛ ռումբա, մեր կոլխոզյան պարերից... Նա սկզբում մի տեսակ խուսափում էր հրապարակ դուրս գալ... հետո ընտելացավ: Լա՛վ ձեռք ունի, մաքո՛ւր գործ է կատարում:

Գործարանի դիրեկտորը իր սովորության հա-

մաճայն ձեռքերը հաճույքով երար չխնելով սկսեց համեմատություններ անել.

— Եթե Գեղամը չասրեր մեր կարդերուն,— նա հազալով կոկորդը մաքրեց և ապա շարունակեց,—ասրեր, ասենք, Անդրեասյան, կամ Սմբելեան, ինչ կլլիներ նրա վերջը. հետահաստություն և ոդբալի վախճան ինքնասպանության մը ջոգով... Իսկ մեր դործարանը մայրիկանց անվանում է Կոմսոմոլի անվան անտառի նման:

Մադմանյանին հարևան ցնծից չտալ կանչեցին: Կոմխտասն ու Լմման մտան մեքենայական ցեխը:

— Մադմանյանն այս քաղաքի ամերիկյան որբանոցում է անցկացրել իր մանկությունը,— ցեխ մտնելիս ասաց Կոմխտասը,—մշտ ատելությամբ, վրեժխնդրությամբ է պատմում այդ տարիների մասին:

Լմման պլխով հավանություն նշան արավ: Այդ մասին Մադմանյանը մեկ անգամ պատմել է դործարանի կոմերիտական ժողովում: Ապա նայելով Կոմխտասին և ինչ որ հիշելով ավելացրեց.

— Ընկեր Վահանյանն էլ այն ժամանակ մասնակցում էր մեր ժողովին: Օրակարգում դրված էր սովետական երիտասարդի բարոյական կերպարի հարցը: Երկար ունեցավ նաև նա:

— Ինչ երկար էր,—կատակով հիշեց Լմման և մատնահոգ նայելով Կոմխտասին՝ հարցրեց,—ի դեպ, ե՞րբ է ատացիել նրանից վերջին նամակը:

— Մեկ շաբաթ կլլինի:

— Մեկ շաբա՞թ,—զվարթացավ Լմման,—այդ վատ չէ...

— Նա գրում է, որ երկու ամիս է, Լյուդմիլային չի տեսել...

— Դե, ասպահանում է, — նրանից մասին ասաց Էմման, — հետախուզական առաքելություն է կատարում, որ հարկավոր է լինել, որ հարկավոր չէ՞... Ինչ իմանաս, ինչ առաջադրանքով, ո՞ւր է գնացել: Լյուդմիլան բուժքույր է, նա հո ամեն տեղ չի կարող գնալ հետախույզների հետ:

— Չի կարող, — ձեռնափայտին հենվելով՝ կրկնեց Կոմխառը, ապա հրաժեշտ տալով, քայլերն ուղղեց դեպի գրծարանի դարպասի մոտ կանգնած ավտոմեքենան:

Ավտոմեքենան արդեն ասֆալտապատ ճանապարհով և շատ չանցած՝ կանգ առավ Բլրաշեն-ում: Կոմխառը այն հարցին, թե որտե՞ղ է Նաուչան, կատարածուն ձեռ տալով պատասխանեց:

— Հա՛յ, հա՛յ, Նաուչային էլ կասեն ո՞ւր է... Նա ամեն տեղ է՝ բրիգադներում, ֆերմաներում... Եռյեխով նա այժմ այստեղ է, այս գրասենյակում:

— Ինչպե՞ս թե այստեղ, — ապրկուսած հարցրեց Կոմխառը:

— Այո՛, այստեղ է... Ա՛յ, առաջներում, Հայրենական պատերազմի ժամանակ, կատարածուն դրժ չուներ, ուր ուզենար կգնար, իսկ Նաուչան պահանջում է միշտ լինել տեղում, պատասխանել հեռախոսին, հանձնարարություններին... Կատարածուն, ասում է Նաուչան, կարևոր է ինչպես կապավորը ապամանակաում...

— Ճի՛շտ է ասում Նաուչան, — ժպիտը դեմքին պատասխանեց Կոմխառը, — ե՛ որ այդպես է,

խնդրում եմ անմիջապես կապվել Նատաշայի հետ և հայտնել, որ ես սպասում եմ իրեն:

— Այս րոպեին...

Եվ կատարածն պայծառ դուրս: Կոմիսարը Նատաշայի պրոտեզանի մոտ նստած կարդում էր սպիտակ տակ դրած կոլխոզի աշխատանքների օրացուցային պլանը, օրվա կատարվելիքը... «Հետևվում է հաշվառման գրծին, ո՛նց է հետևում», մտածեց Կոմիսարը:

Մի քանի րոպե անց նեղ մտավ Նատաշան և չեմպրեն բարևեց Կոմիսարին: Կոմիսարը հետաքրքրվեց գյուղի աշխատանքներով, կոլխոզի վերաբերյալ զանազան հարցեր տվեց նրան: Իսկ Նատաշան հետաքրքրվեց, թե արդյոք Կոմիսարը լուր չունի՞ Լևոնից, Լյուդմիլայից:

— Ինչպես չէ, ինչպես չէ, երկու օր առաջ մեր շրջկոմը Լևոնի տրոմատից նամակ ստացավ,—Կոմիսարը դաշտային պայուսակից հանեց նամակը և հանձնեց Նատաշային:—Գնահեն, որ շատ ես հետաքրքրվում նրանցով, հետս վերցրի:

Նատաշան ուրախ-ուրախ վերցրեց նամակը և իր պրնդուն ձայնով սկսեց բարձր կարդալ:

«Հայ ժողովրդի արժանավոր զավակ Լևոն Վահանյանը, որպես հետախույզ, բազմիցս աչքի է ընկել իր խիզախությամբ, անվեհերությամբ: Մի անգամ հետախուզական դասակի երկու մարտիկների հետ նա ընկավ նեղ դրության մեջ: Ցաշխատանքը շրջապատեցին նրանց: Ազատվելն անհնար էր: Երեք մարտական ընկերները երդվեցին գերի չհանձնվել: Թշնամու տեղատարածքի կրակի տակ նրանք առաջ էին շարժվում: Հանկարծ հետախույզներից մեկն ամբողջ հասակով կանգնեց և բացագանչեց.

— Սրիկանե՛ր...

Ու ընկալ Լևոնը նո նայեց, բայց ընկերոջը օգնելու ոչ մի հույս չկար։ Լսվեց երկրորդ հետախույզի ձայնը.

— Ընկեր հրամանատար, մենո՞ւմ եմ, գոնե ինքդ ազատվիր, տեղեկությունները հանձնիր շատ՝ բ, շո՞ւտ...

Լևոնն իսկույն ցատկեց դեպի հետախույզը՝ օգնության հասնելու։ Նա գրկեց վիրավոր ընկերոջը և շարունակեց սողալ առաջ։ Սրկը պայթեց նրանց շատ մոտիկ։ Նրանք սեղմվեցին հողին։ Ամեն ինչ լուռ էր։ Գերմանացիները կարծել էին, թե ոչնչացրին երկուսին էլ, սակայն նրանք սխալվում էին։ Օգտվելով մթությունից՝ Լևոնը սկսում է սողալ դեպի անտառ, իր հետ քարշ տալով ծանր վիրավոր ընկերոջը։

Նա վերադարձավ հարուստ տեղեկություններով, իր վիրավոր ընկերոջ հետ։

Չմոռանամ գրել, որ Լևոնը յուրաքանչյուր հարմար առիթով հետաքրքրվում է, թե ռազմաճակատում ո՞վ կա Լրենց քաղաքի կոմերիտականներից։ Հնարավորության սահմաններում նամակագրական կապ է պահպանում նրանց հետ։ Մի առանձին նամակով տեղյակ է Սասիկ Շահյանին։ Վերջերս Էյուդմիլան դիվիզիայի սանիտարական մասի բժիշկներից մեկի միջոցով պարզեց, որ Շահյանը գտնվում է մեր հարևան զորամասում։ Գրեք Թիկունքի մասին։ Նա շատ է ուզում իմանալ ինչ են անում կոմերիտականները»։

— Մենք ճակատներս լայն կպատասխանենք ընկեր Վահանյանին,—կարճ լռությունից հետո ասաց Նատաշան,—մենք կդրենք, որ կռվողը ոտի է կանգնել և կռվողներին դարձել են ունեցր։ Ահա, դուք ինքներդ տեսեք, ընկեր Կոմիսար,—ասաց նա կոմիսարին առաջնորդելով պահեստ։

Մեծ ու ընդարձակ պահեստը առխտանվներով բաժանված էր առանձին մասերի։ Մինչև առաստաղ էր բարձրացել ռսկեգույն ցորենի հնձը։

— Այս սերմացուն է, պետական կոնդեսյային համապատասխան,—շարունակեց Նաուշան,—այս էլ աշխարհին պետք է ժամանակ,—մյուս շեղջը ցույց տվեց նա:—Պետական պարտավորությունները վաղուց ենք կատարել, կոլխոզնիկներին ավանսավորել ենք: Այդ բոլորից հետո աշխարհին վեց անգամ ավելի հացահատիկ կտանք, քան անցյալ տարի: Դրան ավելացրած՝ աշխարհին վեց կիլոպրամ կարտոֆիլ, տպա պտղեր, յուղ, խնձոր, ոնուսանեի կիներ և այլն:

Հացահատիկի պահեստից հետո նրանք մտան մեքենատրակտորների պահեստը, որտեղ դրված էին տակտանելով ու կապե ամոնիակով լի յուղ ու պանիրը:

— Ինչքա՜ն դնանք խորհրդանշական Ֆերմա: Մի՛ վախեք, այնտեղ շատ մաքուր է,—ժպտալով ասաց Նաուշան:—Կտեսնեք, որ խոզերը մաքրասեր են և նրանց դաստիարակը խոլնչի վրա մնում է...

Ֆերմա մտնելուն պես, երկու կարմրաթաշ ապչկի ախոռակ խոզիկներ և թաղլիք ոնուսանեներ մոտեցան Նաուշային և Կոմխոսին:

— Օրենք է, պետք է ներկայանալ,—ուրախացած Կոմխոսը խոզիկը հպարտ:

Ապա Նաուշայի հետ սկսեցին դիտել ֆերմայի խոզերը, որոնք մաքուր, սպասավին էին տալիս: Մայր խոզերից յուրաքանչյուրն ուներ իր համար տեղը, իսկ կողքի այուների վրա փակցված էին պատասխանները, որտեղ գրանցված էին նրանց անունը, քաշը, տարիքը, տեսակը և ո՞ւմ խնամքին է հանձնված: Ամենալավ պատասխանները կանանցից գրանցված է նաև օրվա ուժը: Կարմրաթաշ ապչկիները գտան իրենց հարազատ մորը և իրենց հասակակիցներին, նրանց հասկացան ֆերմայի մասին:

— Յուրաքանչյուր անասունի խնամքի համար հատուկ ռեժիմ է սահմանված,—ասաց նրանցից մեկը,—ահա այս տասը վիճանոց խոզը ես եմ խնամում,—ցույց տվեց նա որմայինը արդեն չափահաս խոզերից մեկը, որը դեռևս լոքած ժամանի մեջ՝ կեր էր ուտում:

Յուրաքանչյուր վանդականման բաժանմունքի վերևն կախված էր էլեկտրական լամպը, իսկ այս-ներին, պատատրանների տակ՝ արհիճ և խոզանակ: Յեմենտած հատակը փայլում էր իր մաքրությամբ:

— Եթե պատերազմը չլիներ, մեր անասնապահները պիտի ունենային անասնաբույժի հետ ջուղայունեական ցուցահանդեսում առաջին կարգի դիպլոմ կատանային,—մեղմ ժպտալով ասաց Նաուսաչան, դեպի իր գործն ունեցած սիրո և հաջողության համար անհունորեն հրճվող մարդու հպարտությամբ:

Երանք նույնպիսի պտույտ գործեցին նաև մյուս դռները և ամեն ինչ կամքատար գտած՝ տաքուր և դեպեցիկ:

— Մի վոքր հանգստանալու և միաժամանակ դիտելու համար խնդրեմ մանենք մեր այդին,—խոսեց Նաուսաչան:—Ընկեր Վահանյանը շատ էր ուզում մեր ջուղայում տեսնել միջուրինյան պտուղները:

— Հաճույքո՛վ, հաճույքո՛վ,—ձեռնափայտով դռի դուռը բացելով և Նաուսաչային ճանապարհ տալով պատասխանեց Կոմքատը,— հետաքրքիր է...Չէ՞ որ այն կարծիքը կար, թե ծովի մակերեսույթից այսքան բարձր ձեր ջուղայում պտղատու ծառեր չեն աճի:

— Միջուրինյան ագրոտեխնիկայի բոլոր բարձունքները հաղթահարում է,—ուրախ պատասխանեց Նաուսաչան և նրանք դարպասները կիսելով, մտան այդի:

Աչնան մի հրապուրիչ բուրմունք էր ղեռմ մարդ խնճորի այգում: Այդ բուրմունքով տարված՝ Կոմիտասն ու Նաուաչան նաեցին ճղակոտոր լինող խնճորենու տակ:

— Սրանք դեռ մի քանի տարի հետո լավ բերք կտան,—բացատրեց այդեպան կոլխոզնիկը ավելի նորատունկ ծառերը ցույց տալով,—տարեց կոլխոզնիկներն ասում են, թե մեր պապերն էլ այդպիսի բան չեն տեսել և միշտ, սերունդ-սերունդ իշխել է այն կարծիքը, թե մեր ղեռղում պտղատու ծառեր չեն աճի:

Այդու դռանը մոտեցավ Կոմիտասի ալտոմեքենան: Նաուաչան ցնցվեց նստած տեղը և ոտի կանգնելով դիմեց Կոմիտասին.

— Այդ ի՞նչ է, էլինի՞ մտաղիը եք քաղաք դնալու: Մինչև տուն էզնանք, մի բան չուտենք, ոչ ոք ձեզ այստեղից բաց չի թողնի,—վճռաբար ասաց Նաուաչան Կոմիտասի ճանապարհը կտրելով:

— Ջէ՛, Նաուաչա ջան,—մեղմ պատասխանեց Կոմիտասը,—մեկ ուրիշ անգամ: Այսօր բյուրյի նման ունենք, դնամ, որ հասնեմ... բացի այդ, պրոտեզը ցավացնում է ոտքս, պետք է հանգստանամ...

Նաուաչան խնամ տխրեց Կոմիտասի վերջին խոսքերից և այնս չկրկնեց տուն դնալու առաջարկը:

— Նամա՛կ, նամա՛կ,—վրդովմունքից ծրագրը վերցնելով ուրախ տուն մտավ Անանյի հարեվանուհին՝ Սաթոն,—մինչև մտքերիչ էիրդասնաս, չե՛մ տա...

— Ումնի՞ց է, Լևոնի՞ց է, ԹԵ՞,—կարոտից խորասեռ ցնցվելով հարցրեց Աննան և լռեցրեց մի կողմ գնելով, չտասեց դեպի հարևանուհին:

— Լևոնի՛ց, Լևոնի՛ց, նամա՛կ...

Զրնգում էր Սաթոյի ձայնը, որից հավաքվեցին հարևանուհիները:

— Չէ՛, չե՛մ տա, մինչև մաղարիչ չխոստանաս,—պնդում էր Սաթոն, ծրարը ղլխից վեր և պահելով:

— Խոստացի՛ր, Աննա քույրիկ:

— Դրան չե՞ս խմանում, Աննա ջան, ուսամ տակ մի բան դի՛ր, էլի...

Այս ու այն կողմից միջամտեցին հավաքվածները: Աննան ձեռքերը դնելի ծրարը պարզելով ասաց.

— Լավ, Սաթո ջան, թող Լևոնս բարով-խերով վերադառնա, նրա հարսանիքին կպարես իմ առած չորերով:

Սաթոն ուրախացած ծրարը հանձնեց Աննային և ավելացրեց. «Տե՛ս, խոսքիդ տերը կլինես, թե չէ՝ ինձ Սաթո կասեն, հա՛...»:

Աննան դողդոջ ձեռքերով բացեց ծրարը: Նամակի միջից դանդաղ դուրս եկավ վայր ընկած պատրված մի վոքրիկ թուղթ: Սաթոն աչքերը չռեց և սաստ իր սրտից մի բան պոկվեց ու օդում երերալով ընկավ: Մյուսներն էլ իրար երեսի նայեցին, և սիրտ մի ահավոր բաբախեց:

— Ախչի, Սաթո՛, ի՞նչ ես քարացել, մի ակնոցս բեր, չեմ կարողանում կարդալ առանց դրան,—ասաց Աննան և կռացավ, թուղթը վերցրեց: Բալասի աչքերը սևեռվեցին այդ թղթի վրա, իսկ Սաթոն սուս չվարած, բերեց Աննայի ակնոցը: Մինչ այդ Աննան խնամքով ծրարից հա-

նեց նաև նամակը, բացեց և կրծքին սեղմած ա-
ռաց։

— Լևոնս շատ ուշադիր է, նամակն անպակաս է անում,—և ակնոցը աչքերին դնելով շարունակեց,—զիտի է՛, որ ես շատ անհանգիստ բնավո...

Ու Աննայի լեզուն ասես կապվեց և նա մեռելի նման գեղնած ուշաթափ ընկավ։

— Մահվան թո՛ւղթ...

Սարսռացին բոլորը և գրկեցին Աննային։

Հարևան սենյակից չնչակոտուր ներս ընկավ Նաուսիա Միխայլովնան և ականջին չհավատալով իարդաց փոքրիկ թուղթը և սկսեցրմ բացատրել։

— Լևոն ջան, Լևոն ջան, мой дорогой сыночек...

Վահանյաններն ուրախ բակը մի անգամից սպավորվեց։ Հեղեղի նման թախիծ լցվեց մարդկանց սրտերը։ Մոայլ ու տխուր հայտնվեցին Մանթաշյանը, սպա Գարնիկինը, Կոմիտասը, Սեդան... Ինչպե՞ս մխիթարել Աննա մայրիկին, ինչպե՞ս բուժել այն վերքը, որ ստացավ նա։ Ածխի նման սեվացել էր Սոֆոն։ Նրան թվում էր, թե ինքն է մեղավորը... Ինչո՞ւ նա ասեց նամակը, ինչո՞ւ սկզբում ինքը չբացեց ծրարը, նրա սիրտը ճմլվում էր։ Եթե մյուսներր Լևոնի կորստյան համար էին ողբում, ինքը՝ երկուսի... Չէ՞ որ ոչ ոք չգիտե Աննայի ավազ. որդու մահվան թղթի մասին, որ երեք տարի չտրտնալ թաքցրել է նա բոլորից...

Կոմիտասը նամակը կարդալով՝ դրեց ծոցակրպակը և լուռ, անձայն արտասվում էր։

Լաու ու տխուր Աննային մոտեցավ Մանթաշյանը և ասաց։

— Մայրիկ, խոսքեր չեմ գտնում մխիթարելու... Մեր Լևոնի ծանր կորուստի հետ դժվար է

հաշտվել... — Այս ասելով, նա ծանր հառաչեց, լուռ ու նրա աչքի առաջ կանգնեց այն օրը, երբ Լեւոնն ու Լյուդմիլան հրաժեշտ տալու պահին սաստկին։

— Ընկեր Մանթաշյան, մեր այստեղից բացակայելը երևք չի ղժացրի, քանի որ դուք մնում եք։ Համաստացեք, որ դուք ռազմաճակատ եք ուղարկում կոմերիտականներին, որոնք բարձր կոչման լենինյան կոմերիտմիության անբասիր դրոշը։

— Շատ մի տանջվիր, Աննա,—ձեռքերը խաչելով ասաց Նատալիա Միխայլովնան,— ինչպես Լեոնի ու Լյուդմիլայի բանակ մեկնելու օրն ասացի, մեր բարեկամուհյունն անխախտ է։ Մեզ ոչ մի բան չի բաժանի։

Աննա մայրիկը, Նատալիա Միխայլովնան, նրանց հարևանները ու հարևանները սիրում էին Լեոնի կորուստը։ Վշտակիցներից չէր հեռանում նաև Սաթոն։

42.

Գյուղատնտեսական աշխատանքները կոլխոզում չեն դադարում կլոր տարին, բայց ձմռանը, այնուամենայնիվ, սպասո ձեռքերն ավելի շատ են։ Նատաշայի նախաձեռնությամբ կազմակերպվեցին սպրոտեխնիկական և գոտեխնիկական խմբակներ։ Առաջին խմբակը ղեկավարում էր կոլխոզի ղեկավար գյուղատնտես Մեժլումյանը, որ նոր էր գրաչրվել բանակից։ Նատաշան ինքն էլ կանոնավոր մասնակցում էր պարապմունքներին և առանձին չանասիրությամբ պարապում թեմաները։ Այս բանը ոգևորում էր ոչ միայն երիտասարդ գյուղատնտես Մեժլումյանին, որը սիրով էր աշխատում

Նատաշայի հետ, այլև խմբակի բոլոր անդամներին: Պարապմունքի հավաքվելիս էլ Նատաշան հարց ու փորձ էր անում բրիգադիրներին, թե դաշտավարական ո՛ր բրիգադայում ինչպե՛ս է դրծիքների վերանորոգման ընթացքը, ով ինչի պակաս է զգում:

— Ամենից առաջ մի այս խնձորն անուշ արա, հետո կասեմ,—ցորենի ամբարում պահած ճմեռվա խնձորը տալով՝ ասաց բրիգադիր Մացակը,—մի տե՛ս, փլավ է դարձել...

— Այդ ի՞նչ է որ, ահա այս խնձորը կեր,—մի-ջամտեց մյուսը՝ Նատաշային մեկնելով կես կիլոգրամի չափ սպիտակ խնձորը:—Թող ընկեր Մեժլումյանն ասի, թե՛ որն է լավ պահվել:

Նատաշան մեղմ ժպիտը դեմքին վերցնում էր խնձորները և «չնորհակալություն» ասելով դրանք կանոնավոր դարսում դրասեղանի վրա: Իլան Գաբրիելյանը, որ այդպիսի ժամանակ լսողի ու դիտողի դերում էր, երկար մորուքը դանդաղ շփելով ասաց. «Սարերի խոտն անպակաս է, եղջերուները իրար թավալգա են անում»:

— Բրիգադիր Մացակը խնձոր պահելու լավ մասնագետ է:

— Նա աշխատանքում էլ ոչ ոքի չի զիջում:

Մացակը նկատելիորեն ոգևորվելով այս խոսքերից՝ թաշկինակով մաքրեց արևավառ երեսը և գլխարկը վերցնելով ասաց.

— Բա հո ես անդլխացի կամ ամերիկացի չե՞մ, որ երկրորդ ճակատն այդքան ուշ բացեմ:

— Էլ մի ասի, Մացակ ջան,—պատասխանեց Նատաշան,—դրանց երկրորդ ճակատը դարձավ այն առածը, որ ճանճը պարծենում է, թե ինքն էլ է վարելատեղից դալիս...

— И мы пахали,—կրկնեց Մեժլումյանը և բոլոն աչխուժ ծլծաղեցին:

— է՛... ախպեր, ի՛նչ եք ասում: Բա դուք ուրիչ ի՞նչ եք սպասում իմպերիալիստներից:

— Դրա համար են ասել՝ չան հետ բարեկամացիր, վայրը ձեռիցդ մի դցիր:

Սրդեն ադրատեխնիկայի խմբակի բոլոր անդամները լրիվ հավաքվել էին և Մեժլումյանը դանդաղ ոտքի կանգնելով՝ դրասեղանի զանդի կոճակը սեղմեց՝ ազդարարելով պարապմունքն սկսելու մասին:

— Այսօր ընկերները ճիշտ գնահատական տվին երկրորդ ճակատին,—ասաց նա,—մեզ համար գաղտնիք չեն անգլիացիների ու ամերիկացիների դանդաղաշարժության պատճառները:

Մեժլումյանը կոկորդը մաքրելուց հետո ուզեց շարունակել, բայց այդ ժամանակ ներս մտան տաք մուշտակներ հագած երեք հոգի: Բոլորը ճանաչեցին երկուսին՝ Մանթաշյանին և Կոմիտասին, իսկ երրորդը՞...

— Ինդրեմ ծանոթացեք,—սկանչավոր մորթե գլխարկը հանելով խոսեց Մանթաշյանը,—Հայաստանի Կենտկոմի քարտուղարն է:

Հրույցը, որ փոխարինեց պարապմունքին, կարճ տևեց, բայց սրտառուչ էր: Հյուրերը ծանոթացան կոլխոզի գործերին, հարց ու փորձ արին գարնանացանի նախապատրաստության մասին: Կենտկոմի քարտուղարը գովեց Նատաշայի եռանդը, ոգևորեց նրան և նոր միայն Կոմիտասին հայտնեց, որ աուաջինը Նատաշան էր, որ ահազանգեց Ղարապյողյանի վնասարարությունների մասին, նա էր, որ իսկական կոմերիտականի զգոնությամբ պայքարեց կոլխոզը քայքայողների դեմ: Նա Մանթա-

չանել, Լևոնի և Լյուդմիլայի օգնությամբ կոխտոզը տուն հանեց:

Բայց այժմ պետք է ավելի ամրապնդել կոխտոզը, ավելի շատ կենսամիջոցներ ուղարկել տատմաճաճաման: Անհրաժեշտ է կոլխոզնիկներին պահել մոբիլիզացիոն վիճակում: Պատերազմը չարունակվում է, դեռ ծանր մարտեր են սպասվում:

43.

Լեռնային ճանապարհի աջակողմյան լերդին վրա, այնտեղ, ուր վարդամորեն ածում են նռըտառնիկ անուտի ծառերը, երեք քարտաշներ արևածագից մինչև մայրամուտ տաշում էին պրոնիսի քարերը, հղկում, պանդան ձևեր տալիս ու նախշում: Յուրաքանչյուր անցորդ կանգ էր առնում այստեղ, դիտում վարպետների քրտնաջան աշխատանքը, հարց ու փորձ անում և չարունակում ճամփան: Իր ամառանոցում դրիմի ամեն օր, նաև ժամին այստեղ էր գալիս նաև կոմերիտմիության շրջկոմի քարտուղար Կոմիտասը: Երբեմն նա մենակ էր գալիս, երբեմն Մանթաշյանի կամ Սեդայի, Գարեգինի հետ և երկար պննում քրերը, առուգում կատարվածը: Քաղաքում և շրջկոմ պյուղերում մարդիկ լավ գիտեին այդ ապրյուր-հուշարձանի մասին, որ կառուցվում էր այդտեղ, հուշակալեր քարտաշ վարպետների ձեռքով: Այդ պատճառով էլ, երբ հայտնեցին կառուցման ավարտման մասին, ամեն տեղից հավաքվեցին հազարավոր մարդիկ, հավաքվեցին ապրյուր-հուշարձանի բացմանը ներկա լինելու:

Բլրապյուղից եկան Նատաշան, Իլան Գալբելիչը, Մեժլումյանը և էլի մի քանի կոլխոզնիկներ: Կոլխոզի ավտոմեքենայով Ինձորաշատից եկան

դարձի գերեվարը Զարպարյանը, Սոնա մայրիկը, Վարդիթերը: Մի վոքր անց հավատալին նստած եվավ նաև կոլխոզի նախագահ Սրապը:

— Փոթորի՛կը...

— Ի՛նչ ձի է՛... Տեսեք նրա ոսկեցոլ բաշը...

— Աղասին պրանով եկավ կայարան:

Լավեցին այս ու այն կողմից: Իսկ Սրապը ձիուն կապեց մոտակա ծառերից մեկին և մոտեցավ հավաքվածներին: Եկավ նաև Մանթաշյանը, որը, ինչպես պատերազմի երկրորդ օրը երևակայելի կայարանում, քայլում էր դանդաղ, ու ոչ իսկ հոնքերի տակ մոայլվել էին նրա խուշտ աչքերը: Կողքից քայլում էր գինվորը, աչ ուսը ցնցելով: Գեսի մանթաշյանն էին ուղղված բոլորի հայացքները: Եվ նա մոռենալով պերյոշ-հուշարձանին, նա քաշեց նրա վրայի կարմիր կտորը: Այդ մինչև ցին պերյոշից հանց պռավալ չուրը: Մորդիկ հեռթով մոտեցան և բռնով չուր առան ու խմեցին:

— Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժ կմնա,— ասաց Մանթաշյանը,— խոնարհ պերյոշի չորից:

— Թող չէի պես երկար կյանք ունենան կենդանի մնացածները,— արցունքն աչքերին չուրը կամ անելով ասաց Սոնա մայրիկը:

Զեռնափայտի վրա հենվելով՝ պերյոշին մոտեցավ նաև Կոմխոսը: Նա կանդնեց պերյոշ-հուշարձանի աստիճանների վրա և ասաց.

— Պատերազմում իրենց անունները անթառամ փառքով պսակեցին մեր քաղաքի ու շրջանի կոմերիտականները... Սուրեն Ավետիսյանը, Գրիգոր Սարգսյանը...

Կոմխոսը մի վոքր կանգ առավ, նայեց չորս կողմը, ապա պրպանից հանելով մի նամակ՝ շարունակեց.

— Սերել ընկերներ, ես ստացել եմ ռազմաճակատից, հրամանատարներից մեկի նամակը Լեվոն Վահանյանի մասին: Նա պրոմ է:

«Վեցերորդ օրն էր, որ տեղեկություն չկար քաջ հետախույզ լեյտենանտ Լևոն Վահանյանի մասին: Բոլորը համոզված էին, որ նա զոհվել է համարձակ հետախուզական ուղղի դուրս եկած ժամանակ:

Ինչպես պատմեց հետագայում հետախույզներից մեկը, այդ օրը մի արտասովոր լռություն և հանգստություն էր տիրում ֆրիցների մոտ, գերեզմանային լռություն: Հետախույզները չորս կողմը զննելով անխոս առաջ էին շարժվում: Բայց այդպիսի խմբով թշնամու թիկունքում շատ վտանգավոր է: Հրամանատարը ձեռքով նշան արավ, որ երկուսն առաջ անցնեն: Մենք մնացինք, իսկ երկուսը գնացին առաջ: Մեկը փորձված հետախույզ լարինովն էր, մյուսը՝ Լևոնը: Նրանք սողալով մտան ձորակ և մեր աչքից անհետացան: Դեռ ձորակը չանցած՝ նրանց դեմ են դուրս գալիս չորս ֆրից: Հակառակի պես ֆրիցներն ուղղություն են վերցնում դեպի լարինովն ու վահանյանը, որոնց դիրքը թույլ չէր տալիս շարժվելու: Ուրեմն պետք է պատրաստ լինել մարտի: Նրանք մերկացնում են փոքրիկ դաշույնները: Հետախույզների համար ձեռնատու է կամ խուսափել մարտի բռնվելուց, կամ անձայն ոչնչացնել հակառակորդին: Անձայն... Եվ մի ակնթարթում լարինովն ու վահանյանը հարձակվում են ֆրիցների վրա: Դաշույնի հարվածով երկու ֆրիցներն ընկնում են ցած, իսկ երկուսը՝ ծղրտոցով գոտեմարտի են բռնվում: Լևոնը մի ակնթարթում ծնկի գալով, ֆրիցին գլխի վրայից նետում է առաջ և հարձակվում նրա վրա, իսկ լարինովը մնում է ֆրիցի ճանկերում: Լևոնը դաշույնը խրելով ֆրիցի կուրծքը, նետվում է ընկերոջն օգնելու: Այդ միջոցին մի խումբ գերմանական զինվորներ վազում են դեպի ձորակը:

Լարինովը մահացու վիրավորվում է և սողնող մոտենում վահանյանին։

— Կրակի՛ր, եղբա՛յր, կրակի՛ր, ոչնչացրո՛ւ իժերի՛ն... — ասում է Լարինովը և մխյանց եռևից ֆրիցների վրա է նետում նռնակները։

Ֆրիցներից մի քանիսն ընկնում են։ Այս ավելի է կատաղեցնում կենդանի մնացածներին և նրանք նորից ուժեղ կրակ են բաց անում։ Լարինովը փորձում է ոտքի կանգնել, դողում է և ընկնում գետին։

Երբ կրակոցները մեղմանում էին, լսվում էին գերմանացիների ձայները։

— Ռո՛ւս, հանձնվի՛ր...

Լևոնը նրանց պատասխանում է ավտոմատային կրակոցով, իսկ երբ փամփուշտները վերջանում են, վերցնում է արյունոտ դաշույնն ու դուրս.

— Ես կոմերիտական ե՛մ, ես գերի չե՛մ հանձնվի...

Ֆրիցներից երկուսը հարձակվում են Լևոնի վրա։

— Դե մեռի՛ր, սրիկա՛,—բացագանչում է Լևոնը դաշույնը խրելով առաջին ֆրիցի փորը և մենամարտի բռնվում երկրորդի հետ։ Կատաղած գերմանացիները կրակում են և՛ Լևոնի, և՛ ֆրիցի վրա։ Գոտեմարտի բռնված երկուսն էլ գլորվում են գետին։ Նույն պահին մեր մեքենայացված զորամասերը թշնամու կրակոցը ճեղքելով սլանում են առաջ։

Լսվեցին հաղթական «ուռաներ»։ Ֆաշիստները խուճապահար փախուստի դիմեցին։ Մոտեցավ մեր հետևակը։

Երբ մեր զինվորները մոտեցան Լևոնին, նա գլուխը բարձրացնելով շշնջաց. «Մերո՞նք են, Լարինո՛վ, մերո՞նք են»։ Իսկ Լարինովն արդեն անշնչացած ընկած էր։ Մարտիկները լուռ գլխարկները հանեցին։ Մեկը

Ա6ծոց գիբերեն—12

հեռվից վազում էր դեպի ձորակը։ Կանայի մի ձայն հարցնում էր.

— Ո՞ւր է վիրավոր հետախույզը...

Այդ Լյուդմիլան էր։ Բոլորը ճամփա տվին նրան, որը շնչակտուր վրա հասավ, ընկավ արնաշաղախ գետնին փռված Լևոնի վրա ու գրկեց նրա մարմինը։

— Լևո՜ն, Լևո՜ն, այս ի՞նչ վիճակում եմ քեզ տեսնում։

Ծանր վիրավոր Լևոնը հաղիվ կարողացավ աչքերը բաց անել և նորից փակեց։

— Կեցցե՛ս Լևոն, ա՛յ հերոս տղա...

— Ի՞նչ լավ է, որ մեզանք ժամանակին վրա են հասել...

— Լյուդմիլա՛ն, Լյուդմիլա՛ն... Ա՛յ քե ինչ-պես է պետք նրա սիրտը,—լսվում էր այս ու այն կողմից։

Մխիթարը վերջացել էր, բայց շտաբը դեռ հուզված և անշարժ կանգնել էին ազգյուր-հուշարձանի մոտ։ Այդ վեհ վայրկյանը դյուրել էր

նրանց: Հաբյուրաւոր չրթունքներ անսահման ա-
րտով չէնջուած էին.

— Լենի՛ն, Էյուդմիլա՛, Սուրե՛ն, Գրիգո՛ր, Վարի՛նով...

1945 թիվ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Գլխ. խմբագիր՝ Ֆ. ԹԱՓԱԼՃՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ԴԱՓԵՍՅԱՆ

Վ/Ց 02417. պատվեր № 85, տիրաժ 4000.
Տպագրական 12 մամուլ:
Հանձնված է արտադր. 24/II 1949 թ.:
Ստորագրված է տպագր. 21/V 1949 թ.:

Հայպոլիգրաֆկրատ. Վարչության
№ 3 տպարան, Ալավերդյան № 65,
Երևան, 1949 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220026770

A II 26770